Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Դեկտեմբեր

թիվ 12 (172)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-207-Ն ՀՀ օրենքը

21 «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-211-Ն ՀՀ օրենքը

21 «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-212-Ն ՀՀ օրենքը

22 «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-213-Ն ՀՀ օրենքը

27 «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-214-Ն ՀՀ օրենքը

27 «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-215-Ն ՀՀ օրենքը

28 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-216-Ն ՀՀ օրենքը

29 «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-251-Ն ՀՀ օրենքը

30 «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-259-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

32 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Արդշինինվեստբանկ» և «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ներին «Ավերս» և «Coinstar Money Transfer» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

32 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Լիա-Կ Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Ալեքսվորլդ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման, «Մետալ Լևո Գրուպ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

32 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ին՝ վարկի ապահովագրության դասով, «Ռեսո» ապահովագրական ՓԲԸ-ին ոչ կյանքի վերաապահովագրության դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի, «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ-ի, «Կոնվերս բանկի», «ՊրոԿրեդիտ բանկի», «Ինեկոբանկի» որոշ մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

32 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի «Մասիս» ներկայացուցչությունը գրանցումից հանելու և «Էջմիածին», «Մասիս» մասնաճյուղերը գրանցելու, «Ռեսո» ապահովագրական ՓԲԸ-ի և «Նոր Հորիզոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ի որոշ ներկայացուցչություններ գրանցելու վերաբերյալ

32 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 ՓԲԸ-ների, 4 ՍՊԸ-ների, 1 գրավատան և 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու և 4 արտարժույթի փոխանակման կետերի, 1 ՓԲԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

33 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 291-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 292-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 25-ի թիվ 73-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 293-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

40 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 294-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 295-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին»

48 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 296-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

53 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 297-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

64 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 298-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

68 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 299-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

77 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 300-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

78 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 301-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 197-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

79 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 325-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

92 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 326-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

97 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 327-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

104 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 328-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

125 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 329-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

129 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 330-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

138 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 331-Ն որոշումը ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 129-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջից բացառություններ սահմանելու մասին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 16-ի թիվ 125-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

139 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 332-Ն որոշումը «Ներդրումային ընկերություններին լրացուցիչ գործունեության տեսակներ թույլատրելու և դրանց իրականացման համար պահանջներ սահմանելու մասին»

140 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 10 պաշտոնական պարզաբանումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը» 4-րդ կետի մասին»

142 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 11 պաշտոնական պարզաբանումը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված և ֆինանսական համակարգում կնքվող երաշխավորության դրույթների մասին»

145 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետը «օրենքի» բառից հետո լրացնել «, բացառությամբ «Արտոնագրային վճարների մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ի և հավելված 2-ի ցանկերում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերի» բառերով.

2) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*5) բազային եկամուտ*՝ աշխատավարձ ու դրան հավասարեցված այլ վճարումներ, ձեռնարկատիրական և նոտարական գործունեությունից, այդ թվում՝ «Հաստատագրված վճարների մասին»[****] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված գործունեությունից ստացման ենթակա եկամուտ (աշխատավարձի ու դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը)».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետով.

«*5.1) պայմանագրային եկամուտ*՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն՝ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց գործատուից ստացված եկամուտ (բացառությամբ անհատ ձեռնարկատիրոջը և նոտարին վճարված եկամուտների)».

4) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*7) ինքնազբաղված անձ*՝ օրենքով չարգելված որևէ գործունեությունից եկամուտ ստացող՝ վարձու աշխատող, պայմանագրային եկամուտ ստացող, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից եկամուտ ստացող գյուղատնտեսական արտադրանք արտադրող, «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող արտոնագրային վճար վճարող, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա եկամուտ ստացող), ինչպես նաև «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ի և հավելված 2-ի ցանկերում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատեր».

5) 12-րդ կետի «ֆոնդի կառավարչին կամ պահառուին» բառերը փոխարինել «ֆոնդի կառավարչին, պահառուին, ինչպես նաև երաշխիքային ֆոնդը կառավարող անձին» բառերով, իսկ «ֆոնդի կառավարիչը կամ պահառուն» բառերը՝ «ֆոնդի կառավարիչը, պահառուն, ինչպես նաև երաշխիքային ֆոնդը կառավարող անձը» բառերով.

6) 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*31) հանրային ծառայության համարանիշ*՝ «Հանրային ծառայությունների համարանիշի մասին»[*****] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համարանիշ».

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 33-րդ, 34-րդ և 35-րդ կետերով.

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2012 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 61 (935), 19.12.12):

[***] *ՀՀՊՏ 2010 N 69 (803), 29.12.10:*

[****] *ՀՀՊՏ 1998 N 15 (48), 27.07.98:*

[*****] *ՀՀՊՏ 2011 N 71 (874), 28.12.11:*

«*33) հարկային գործակալ* ՝ ըստ «Հարկերի մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքի.

34) վարձու աշխատող ՝ գործատուի (այդ թվում՝ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի) հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձ (բացառությամբ զինվորական ծառայողների և նրանց հավասարեցված անձանց).

35) գործատու ՝ Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձ, օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկ, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն, անհատ ձեռնարկատեր, հիմնարկ, տեղական ինքնակառավարման մարմին, ինչպես նաև նոտար, որն աշխատանքային կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա կամ օրենքով սահմանված կարգով փաստացի օգտագործում է քաղաքացիների աշխատանքը (ծառայությունները)՝ նրանց վճարելով եկամուտներ:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «ա» կետից հանել «և հանրային ծառայության մեջ գտնվող անձինք, բացառությամբ զինվորական ծառայողների և նրանց հավասարեցված անձանց» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Ընդ որում, սույն մասում նշված անձինք պարտավոր են կուտակային վճարներ կատարել նաև պայմանագրային եկամուտներից՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափով:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետից հանել «և հանրային ծառայության մեջ գտնվող անձինք, բացառությամբ զինվորական ծառայողների և նրանց հավասարեցված անձանց» բառերը.

2) 3-րդ մասի՝

ա. «Կամավոր կերպով պարտադիր կուտակային բաղադրիչին միացած անձը վերը նշված հավաստումը պարտավոր է տրամադրել իր գործատուին (հարկային գործակալին), որը դրա հիման վրա կիրականացնի սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված գործողությունները:» բառերը փոխարինել «Մասնակիցների ռեեստրը վարողը սույն մասով սահմանված մասնակիցների մասին անմիջապես տեղեկացնում է հարկային մարմնին, իսկ հարկային մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղեկացնում է գործատուին:»,

բ. հանել երկրորդ պարբերությունը:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. Պարտադիր կուտակային վճարի դրույքաչափերը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված մասնակիցների համար կուտակային վճարները կատարվում են բազային եկամտի 10% դրույքաչափով հետևյալ կերպ.

1) մասնակից հանդիսացող վարձու աշխատողը, օտարերկրացին ու քաղաքացիություն չունեցող անձը, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է բազային եկամուտ, և որի բազային եկամուտն ամսական կտրվածքով չի գերազանցում 500000 դրամը, պարտավոր է կատարել ամսական կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից.

2) մասնակից հանդիսացող վարձու աշխատողի, օտարերկրացու ու քաղաքացիություն չունեցող անձի համար (օգտին) (որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է բազային եկամուտ, և որի բազային եկամուտն ամսական կտրվածքով գերազանցում է 500000 դրամը) պետական բյուջեից մասնակցի

* *ՀՀՊՏ 1997 N 11, 20.05.97:*

համար (օգտին) կատարվող ամսական վճարը կազմում է 25000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը ամսական վճարում է մասնակիցը.

3) անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը, որի բազային եկամուտը տարեկան կտրվածքով չի գերազանցում 6000000 դրամը, պարտավոր է տարեկան կատարել կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից.

4) անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակցի համար (օգտին) (որի բազային եկամուտը տարեկան կտրվածքով գերազանցում է 6000000 դրամը), պետական բյուջեից կատարվող տարեկան վճարը կազմում է 300000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը տարեկան վճարում է մասնակիցը:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված մասնակիցների պայմանագրային եկամուտներից, ինչպես նաև որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտներից վճարվող կուտակային վճարը կատարվում է 5% դրույքաչափով՝ առանց պետական բյուջեից հավելյալ վճար կատարելու: Ընդ որում, մասնակիցը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից կուտակային վճար կատարում է կամավորության սկզբունքով:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցը կուտակային վճարներ է կատարում բազային եկամտի և պայմանագրային եկամուտների, ինչպես նաև որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտների 5%-ի չափով: Նրա համար (օգտին) պետական բյուջեից հավելյալ վճար չի կատարվում: Ընդ որում, մասնակիցը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից կուտակային վճար կատարում է կամավորության սկզբունքով:

4. Եթե 1974 թվականից հետո ծնված և պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած պայմանագրային եկամուտ ստացողները և ինքնազբաղված անձինք դառնում են վարձու աշխատող, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, ապա նրանք կուտակային վճարը կատարում են սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով: Եթե պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից վարձու աշխատողը, նոտարը կամ անհատ ձեռնարկատերը դառնում են ինքնազբաղված անձ կամ պայմանագրային եկամուտ ստացող, ապա նրանք պայմանագրային եկամուտներից և, որպես ինքնազբաղված անձինք, ստացված եկամուտներից կուտակային վճարը կատարում են սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

5. Մասնակցի՝ սույն օրենքով սահմանված բազային եկամուտ մի քանի աղբյուրներից միաժամանակ ստանալու դեպքում կուտակային վճարները կատարելու պարտավորությունը և կուտակային վճարի դրույքաչափը կիրառվում են յուրաքանչյուր առանձին դեպքում՝ սույն օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված և մի քանի աղբյուրներից միաժամանակ բազային եկամուտ ստացող մասնակիցների համար (օգտին) պետության կողմից կատարվող ընդհանուր վճարները չեն կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին մասով պետության վճարների համար սահմանված չափերը: Մի քանի աղբյուրներից միաժամանակ բազային եկամուտ ստացող մասնակիցը պարտավոր է յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից հետո մինչև հաջորդ տարվա մայիսի 31-ը լրավճարել իր համար կուտակային վճար՝ իր տարեկան բազային եկամտի 10 տոկոսի և պետության կատարած համապատասխան վճարների տարբերության չափով:

6. Կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակիցը շարունակում է կատարել կուտակային վճարներ՝ մինչև սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դիմում ներկայացնելը:

7. Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցը դադարում է կուտակային վճար կատարելը, եթե՝

1) հարկային մարմին է ներկայացնում դիմում կուտակային վճար կատարելը դադարեցնելու վերաբերյալ, կամ

2) մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնում է դիմում կուտակային կենսաթոշակ ստանալու վերաբերյալ:

8. Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից կուտակային վճար կատարելը դադարեցնելու վերաբերյալ դիմումը հարկային մարմին ներկայացնելու կարգը, դիմումի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վարձու աշխատողը և պայմանագրային եկամուտ ստացող անձը դիմումը հարկային մարմին են ներկայացնում գործատուի միջոցով:

9. Մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցի կողմից կուտակային կենսաթոշակ ստանալու դիմում ներկայացնելու մասին տեղեկացնում է հարկային մարմնին, իսկ հարկային մարմինը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ գործատուին:

10. Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցը կուտակային վճար կատարելը դադարեցնում է՝

1) աշխատավարձից ու դրան հավասարեցված այլ վճարումներից և պայմանագրային եկամուտներից՝ դիմումը հարկային մարմին ներկայացնելու նպատակով գործատուին ներկայացնելու կամ մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) ձեռնարկատիրական և նոտարական գործունեությունից, ինչպես նաև որպես ինքնազբաղված՝ ստացված եկամուտներից՝ դիմումը հարկային մարմին ներկայացնելու նպատակով գործատուին ներկայացնելու կամ մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնելու տարվա հունվարի 1-ից:

11. Մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կուտակային վճարի դրույքաչափը սահմանվում է բազային եկամտի 5%-ի չափով, իսկ մասնակցի համար (օգտին) պետական բյուջեից կուտակային վճարումներ չեն կատարվում:»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 8. Պարտադիր կուտակային վճարներ կատարելը

1. Վարձու աշխատող և պայմանագրային եկամուտ ստացող մասնակիցների համար (անունից) կուտակային վճարները հաշվարկելու և փոխանցելու պարտականությունը կրում են գործատուները՝ որպես հարկային գործակալ:

2. Գործատուները օրենքով սահմանված ժամկետներում և կարգով էլեկտրոնային եղանակով հարկային մարմնում գրանցում են իրենց հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին և պայմանագրային եկամուտ ստացողներին, ինչպես նաև, որպես հարկային գործակալ, «Եկամտային հարկի մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկը հաշվարկելու և վճարելու համար սահմանված ժամկետներում, սույն օրենքով սահմանված դրույքաչափով հաշվարկում և փոխանցում են մասնակից հանդիսացող վարձու աշխատողների և պայմանագրային եկամուտ ստացողների կուտակային վճարները:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարկային գործակալ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհամարվող կազմակերպությունները գործատուի համար սույն կետով սահմանված ժամկետում սույն օրենքով սահմանված դրույքաչափով հաշվարկում և փոխանցում են մասնակից հանդիսացող վարձու աշխատողների և պայմանագրային եկամուտ ստացողների կուտակային վճարները: Այս դեպքում հարկային գործակալը «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում պարտադիր կուտակային վճարի տարեկան անձնավորված հաշվարկ:

3. Գործատուները «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում անձնավորված հաշվարկ:

4. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, ինչպես նաև պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողները և պայմանագրային եկամուտ ստացողները՝ որպես ինքնազբաղված անձինք ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում և փոխանցում են կուտակային վճարները տարեկան կտրվածքով՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

---

* *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

Եթե գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից, ապա պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողը և պայմանագրային եկամուտ ստացողը կուտակային վճարը հաշվարկում և փոխանցում են ինքնուրույն՝ գործատուի համար սահմանված ժամկետներում:

5. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղված անձինք «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում անձնավորված հաշվարկ:

Սույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված վարձու աշխատողները և պայմանագրային եկամուտ ստացողները յուրաքանչյուր ամսվա համար գործատուի համար սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում անձնավորված պարզեցված հաշվարկ:

6. Վարձու աշխատողների, պայմանագրային եկամուտ ստացողների գրանցման, անձնավորված հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքով:

7. Գործատուները և սույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված վարձու աշխատողները և պայմանագրային եկամուտ ստացողները նախորդ հաշվետու ժամանակահատվածների համար ներկայացված պարտադիր կուտակային վճարի հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել ճշտված հաշվարկներ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակահատվածների համար պարտադիր կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկ:

8. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղվածները հաշվետու ժամանակահատվածի համար տարեկան պարտադիր կուտակային վճարի մասին հաշվարկը ներկայացնելուց հետո իրավունք ունեն ճշգրտումներ մտցնելու դրանցում արտացոլված տվյալներում:

9. Հարկային մարմնի կողմից պարտադիր կուտակային վճար կատարողների (գործատուների) մոտ իրականացվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո հարկային մարմին ներկայացված ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակահատվածներին վերաբերող պարտադիր կուտակային վճարների հաշվարկների ճշտում չի իրականացվում:»:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «հաշվետվությունները» բառը փոխարինել «հաշվարկները» բառով, «10-օրյա ժամկետում» բառերը՝ «առավելագույնը 10-օրյա ժամկետում» բառերով, իսկ երկրորդ նախադասության «Այն անձանց համար, որոնց վերաբերյալ» բառերը փոխարինել «Եթե հարկային գործակալների, ինքնազբաղված անձանց, հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի մոտ աշխատող՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողների կամ այդ գործատուից պայմանագրային եկամուտ ստացողների կողմից ներկայացված» բառերով.

2) 3-րդ մասի «բ» կետի «սոցիալական քարտի համարը կամ սոցիալական քարտ» բառերը փոխարինել «հանրային ծառայության համարանիշի կամ հանրային ծառայության համարանիշ» բառերով.

3) 4-րդ մասից հանել «բացառությամբ հարցն ըստ էության լուծող դատական ակտի և ստուգման ակտի արդյունքում կատարված ճշտումների հիման վրա» բառերը:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «ժառանգման ժամկետի ավարտը» բառերը փոխարինել «դատական կարգով անժառանգ ճանաչված փայերի մարումը» բառերով:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը «գումարը ստանալուց» բառերից հետո լրացնել «, իսկ գումարն ստանալու դրությամբ կենսաթոշակային ֆոնդի ընտրու-

---

* *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

թյուն կատարված չլինելու դեպքում՝ համապատասխան ընտրությունը կատարվելուց» բառերով:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում «հաշվետվությունները» բառը փոխարինել «հաշվարկները» բառով, իսկ 7-րդ կետի «հաշվետվություն» բառը՝ «հաշվարկ» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով.

«8.1) գործատուներից, նոտարներից, անհատ ձեռնարկատերերից ստացված հաշվարկների հիման վրա հաշվարկում է մասնակիցների օգտին փոխանցվող՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական մասնակցության չափը.».

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը «տրամադրման» բառից հետո լրացնել «ձևը և» բառերով:

Հոդված 11. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ կետի «ակտիվի» բառը փոխարինել «կենսաթոշակային ֆոնդի» բառերով.

2) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) ժառանգների կամահայտության հիման վրա փոխանցում է մահացած մասնակցի կենսաթոշակային հաշվին պահվող փայերը, իսկ փայերն անժառանգ ճանաչվելու դեպքում մարում է կենսաթոշակային փայերը և ձևավորված դրամական միջոցները փոխանցում պետական բյուջե.»:

Հոդված 12. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «պահառուն» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Երաշխիքային ֆոնդը կառավարող անձը» բառերով.

2) 4-րդ մասը «հարկային մարմինը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Երաշխիքային ֆոնդը կառավարող անձը», իսկ «գործատուի» բառից հետո՝ «կամ Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Կենտրոնական բանկը և Երաշխիքային ֆոնդը կառավարող անձը Երաշխիքային ֆոնդի գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ տեղեկություններ են փոխանակում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված ձևով և կարգով:».

4) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Մասնակիցների ռեեստր վարողը կամ հարկային մարմինը մասնակիցների վերաբերյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կարող է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1) տվյալ կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների թիվը.

2) տվյալ կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդին կուտակային վճար կատարող մասնակիցների թիվը.

3) տվյալ կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդին միացած (սույն օրենքի 38-րդ կամ 39-րդ հոդվածի կամ 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տվյալ կենսաթոշակային ֆոնդն ընտրած) մասնակիցների թիվը.

4) այլ ֆոնդերի փայերի փոխանակման արդյունքում տվյալ կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերած մասնակիցների թիվը.

5) այլ կենսաթոշակային ֆոնդի ընտրության հիմքով տվյալ կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդին կուտակային վճարների կատարումը դադարեցրած մասնակիցների թիվը.

6) փայերի փոխանակման հիմքով տվյալ կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդից դուրս եկած մասնակիցների թիվը.

7) տարվա ընթացքում տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի՝ կենսաթոշակային տարիքը լրացող մասնակիցների թիվը և նրանց պատկանող փայերի քանակը.

8) տարվա ընթացքում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդից ծրագրային վճար ստացող մասնակիցների թիվը, նրանց պատկանող փայերի ընդհանուր քանակը և ընդհանուր հաշվարկային արժեքը.

9) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությունը:».

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով.

«7. Սույն հոդվածի 6-րդ մասի 1 - 6-րդ կետերում նշված տեղեկատվությունը կարող է ներկայացվել ըստ մասնակիցների տարիքային կազմի (նվազագույնը 5 տարվա բաշխվածությամբ), սեռի, մասնակիցներին պատկանող փայերի ընդհանուր քանակի և ընդհանուր հաշվարկային արժեքի, կատարված կուտակային վճարների չափի (նվազագույնը տասը հազար դրամի բաշխվածությամբ), ինչպես նաև ըստ մարզերի (Երևան քաղաքի):

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված տեղեկատվությունը չի կարող ներկայացվել ավելի հաճախ, քան ամսական պարբերականությամբ:

9. Մասնակիցների ռեեստր վարողը և հարկային մարմինը պարտավոր են ապահովել իրենց մոտ առկա կամ հաշվարկման համար հիմք հանդիսացող այլ տեղեկատվության հասանելիության բացառումը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների համար, որը կարող է օժանդակել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ի հայտ բերելու կոնկրետ մասնակցին կամ կոնկրետ գործատուին, որտեղ աշխատում է մասնակիցը:»:

Հոդված 13. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը երաշխիքային ֆոնդը կառավարող անձին

1. Բացի սույն օրենքի 18-րդ հոդվածի 5.1-ին մասով սահմանված տեղեկություններից, երաշխիքային ֆոնդը կառավարող անձը Կենտրոնական բանկից կամ կենսաթոշակային գաղտնիքին տիրապետող այլ անձանցից կենսաթոշակային գաղտնիք կազմող (պարունակող) այլ տեղեկատվություն կարող է ստանալ միայն մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպք առաջանալու դեպքում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով:»:

Հոդված 14. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) վերնագրի «կապիտալը և դրան» բառերը փոխարինել «կապիտալին և իրենց կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդում մասնակցությանը» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով.

«2. Բացի սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնադրական կապիտալից, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են իրենց կողմից կառավարվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդում ունենալ առնվազն մեկ տոկոս մասնակցություն՝ իր միջոցներից: Սույն մասով նախատեսված մասնակցության չափի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

3. Սույն հոդվածով նախատեսված տնտեսական նորմատիվները խախտվելու դեպքում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Կենտրոնական բանկին և միջոցներ ձեռնարկել խախտումը վերացնելու ուղղությամբ Կենտրոնական բանկի սահմանած ժամկետում, սակայն ոչ ավելի, քան չորս ամսվա ընթացքում:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռքբերման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջը չի տարածվում այն կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների վրա, որոնց մասնակցությունն իրենց կողմից կառավարվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդում գերազանցում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված չափը: Ընդ որում, սույն մասով նախատեսված պարտադիր մասնակցության չափը չի կարող պակաս լինել 1 մլրդ Հայաստանի Հանրապետության դրամից:»:

Հոդված 14.1. Օրենքի 31-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 15. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի «կառավարչի ինքնալուծարման» բառերը փոխարինել «կառավարչին լուծարման նախնական համաձայնություն տալու կամ նրա լիցենզիան» բառերով.

2) 6-րդ մասի «կառավարչի գործունեության դադարման» բառերը փոխարինել «կառավարումն այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի փոխանցվելու» բառերով.

3) 7-րդ մասի «Սույն հոդվածով սահմանված կարգով» բառերը փոխարինել «Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լիցենզիան կամ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ինքնալուծարման կամ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ստանալու հիմքով» բառերով:

Հոդված 16. Օրենքի 38-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետի «սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ» բառերը փոխարինել «հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ» բառերով.

2) 3-րդ մասը «պարտավոր են» բառերից հետո լրացնել «մասնակիցների ռեեստրը վարողի սահմանած կարգով» բառերով:

Հոդված 17. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը «ծրագրային մոդուլի միջոցով» բառերից հետո լրացնել «՝ սահմանված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը» բառերով:

Հոդված 18. Օրենքի 40-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը «դիմումը» բառից հետո լրացնել «սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև» բառերով.

2) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակումը իրականացվում է փոխանակման պահանջը ներկայացվելու օրվա (ժամի) համար որոշվող հետգնման (մարման) և նոր փայեր տեղաբաշխելու օրվա (ժամի) համար որոշվող տեղաբաշխման գներով:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը հետ են գնվում (մարվում են) դրանց հետգնման (մարման) պահանջ ներկայացվելու պահի դրությամբ «Ներդրումային ֆոնդերի մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի հետգնման գնով:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը տեղաբաշխվում են դրանց ձեռքբերման պահանջ ներկայացվելու պահի դրությամբ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի տեղաբաշխման գնով:»:

Հոդված 19. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 20. Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) մասնակցի կողմից տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում առաջին անգամ այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում, բացառությամբ այն ֆոնդի փայերի փոխանակման դեպքերի, որի փայերը (դրանց մի մասը) ձեռք են բերվել վերջին 12 ամիսների ընթացքում տեղի ունեցած փայերի փոխանակման արդյունքում: Ընդ որում, սույն կետի իմաստով՝

ա. առաջին անգամ փոխանակում է համարվում նաև տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում մեկից ավելի կենսաթոշակային ֆոնդերի փայերով փոխանակումը, եթե այդ փոխանակման գործարքների համար սույն օրենքով նախատեսված փոխանակման դիմումը (դիմումները) մասնակիցների ռեեստրը վարողին են ներկայացվել նույն օրվա ընթացքում,

---

* *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

բ. կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման հաշվարկում չեն ներառվում միևնույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակման գործարքները.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) կենսաթոշակային ֆոնդի դադարեցման դեպքում մասնակցի ակտիվների հաշվին այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելիս:»:

Հոդված 21. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում «ակտիվների շուկայական» բառերը փոխարինել «զուտ ակտիվների» բառերով:

Հոդված 22. Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում «Մասնակիցների» բառը փոխարինել «Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված մասնակիցների» բառերով, և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Սույն մասով նախատեսված կուտակային վճարների գումարի՝ տարեկան գնաճով ճշգրտման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 23. Օրենքի 52-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Երաշխիքային ֆոնդը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, հատուցման դեպքի առկայության փաստը հաստատված համարելու դեպքում հայտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմին նրա մասնաբաժինը ստանալու նպատակով և այն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սույն օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված տարբերության գումարը փոխանցում է մասնակիցների ռեեստրը վարողին:».

2) 7-րդ մասը «լիազորված մարմնի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև մասնակիցների ռեեստրը վարողի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի» բառերով.

3) 8-րդ մասի «Երաշխիքային ֆոնդի» բառերը փոխարինել «Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի» բառերով:

Հոդված 24. Օրենքի 54-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի» բառերը.

2) 2-րդ մասի առաջին նախադասությունը «հավասարաչափ» բառից առաջ լրացնել «սույն օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված աղյուսակների հիման վրա հաշվարկած» բառերով, իսկ «վերածելու դեպքում ամսական գումարի» բառերը հանել.

3) 3-րդ մասի՝

ա. «ա» և «գ» ենթակետերը «ծրագրային վճարների» բառերից առաջ լրացնել «անուիտետի կամ» բառերով, իսկ նույն ենթակետերից «(բացառությամբ սույն օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի)» բառերը հանել,

բ. «բ» ենթակետը «փոքր» բառից հետո լրացնել «կամ հավասար» բառերով:

Հոդված 25. Օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված այլ պայմաններ:»:

Հոդված 26. Օրենքի 58-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «օրենքով սահմանված կարգով վճարելու դեպքում» բառերը փոխարինել «վճարելու, իսկ դատական կարգով անուիտետի մնացորդային գումարն անժառանգ ճանաչվելու պարագայում՝ պետական բյուջե փոխանցելու դեպքում».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ապահովագրական ընկերության կողմից տասներկուամսյա ժամանակահատվածում երկու և ավելի անգամ անուիտետ չվճարելու, ինչպես նաև երկու և ավելի անգամ անուիտետի պայմանագրի որևէ այլ խախտում թույլ տալու դեպքում անուիտետ ստացող անձը կամ նրա ամուսինը կամ նրանց լիազորված անձը իրավունք ունի իր նախա-

ձեռնությամբ միակողմանի լուծելու անուիտետի պայմանագիրը՝ ապահովագրական ընկերությունից պահանջելով վճարելու մնացորդային գումարը և պատճառած վնասները:»:

Հոդված 27. Օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասը «մեթոդաբանությունը» բառից հետո լրացնել «և վճարման կարգը» բառերով:

Հոդված 28. Օրենքի 60-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 60. Միանվագ վճարը

1. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կամ «գ» կետերով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից միանվագ վճարի տեսքով կենսաթոշակի ստացման դիմում ներկայացվելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը տասն աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարման հաշվին կատարում է միանվագ վճար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի կողմից համատեղ սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում միանվագ վճարը չկատարելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը յուրաքանչյուր կետանցված օրվա համար մասնակցին վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.01 տոկոսի չափով: Սույն մասով նախատեսված տույժ վճարելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողն իրավունք ունի հետադարձ պահանջ ներկայացնելու տվյալ կենսաթոշակային ֆոնդի պահառուին, եթե կետանցը տեղի է ունեցել պահառուի մեղքով:»:

Հոդված 29. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 60.1-ին հոդվածով.

«Հոդված 60. 1. Մասնակցի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջությամբ ստանալու պահանջը

1. Մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ, ներառյալ՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը, ներկայացնելու իր պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշվում առկա (այդ թվում՝ մասնակցի կողմից նախկինում ներկայացված դիմումի հիման վրա ծրագրային վճարի տեսքով վճարվող կենսաթոշակը) միջոցները (անկախ դրանց չափից) ամբողջությամբ ստանալու պահանջ, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

1) մասնակիցն օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ.

2) մասնակիցն առողջական ծայրահեղ ծանր վիճակում է և հիվանդ է կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով, որը հավաստվում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տված եզրակացությամբ.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացի մասնակիցը մշտական բնակության նպատակով մեկնել է օտարերկրյա պետություն, և դադարեցվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

4) Հայաստանի Հանրապետությունում աշխատող օտարերկրացի մասնակիցը վերադառնում է իր մշտական բնակության երկիր:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում մասնակիցը դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին՝ կցելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

3. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերը մարվում են, և համապատասխան միջոցները վճարվում են նրան սույն օրենքի 60-րդ հոդվածով սահմանված կարգով՝ մասնակցի դիմումը և հավաստող փաստաթղթերն ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետով նախատեսված հիմքով մասնակցի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը նախքան նրա կենսաթոշակային տարիքը մարվելու դեպքում առաջացած միջոցները հօգուտ մասնակցի փոխանցվում են համապատասխան օտարերկրյա պետությունում նրա անդամակցած կուտակային կեն-

սաթոշակային համակարգին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: Եթե համապատասխան օտարերկրյա պետությունում անձը չի մասնակցում կուտակային կենսաթոշակային համակարգի, կամ միջոցների փոխանցումն անհնար է որևէ այլ օբյեկտիվ պատճառով, ապա նա իր միջոցները կարող է ստանալ բացառապես սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 30. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կենսաթոշակային ֆոնդերի փայերը և անուիտետի մնացորդային գումարը կարող են ժառանգության կարգով փոխանցվել միայն ֆիզիկական անձանց, իսկ դատական կարգով անժառանգ ճանաչվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:».

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Մասնակցի մահվան դեպքում նրա կենսաթոշակային հաշվում առկա ընդհանուր հաշվարկային արժեքով հիմնական կենսաթոշակի քսանհինգապատիկի չափով (կամ դրանից պակաս) կենսաթոշակային ֆոնդերի փայերը ժառանգի ընտրությամբ փոխանցվում են վերջինիս կենսաթոշակային հաշվին կամ սույն օրենքի 60-րդ հոդվածով սահմանված կարգով մարվում են, և մարման արդյունքում ստացված միջոցները վճարվում են ժառանգին միանվագ վճարի տեսքով: Հիմնական կենսաթոշակի քսանհինգապատիկի չափը գերազանցող փայերը ենթակա են պարտադիր փոխանցման ժառանգի պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշվին, բացառությամբ, եթե ժառանգը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի և չունի մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացված կենսաթոշակային հաշիվ:».

3) 5-րդ մասը «ֆոնդի փայերը» բառերից հետո լրացնել «համապատասխան չափով» բառերով, իսկ վերջին նախադասությունը հանել.

4) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Եթե մահացած մասնակիցը չունի ժառանգ, կամ եթե մասնակցի մահվան օրվանից 3 տարվա ընթացքում ժառանգներից ոչ մեկը դիմում չի ներկայացրել մասնակիցների ռեեստրը վարողին մահացածի փայերը որպես օրինական ժառանգի սեփականություն ընդունելու մասին, ապա մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնին:

Մահացած մասնակցին պատկանող փայերը մասնակցի մահվանից 3 տարի հետո Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի դիմումի հիման վրա դատական կարգով կարող են ճանաչվել անժառանգ: Անժառանգ ճանաչված փայերը մարվում են մասնակիցների ռեեստրը վարողի կողմից, և ձևավորված դրամական միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:».

5) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Սույն հոդվածի 7-րդ մասի կանոնները կիրառվում են նաև այն դեպքերում, երբ մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ 10 տարվա ընթացքում, մասնակցի կուտակային կենսաթոշակային հաշվին չի մուտքագրվել որևէ գումար, կամ չի տրվել ծախս կատարելու որևէ հանձնարարական:»:

Հոդված 31. Օրենքի 62-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում՝

ա. 2-րդ և 6-րդ կետերի «սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ» բառերը փոխարինել «հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին կետով.

«6.1) կենսաթոշակային ֆոնդի ժառանգված փայերի ժառանգման ձևի (փոխանցում ժառանգի կենսաթոշակային հաշվին կամ մարում) և չափի (յուրաքանչյուր ձևի գծով) վերաբերյալ ժառանգի ընտրությունը.»,

գ. 7-րդ և 8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

դ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) իր անհատական բանկային հաշվի վավերապայմանները.»,

ե. վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 5-րդ մասի առաջին նախադասության «3» թիվը փոխարինել «10» թվով, իսկ երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը հետ են գնվում (մարվում են) դրանց հետգնման (մարման) պահանջ ներկայացվելու պահի դրությամբ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի հետգնման գնով:».

4) 6-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Երեք տարվա ընթացքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումը չներկայացնելու դեպքում ֆինանսական ոլորտի կառավարման մարմնի դիմումի հիման վրա կենսաթոշակային ֆոնդի փայերը դատական կարգով կարող են ճանաչվել անժառանգ: Դատական կարգով անժառանգ ճանաչվելու դեպքում փայերը մարվում են, և մարման արդյունքում առաջացած միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:»:

Հոդված 32. Օրենքի 63-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «համապատասխանում 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին» բառերը փոխարինել «ներկայացվել սահմանված ժամկետում կամ չի համապատասխանում սույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված ձևին» բառերով.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից սույն օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված դիմումը սահմանված պահանջները չբավարարելու հիմքով մերժվելու դեպքում ժառանգը պետք է ներկայացնի սահմանված պահանջները բավարարող դիմում:»:

Հոդված 33. Օրենքի 65-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասից հանել «, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը.

2) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ ներկայացնելու իր կուտակած միջոցները (իրեն պատկանող կենսաթոշակային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեք, ավանդի գումար, ներառյալ՝ հաշվեգրված տոկոսները, վճարված ապահովագրավճարներ, այլ հատուցումներ՝ նվազեցված ապահովագրության պայմանագրի կնքման և կատարման ծախսերը) միանվագ վճարելու պահանջ, եթե տվյալ մասնակցի կողմից համապատասխան կենսաթոշակային ֆոնդին, բանկին կամ ապահովագրական ընկերությանն առաջին կուտակային վճարի կատարման, ավանդի ներդրման կամ ապահովագրավճարի վճարման օրվանից անցել է առնվազն երկու տարի, բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ և 9-րդ մասերով.

«8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված միանվագ վճար կատարելու համար պայմանագրով կարող են նախատեսվել առավել մեծ մարման վճար, տուգանք և (կամ) ավելի ցածր տոկոսներ, բացառությամբ, եթե նման պահանջը ներկայացվել է հետևյալ դեպքերում.

1) մասնակիցը օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ.

2) մասնակիցն առողջական ծայրահեղ ծանր վիճակում է և հիվանդ է կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով, որ հավաստվում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի եզրակացությամբ.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացին մշտական բնակության նպատակով մեկնել է օտարերկրյա պետություն, և դադարեցվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

4) Հայաստանի Հանրապետությունում աշխատող օտարերկրյա քաղաքացին վերադառնում է իր մշտական բնակության երկիր.

5) կամավոր կենսաթոշակային ֆոնդը դադարեցվել (լուծարվել) է, և մասնակիցը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի ներկայացրել բաշխման ենթակա ակտիվների հաշվին այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայեր (բաժնետոմսեր) ձեռք բերելու պահանջ.

6) բանկը կամ ապահովագրական ընկերությունը լուծարման գործընթացում է, կամ ապահովագրական ընկերությունը համապատասխան ապահովագրական պորտֆելը փոխանցել է այլ ապահովագրական ընկերության.

7) տվյալ մասնակցի կողմից համապատասխան կենսաթոշակային ֆոնդին, բանկին կամ ապահովագրական ընկերությանը առաջին կուտակային վճարի կատարման, ավանդի ներդրման կամ ապահովագրավճարի վճարման օրվանից անցել է ավելի քան տասը տարի:

9. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող է սահմանվել սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված մարման վճարի, տուգանքի և (կամ) տոկոսների առավելագույն չափ:»:

Հոդված 34. Օրենքի 66-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմանագրով ապահովադիր հանդիսացող անձն իրավունք ունի ապահովագրական ընկերությունից ցանկացած ժամանակ պահանջելու տվյալ պայմանագրով ապահովագրողի պարտավորությունները փոխանցել իր ընտրած ապահովագրական ընկերությանը՝ վերջինիս փոխանցելով վճարված ապահովագրավճարները՝ նվազեցրած ապահովագրության պայմանագրի կնքման, կատարման և փոխանցման ծախսերը: Սույն մասով նախատեսված ապահովագրավճարների փոխանցումը չի համարվում մասնակցի կողմից դրանց միանվագ ստացում:»:

Հոդված 35. Օրենքի 67-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ մասերով.

«1.1. Մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ բանկից պահանջելու իր կուտակային կենսաթոշակային ավանդի գումարը կամ դրա մի մասը փոխանցել իր՝ այլ բանկում բացված կուտակային կենսաթոշակային ավանդային հաշվին: Սույն մասով նախատեսված փոխանցման համար բանկի կողմից գանձվող վճարի առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը, և այն կախված է փոխանցող բանկի կողմից մատուցվող կենսաթոշակային սխեմային մասնակցի մասնակցության ժամկետից:

1.2. Բանկի լուծարման գործընթացում նախքան մասնակցի կուտակային կենսաթոշակային ավանդի գումարը մասնակցին միանվագ վճարելը բանկը պարտավոր է գրավոր և պատշաճ ձևով առաջարկել նրան այդ գումարն առանց որևէ վճարի փոխանցել նրա՝ այլ բանկում բացված կուտակային կենսաթոշակային ավանդային հաշվին: Սույն մասով սահմանված առաջարկն ստանալու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի կողմից համապատասխան պահանջ չներկայացվելու դեպքում համապատասխան միջոցները միանվագ վճարվում են մասնակցին:

1.3. Սույն հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված կենսաթոշակային ավանդի գումարի փոխանցումը չի համարվում մասնակցի կողմից դրանց միանվագ ստացում:»:

Հոդված 36. Օրենքի 68-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Տարբեր կառավարիչների կողմից կառավարվող կամավոր կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակումն իրականացվում է փոխանակման պահանջը ներկայացվելու օրվա (ժամի) համար որոշվող հետգնման (մարման) և նոր փայեր տեղաբաշխելու օրվա (ժամի) համար որոշվող տեղաբաշխման գներով:

Կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայը հետ է գնվում (մարվում է) ֆոնդի մասնակցի կողմից համապատասխան պահանջ ներկայացվելու պահից հետո «Ներդրումային

ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով առաջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) հետգնման գնով:

Կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայը տեղաբաշխվում է դրա ձեռքբերման (բաժանորդագրման) պահանջ ներկայացվելու, իսկ փայի դիմաց վճարումն ավելի ուշ կատարվելու դեպքում՝ համապատասխան վճարումը կատարելու պահից հետո «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով առաջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման գնով, եթե կամավոր կենսաթոշակային ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) նախատեսված չէ, որ փայը տեղաբաշխվում է դրա ձեռքբերման (բաժանորդագրման) պահանջ ներկայացվելու, իսկ փայի դիմաց վճարումն ավելի ուշ կատարվելու դեպքում՝ համապատասխան վճարումը կատարելու պահի դրությամբ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման գնով:».

2) 8-րդ մասը «կարգով» բառից հետո լրացնել «և պայմաններով» բառերով.

3) 9-րդ մասի 2-րդ կետի «ծրագրային վճարի տեսքով» բառերը փոխարինել «ժամկետային պարբերական վճարների տեսքով, ընդ որում, պարբերական վճարների տեսքով կենսաթոշակի վճարման համար մարվող կենսաթոշակային ֆոնդի փայերը (բաժնետոմսերը) եռամսյակային կտրվածքով չեն կարող գերազանցել առաջին պարբերական վճարը կատարելու պահին անձին պատկանող տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) 10 տոկոսը, իսկ տվյալ կամավոր կենսաթոշակային ֆոնդի գծով պարբերական վճարների կատարման ժամկետը չի կարող պակաս լինել 3 տարուց» բառերով.

4) 15-րդ մասի «մարելու դեպքի» բառերը փոխարինել «մարելու, կենսաթոշակային ֆոնդի դադարեցման (լուծարման) և կենսաթոշակային ֆոնդի կառավարումն առանց իր համաձայնության այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի փոխանցելու դեպքերի» բառերով:

Հոդված 37. Օրենքի 74-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «աշխատակիցներին» բառը փոխարինել «վարձու աշխատողներին» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ մասերով.

«7. Գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմայի մասնակիցը, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը, իրավունք ունի ներկայացնելու իր կուտակած միջոցները (իրեն պատկանող կենսաթոշակային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեք, վճարված ապահովագրավճարներ, այլ հատուցումներ՝ նվազեցված ապահովագրության պայմանագրի կնքման և կատարման ծախսերը) միանվագ վճարելու պահանջ միայն սույն օրենքի 65-րդ հոդվածի 8-րդ մասի 1-6-րդ կետերով, ինչպես նաև սույն հոդվածի 8-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում, եթե առաջին կուտակային վճարի կատարման կամ ապահովագրավճարի վճարման օրվանից անցել է առնվազն երկու տարի:

8. Գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմայի մասնակիցը սույն օրենքի 66-րդ հոդվածի 1.1-ին մասով կամ 68-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքը ձեռք է բերում՝

1) գործատուի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո.

2) գործատուի և տվյալ կենսաթոշակային ֆոնդի (նրա կառավարչի) կամ ապահովագրական ընկերության միջև կնքված համապատասխան պայմանագիրը լուծվելուց հետո.

3) գործատուի լուծարվելուց հետո:»:

Հոդված 38. Օրենքի 75-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 39. Օրենքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կուտակային վճարների վճարումն ուշացնելու դեպքում հարկային մարմինը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի, կուտակային վճարի վճարման համար սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործատուին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան: Ընդ որում, այդ հայցից հարկային մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ չկատարված կուտակային վճարներն ամբողջությամբ մարված չեն:

Հարկային մարմնի կողմից պարտադիր կուտակային վճարի գծով չկատարված պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում հարկային մարմնի ղեկավարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի սույն օրենքով պարտադիր կուտակային վճար կատարելու պարտավորություն ունեցող անձի (այսուհետ՝ պարտադիր կուտակային վճար կատարող) գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակելու:

Գույքի արգելանքը հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտադիր կուտակային վճարների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով պարտադիր կուտակային վճար կատարողի գույքային իրավունքների սահմանափակման միջոցով հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Արգելադրումն իրականացվում է բանկային հաշիվների արգելադրման, ինչպես նաև գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի սահմանափակման միջոցով՝ պարտադիր կուտակային վճարի պարտավորությունների չափով:

Գույքի արգելանքը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտադիր կուտակային վճարի գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Արգելադրման ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտադիր կուտակային վճարի գծով պարտավորության կատարումն ապահովելու համար՝ պարտադիր կուտակային վճարի պարտավորությունների չափով: Գույքի արգելանքը դրվում է պարտադիր կուտակային վճար կատարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Արգելանքը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետն արգելադրման պահին պակաս է մեկ տարուց: Արգելանք չի կարող դրվել բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, այդ թվում՝ կենսաթոշակային հիմնադրամների և ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունների բանկային, դեպո կամ կենսաթոշակային հաշիվների և դրամական միջոցների վրա:

Գույքի վրա արգելանք դնելու մասին հարկային մարմնի ղեկավարը հանձնարարագիր է հրապարակում: Արգելանք դնելու մասին հանձնարարագրում նշվում են հանձնարարագիր հրապարակող պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, հանձնարարագրի տրման տարին, ամիսը, ամսաթիվը, արգելանք դնող մարմնի անվանումը, գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, պարտադիր կուտակային վճար կատարողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ֆիզիկական անձի դեպքում նաև հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական ապահովության քարտի) համարը), չկատարված պարտավորության չափը և արգելանք դնելու իրավական հիմքերը: Արգելանք դնելիս հանձնարարագրի պատճենը ներկայացվում է պարտադիր կուտակային վճար կատարողին:

Պարտադիր կուտակային վճար կատարողի գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագրի հիման վրա դրա հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պարտադիր կուտակային վճար կատարողի գույքի վրա արգելանք դնելու մասին ընդունում է որոշում, որտեղ նշվում են որոշումն ընդունելու ամիսը, ամսաթիվը, վայրը, որոշումն ընդունած անձի պաշտոնը, անունը, ազգանունը, քննվող հարցը, ընդունված որոշման հիմքերը՝ այն օրենքների կամ այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, որոնցով որոշում ընդունող անձը ղեկավարվել է այն ընդունելիս, քննվող հարցի վերաբերյալ եզրահանգումը:

Գույքի բացակայության, անբավարարության կամ պարտադիր կուտակային վճար կատարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում արգելանքն իրականացնող

պաշտոնատար անձը կազմում է համապատասխան արձանագրություն: Արձանագրության օրինակելի ձևը սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

Արգելանք դնելիս այն իրականացնող պաշտոնատար անձը յուրաքանչյուր դեպքի համար որոշում է սահմանափակման տեսակները, ծավալները՝ հաշվի առնելով գույքի հատկանիշները, սեփականատիրոջ կամ տիրապետողի համար դրա նշանակությունը և պարտավորության չափը: Որպես գույքի արժեք ընդունվում է գույքի հաշվեկշռային արժեքը:

Միաժամանակ պարտադիր կուտակային վճար կատարողը զգուշացվում է արգելադրած գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու քաղաքացիների համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը պատշաճ ձևով ուղարկվում է պարտադիր կուտակային վճար կատարողին, ինչպես նաև այլ անձանց ու մարմիններ:

Գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը չի կարող արգելել պարտադիր կուտակային վճար կատարողի ներկայացուցչի մասնակցությունը գույքի արգելադրմանը: Սույն հոդվածի իմաստով պարտադիր կուտակային վճար կատարողի ներկայացուցիչ է համարվում այն անձը, որի լիազորությունները հաստատվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով* սահմանված կարգով:

Գույքի արգելադրում կարող է իրականացվել ժամը 8.00-ից մինչև 18.00-ն:

Սույն հոդվածով նախատեսված արգելադրման դեպքում առկա հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտադիր կուտակային վճարի գծով պարտավորության ոչ պակաս, քան քսան տոկոսը մարելուց հետո հարկային մարմնի ղեկավարն իրավունք ունի մնացած պարտավորությունը մարելու վերաբերյալ պարտադիր կուտակային վճար կատարողի հետ կնքելու պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց, որի տևողությունը կարող է սահմանվել 2 ամսից մինչև 6 ամիս ժամկետով: Ընդ որում, եթե արգելադրման ընթացքում պարտադիր կուտակային վճար կատարողը դիմում է ժամանակացույց կնքելու համար և ներկայացնում է բավարար հիմքեր այն մասին, որ արգելանքի կիրառումն ակնհայտորեն վտանգում է իր գործունեությունը, ապա հարկային մարմնի ղեկավարը պարտադիր կուտակային վճար կատարողի հետ կնքում է պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց: Սույն մասով նախատեսված ժամանակացույց կնքելու լիազորությունը հարկային մարմնի ղեկավարը կարող է փոխանցել հարկային մարմնի այլ պաշտոնատար անձի:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտադիր կուտակային վճարի գծով պարտավորության դադարման, արգելանք դնելուց հետո՝ 1-ամսյա ժամկետում, հարկային մարմնի կողմից պարտավորությունը բռնագանձելու վերաբերյալ դատարան հայց չներկայացնելու կամ պարտադիր կուտակային վճար կատարողի հետ սույն հոդվածում նշված պարտավորությունը մարելու վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույց կնքելու կամ դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու դեպքերում գույքի արգելադրման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած:

Գույքն արգելանքի վերցնելու մասին որոշման վարչական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

Արգելանքի վերցված գույքը վատնելը, օտարելը, թաքցնելը, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելը, փչացնելը կամ ոչնչացնելը արգելվում է:

Արգելանքն իրականացնող պաշտոնատար անձն արգելանքի տակ դրված գույքն ի պահ է հանձնում պարտադիր կուտակային վճար կատարողին՝ ստացականով, իսկ եթե պարտադիր կուտակային վճար կատարողը փորձում է արգելադրած գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնել, թաքցնել, ապօրինաբար մեկ ուրիշի հանձնել, փչացնել կամ ոչնչացնել, ապա գույքի պահատվությունը հանձնվում է նման գործունե-

* *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*

ություն իրականացնող մասնագիտացված կազմակերպությանը՝ պահատվության պայմանագրի հիման վրա: Պահատվության հետ կապված ծախսերը կատարում է պարտադիր կուտակային վճար կատարողը:

Պարտադիր կուտակային վճար կատարողի գույքի արգելադրում իրականացնող պաշտոնատար անձի գործողություններին խոչընդոտելու դեպքում արգելանքն իրականացնող պաշտոնատար անձը խոչընդոտող հանգամանքները վերացնելու համար աջակցություն ստանալու նպատակով դիմում է իրավապահ մարմիններին և նրանց օժանդակությամբ շարունակում գույքի արգելադրման գործողությունները:

Պարտադիր կուտակային վճար կատարողի չկատարած՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտադիր կուտակային վճարի գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու պարտադիր կուտակային վճար կատարողի պահանջի իրավունքը և ստացված գումարները ուղղելու պարտադիր կուտակային վճար կատարողի պարտավորությունների մարմանը:

Ընդ որում, հարկային մարմնին է անցնում իրավունքի անցման պահին առկա ծավալով պարտավորության (ներառյալ՝ ապառքը և դրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պահանջի իրացման պահին, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր կուտակային վճարների տույժերի հաշվարկման ժամկետները, կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ:

Որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտադիր կուտակային վճարի գծով պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և պարտադիր կուտակային վճար կատարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Գրավի պայմանագիր կնքվելու դեպքում պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց:»:

Հոդված 40. Օրենքի 83-րդ հոդվածի 4-րդ մասում «խզել» բառը փոխարինել «միակողմանի լուծել» բառերով:

Հոդված 41. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
8 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-207-Ն

«Արժեթղթերի շուկայի մասին» * *Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝

1) «դեպքերի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև այն դեպքերի, երբ ազդագիրը ներկայացվել է ներդրումային ֆոնդի (դրա կանոնների) գրանցման գործընթացում» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ներդրումային ֆոնդի (դրա կանոնների) գրանցման գործընթացում ներկայացված ազդագիրը գրանցված է համարվում ներդրումային ֆոնդի (դրա կանոնների) գրանցմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
8 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-211-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» *** *Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժզ» կետով.

«ժզ) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ:»:

Հոդված 2. Օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասը «դադարեցման» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ այլ անձանց փոխանցման» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
8 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-212-Ն

---

* *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2012 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 61 (935), 19.12.12):
*** *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

«Ներդրումային ֆոնդերի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը «հիմնադրամը,» բառից հետո լրացնել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված երաշխավորման ֆոնդը, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին»[****] Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված երաշխիքային ֆոնդը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասը «Պարտադիր» բառից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Կենսաթոշակային ֆոնդը չի կարող լինել փակ կամ միջակայքային ֆոնդ:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը «փայերը» բառից հետո լրացնել «(բաժնետոմսերը)» բառով:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում «առավելագույն սահմանաչափեր» բառերը փոխարինել «թույլատրելի ուղղությունները և դրանց առավելագույն սահմանաչափերը, ինչպես նաև կառավարչի և պահառուի պարգևավճարների հաշվարկման կարգը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետից հանել «՝ 6 օրինակից» բառերը:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին և 3-րդ մասերով նախատեսված դեպքերի, փայը (բաժնետոմսը) տեղաբաշխվում է դրա ձեռքբերման (բաժանորդագրման) պահանջ ներկայացվելու, իսկ փայի (բաժնետոմսի) դիմաց վճարումն ավելի ուշ կատարվելու դեպքում՝ համապատասխան վճարումը կատարելու պահից հետո սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով առաջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման գնով: Փակ և միջակայքային ֆոնդերի, ինչպես նաև կամավոր կենսաթոշակային ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) կարող է նախատեսվել, որ փայը (բաժնետոմսը) տեղաբաշխվում է դրա ձեռքբերման (բաժանորդագրման) պահանջ ներկայացվելու, իսկ փայի (բաժնետոմսի) դիմաց վճարումն ավելի ուշ կատարվելու դեպքում՝ համապատասխան վճարումը կատարելու պահի դրությամբ սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման գնով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը տեղաբաշխվում են դրանց ձեռքբերման պահանջներ կայացվելու պահի դրությամբ սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի տեղաբաշխման գնով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, գործակալի կամ պահառուի կողմից կուտակային կենսաթոշակային վճարի ստացումը սույն հոդվածի իմաստով համարվում է

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2012 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 61 (935), 19.12.12):

[***] *ՀՀՊՏ 2010 N 26 (760), 16.06.10:*

[****] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

համապատասխան մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի փայի (բաժնետոմսի) ձեռք բերման պահանջի ներկայացում:»:

Հոդված 7. Օրենքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 29. Փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի, տեղաբաշխման և հետգնման գների հաշվարկումը և հրապարակումը

1. Կառավարիչն իր կողմից կառավարվող բաց ֆոնդի փայի (բաժնետոմսի) յուրաքանչյուր օրվա հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման գները հաշվարկում և հրապարակում է ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) նախատեսված դեպքերում օրվա տարբեր ժամանակահատվածների համար կարող են իրականացվել փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի, տեղաբաշխման և հետգնման գների առանձին հաշվարկ և հրապարակում: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սույն մասով նախատեսված հրապարակման առավելագույն ժամկետներ:

2. Փայերի (բաժնետոմսերի) տեղաբաշխման և հետգնման ժամանակահատվածներում (միջակայքում կամ օրը կամ օրերին) սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները տարածվում են նաև փակ և միջակայքային ֆոնդերի վրա: Ընդ որում, փակ կամ միջակայքային ֆոնդի կողմից փայերի (բաժնետոմսերի) տեղաբաշխումը (միջակայքային ֆոնդի դեպքում՝ նաև դրանց հետգնումը) սկսելու օրվան նախորդող աշխատանքային օրվա համար փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման գները հաշվարկվում և հրապարակվում են ոչ ուշ, քան մինչև այդ օրվա վերջը:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերից՝ կառավարիչն իր կողմից կառավարվող փակ և միջակայքային ֆոնդերի փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման գները հաշվարկում և հրապարակում է նաև ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված պարբերականությամբ: Սույն մասով նախատեսված հաշվարկի և հրապարակման նվազագույն պարբերականությունը սահմանում է Կենտրոնական բանկը, և այն չի կարող ամիսը մեկ անգամից պակաս լինել:

4. Փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման և հետգնման գները (բացառությամբ փակ ֆոնդի կողմից լրացուցիչ տեղաբաշխվող փայի (բաժնետոմսի), ինչպես նաև առաջին անգամ փայերի (բաժնետոմսերի) տեղաբաշխում իրականացնող ֆոնդի փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման գների) հաշվարկվում են այդ օրվա (համապատասխան ժամանակահատվածի) համար հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի հիման վրա և կարող են տարբերվել դրանից միայն սույն հոդվածի համապատասխանաբար 5-րդ կամ 6-րդ մասով սահմանված դեպքերում և չափով: Փակ ֆոնդի կողմից լրացուցիչ տեղաբաշխվող փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման գինը չի կարող պակաս լինել այդ օրվա (համապատասխան ժամանակահատվածի) համար հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքից:

5. Փայի (բաժնետոմսի) տեղաբաշխման գինը կարող է գերազանցել այդ օրվա (համապատասխան ժամանակահատվածի) համար հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված վճարների (հավելատոկոսի) և ծախսերի չափով, բացառությամբ, եթե դրանք արդեն իսկ հաշվի են առնվել ֆոնդի (ենթաֆոնդի) զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս:

6. Փայի (բաժնետոմսի) հետգնման գինը կարող է ցածր լինել այդ օրվա (համապատասխան ժամանակահատվածի) համար հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքից ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված վճարների (զեղչատոկոսի) և ծախսերի չափով, բացառությամբ, եթե դրանք արդեն իսկ հաշվի են առնվել ֆոնդի (ենթաֆոնդի) զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս:»:

Հոդված 8. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

4. Ֆոնդի լուծարման (դադարեցման) դեպքում ֆոնդի ակտիվները ֆոնդի մասնակիցների միջև բաշխելու, ներառյալ՝ այդ ակտիվների հաշվին այլ ֆոնդի փայեր (բաժնետոմսեր) ձեռք բերելու համար, ինչպես նաև առանց իր համաձայնության ֆոնդի կա-

ռավարումն այլ կառավարչի փոխանցվելու կամ ֆոնդի տեսակը փոփոխվելու դեպքում ֆոնդի մասնակցի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման պահանջ ներկայացվելիս հետգնման (մարման) վճար չի կարող գանձվել:»:

Հոդված 9. Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Փայերի փոխանակումն իրականացվում է փոխանակման պահանջը ներկայացվելու օրը (ժամին) հետգնվող (մարվող) և տեղաբաշխվող փայերի համար սույն գլխով սահմանված կարգով որոշվող համապատասխանաբար հետգնման (մարման) և տեղաբաշխման գներով՝ ֆոնդի կանոններով սահմանված կարգով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակումը, ինչպես նաև տարբեր կառավարիչների կողմից կառավարվող կամավոր կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակումն իրականացվում է փոխանակման պահանջը ներկայացվելու օրվա (ժամի) համար որոշվող հետգնման (մարման) և նոր փայեր տեղաբաշխելու օրվա (ժամի) համար որոշվող տեղաբաշխման գներով:»:

Հոդված 10. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Փայը (բաժնետոմսը), բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի, հետ է գնվում (մարվում է) ֆոնդի մասնակցի կողմից համապատասխան պահանջ ներկայացվելու պահից հետո սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով առաջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) հետգնման գնով: Փակ և միջակայքային ֆոնդերի, ինչպես նաև կամավոր կենսաթոշակային ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) կարող է նախատեսվել, որ փայը (բաժնետոմսը) հետ է գնվում (մարվում է) հետգնման (մարման) պահանջ ներկայացվելու պահի դրությամբ սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի (բաժնետոմսի) հետգնման գնով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը հետ են գնվում (մարվում են) դրանց հետգնման (մարման) պահանջ ներկայացվելու պահի դրությամբ սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի հետգնման գնով:»:

Հոդված 11. Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

«5. Փայերի (բաժնետոմսերի) թողարկման, տեղաբաշխման կամ հետգնման (մարման) կասեցման ժամանակահատվածում արգելվում է փայերի (բաժնետոմսերի) համապատասխանաբար թողարկումը, տեղաբաշխումը կամ հետգնումը (մարումը):

6. Նախքան սույն հոդվածով նախատեսված կասեցման ժամկետի սկիզբը կամ կասեցման ժամկետի ընթացքում ներկայացված փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերման, փոխանակման կամ հետգնման (մարման) պահանջի բավարարման համար սահմանված ժամկետի հաշվարկում չի ընդգրկվում համապատասխանաբար այդ փայերի (բաժնետոմսերի) թողարկման, տեղաբաշխման կամ հետգնման (մարման) կասեցման ժամանակահատվածը: Ընդ որում, փայերի փոխանակման պահանջի ներկայացման այն դեպքերում, երբ կասեցված է ձեռքբերման ենթակա փայերի տեղաբաշխումը, ֆոնդի մասնակիցը ողջամիտ ժամկետում տեղեկացվում է դրա, ինչպես նաև հետգնվող (մարվող) փայերի փոխարեն այլ ֆոնդի փայերի ձեռքբերման պահանջ ներկայացնելու իր իրավունքի մասին:»:

Հոդված 12. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «և (կամ) վաճառվող արժեթղթերում և նրանց պատկանող» բառերը փոխարինել «, պատկանող և (կամ) նրանց կողմից վաճառվող արժեթղթերում կամ այլ ակտիվներում» բառերով,

բ. «նախատեսված դեպքի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև այն դեպքերի, երբ ֆոնդի ակտիվների հաշվին այդ արժեթղթերը ձեռք են բերվել կարգավորվող շուկայում իրականացված գործարքի արդյունքում» բառերով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Պահառուի ակտիվներում ներդրում չի համարվում ֆոնդի ակտիվների պահպանումը պահառուի մոտ, ներառյալ՝ համապատասխան տոկոսների ստացման դիմաց:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ֆոնդի ակտիվները կարգավորվող շուկայից դուրս չեն կարող վաճառվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց:».

3) 5-րդ մասի «երաշխիք տրամադրվել կամ երաշխավորություն» բառերը փոխարինել «երաշխիք կամ երաշխավորություն տրամադրվել կամ» բառերով:

Հոդված 13. Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում «ակտիվները» բառը փոխարինել «ակտիվների առնվազն 90 տոկոսը» բառերով, իսկ «դրամական շուկայի գործիքներում» բառերից հետո լրացնել «ներառյալ՝ մեկից ավելի տարի ժամկետով թողարկված այն պարտքային արժեթղթերում, որոնց մարմանը մնացել է մեկ տարուց պակաս ժամկետ,» բառերով:

Հոդված 15. Օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Մասնագիտացված ֆոնդի՝ սույն օրենքով և դրա հիման վրա Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված տնտեսական նորմատիվները խախտվելու դեպքում կառավարիչը պարտավոր է այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում (եթե սույն օրենքով կոնկրետ տնտեսական նորմատիվի խախտման մասին տեղեկացման ավելի կարճ ժամկետ սահմանված չէ) տեղեկացնել Կենտրոնական բանկին և միջոցներ ձեռնարկել հնարավոր կարճ ժամկետում խախտումը վերացնելու ուղղությամբ:»:

Հոդված 16. Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 4-րդ կետից հանել «՝ 6 օրինակից» բառերը.

2) 9-րդ կետը «կառավարչի» բառից հետո լրացնել «գործունեության (աշխատանքի) կանոնակարգերի,» բառերով, իսկ «և կանոնակարգերի» բառերը հանել:

Հոդված 17. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Կառավարչի գործունեության կանոնների փոփոխությունները դրանց տեղի ունենալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ ի գիտություն, եթե Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ դրանց գրանցման պահանջ:»:

Հոդված 18. Օրենքի 67-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող է սահմանվել կառավարչի կողմից ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցելու դեպքում տվյալ ֆոնդում իր մասնակցության դադարեցման կարգը, ներառյալ՝ պահը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին մասով.

«7.1. Կառավարչի՝ սույն օրենքով և դրա հիման վրա Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:»:

Հոդված 19. Օրենքի 68-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետում՝

ա. «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. մատուցվող ծառայությունների (իրականացվող գործառնությունների) տեսակները, դրանց մատուցման կարգն ու պայմանները.»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա.1» ենթակետով.

«ա.1. շահերի բախումների կանխարգելման միջոցները.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով.

«3. Կառավարիչը պատասխանատվություն է կրում իր գործողությունների կամ անգործության հետևանքով ֆոնդին կամ դրա մասնակիցներին պատճառած վնասների (ներառյալ՝ բաց թողնված օգուտների համար), բացառությամբ այն դեպքերի, երբ կառավարիչն ապացուցում է, որ գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում: Ընդ որում, ֆոնդի պակաս եկամտաբերությունը մյուս նմանատիպ ֆոնդերի եկամտաբերությունից ինքնին չի կարող տվյալ ֆոնդի կառավարչի համար իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հիմքով սույն մասով նախատեսված հատուցման պարտականություն առաջացնել:

4. Ֆոնդին կամ դրա մասնակիցներին պատճառած վնասի հատուցման պահանջով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է հանդես գալ տվյալ ֆոնդի պահառուն:

5. Կառավարչի կողմից պայմանագրային ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասի հատուցումն իրականացվում է ֆոնդի համապատասխան մասնակիցներին կառավարչի հաշվին ֆոնդի համապատասխան քանակի փայեր տեղաբաշխելու միջոցով: Հատուցման վճարման պահին տվյալ ֆոնդի մասնակից չհանդիսացող անձանց պատճառած վնասի հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելու միջոցով, բացառությամբ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների, որոնց համար ձեռք են բերվում նրանց ընտրած պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սույն մասով նախատեսված հատուցման կարգն ու պայմանները:»:

Հոդված 20. Օրենքի 87-րդ հոդվածի 5-րդ մասը «կառավարչին» բառից հետո լրացնել «, ֆոնդին» բառով, «Ընդ որում,» բառերից հետո՝ «ֆոնդին կամ» բառերով, ինչպես նաև լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Պահառուի կողմից պայմանագրային ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասի հատուցումն իրականացվում է ֆոնդի համապատասխան մասնակիցների համար պահառուի հաշվին ֆոնդի համապատասխան քանակի փայեր ձեռք բերելու միջոցով: Հատուցման վճարման պահին տվյալ ֆոնդի մասնակից չհանդիսացող անձանց պատճառած վնասի հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելու միջոցով, բացառությամբ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների, որոնց համար ձեռք են բերվում նրանց ընտրած պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սույն մասով նախատեսված հատուցման կարգն ու պայմանները:»:

Հոդված 21. Օրենքի 89-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությունը «անձի հետ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 86-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 22. Օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասը «վերացվել» բառից հետո լրացնել «, կամ Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով՝ խաթարվել է պահառուի բավարար անկախությունը կառավարչից» բառերով:

Հոդված 23. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հրապարակման օրը (մինչև համապատասխան ժամը), եթե փակ ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) փայերի (բաժնետոմսերի) տեղաբաշխման գնի որոշման այլ կարգ սահմանված չէ» բառերը փոխարինել «որոշակի ժամանակահատվածում՝ սահմանելով այդ ժամանակահատվածը» բառերով:

Հոդված 24. Օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) առաջին պարբերությունից հանել «, բացառությամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի» բառերը.

2) երկրորդ և երրորդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 25. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
8 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-213-Ն

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Կենտրոնական բանկը Հիմնադրամին կարող է թույլատրել իրականացնելու սույն օրենքով նախատեսված իր գործունեության հետ կապված կամ նմանատիպ այլ լրացուցիչ գործունեություն (ներառյալ՝ կառավարելու այլ երաշխիքային ֆոնդեր), որով չպետք է վտանգի տակ դրվի Հիմնադրամի՝ սույն օրենքով նախատեսված խնդիրների պատշաճ իրականացումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
8 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-214-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ - 252 օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն և ներդրումային ֆոնդի կառավարիչ հանդիսացող Ընկերությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգի, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
8 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-215-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2012 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 61 (935), 19.12.12):
[***] *ՀՀՊՏ 2001 N 38 (170), 07.12.01:*

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում[*] *փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*[**]

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 905-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Այն դեպքերում, երբ ցպահանջ չհանդիսացող ավանդն ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը (կուտակային կենսաթոշակային ավանդի դեպքում՝ մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը) կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուին տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, և տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 968.9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Ֆոնդի կառավարչի կողմից սույն մասով նախատեսված հատուցումն իրականացվում է ֆոնդի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդի) համապատասխան մասնակիցներին ֆոնդի կառավարչի հաշվին ֆոնդի համապատասխան քանակի փայեր տեղաբաշխելու միջոցով, բացառությամբ հատուցման վճարման պահին տվյալ ֆոնդի մասնակից չհանդիսացող անձանց պատճառած վնասի, որի հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելու միջոցով: Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասները հատուցվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:».

2) 2-րդ մասի «ֆոնդի ակտիվների կազմում ներառման ենթակա» բառերը փոխարինել «կարգով» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 1014-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.

«11. Կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման առանձնահատկությունները սահմանվում են «Կուտակային կենսաթոշակների մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
8 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-216-Ն

---

[*] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2012 թվականի նոյեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 61 (935), 19.12.12):
[***] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

«Դրամարկղային գործառնությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-501-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերության «գումարի (խախտման գումար)» բառերը փոխարինել «գումարների (խախտման գումարներ) հանրագումարի» բառերով, «գումարի 10 տոկոսի» բառերը՝ «գումարների հանրագումարի 10 տոկոսի» բառերով, իսկ երկրորդ պարբերության «հայտնաբերելուց» բառը փոխարինել «արձանագրելուց» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Կանխիկ դրամով վճարումների կատարման և (կամ) ընդունման նկատմամբ սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքները կիրառվում են՝

1) ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնման միանվագ գործարքների մասով կանխիկ դրամով վճարված գումարի՝ օրենքով սահմանված առավելագույն չափի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

2) ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների միանվագ գործարքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման՝ օրենքով սահմանված առավելագույն չափերի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

3) մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնման դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

4) մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման առավելագույն չափի խախտման գումարների հանրագումարի նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի երրորդ պարբերությունում «հայտնաբերելուց» բառը փոխարինել «արձանագրելուց» բառով:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքով սահմանված խախտումներն արձանագրվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
28 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-251-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2003 N 7 (242), 05.02.03:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2012 թվականի դեկտեմբերի 19-ին (ՀՀՊՏ N 66 (940), 28.12.12):
[***] *ՀՀՊՏ 2000 N 14 (112), 23.06.00:*

«Հաշվապահական հաշվառման մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին հոդվածով՝

«Հոդված 5.1. Կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի՝

Հաշվապահական հաշվառումը համակարգչային ծրագրով վարելու ժամկետը	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվարկված՝ նախորդ տարվա համախառն եկամտի չափը
2013 թվականի հուլիսի 1-ից	1 մլրդ դրամից ավելի
2014 թվականի հուլիսի 1-ից	500 մլն դրամից ավելի

Սույն հոդվածում նշված համակարգչային ծրագրերի՝ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն հոդվածով սահմանված ժամանակացույցը և հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերին ներկայացվող պահանջները չեն վերաբերում բանկերին, վարկային կազմակերպություններին, ապահովագրական ընկերություններին և ներդրումային ընկերություններին, որոնց մոտ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգերի ներդրման պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետը «հաշվառում վարելը» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ սույն օրենքի 5.1-րդ հոդվածով սահմանված չափանիշներին բավարարող համակարգչային ծրագրերով)» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
28 դեկտեմբերի 2012 թ., Երևան, ՀՕ-259-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2003 N 9 (244), 12.02.03:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2012 թվականի դեկտեմբերի 19-ին (ՀՀՊՏ N 66 (940), 28.12.12):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 339Ա):
- ***«Ավերս» և «Coinstar Money Transfer» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** համապատասխանաբար «Արդշինինվեստբանկ» և «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 344Ա, 355Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Գրավևվարկ», «Կապիտալ պլյուս» և «Սենորա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 345Ա, 346Ա, 360Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Լիա-Կ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիան (որոշում թիվ 347Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Ալեքսվորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 348Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Մետալ Լևո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 349Ա):
- ***Վարկի ապահովագրության դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա է տրամադրվել*** «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 354Ա):
- ***Ոչ կյանքի վերաապահովագրության դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա է տրամադրվել*** «Ռեսո» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 356Ա):
- ***Գրանցվել են*** «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության՝ «Էրեբունի», «Սեֆ Ինտերնեյշնլ», «Ֆինքա», «Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ համապատասխանաբար «Վանաձոր», «Եղեգնաձոր», «Շիրակ», ինչպես նաև «Կոնվերս բանկ», «ՊրոԿրեդիտ բանկ», «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների՝ համապատասխանաբար «Ջեյթուն», «Ավան», «Արտաշատ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/1263Ա, 1/1264Ա, 1/1388Ա, 1/1396Ա, 1/1269Ա, 1/1297Ա, 1/1349Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի «Մասիս» ներկայացուցչությունը, ***գրանցվել են*** «Էջմիածին» և «Մասիս» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/1267Ա):
- ***Գրանցվել են*** «Ռեսո» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոն», ինչպես նաև «Նոր Հորիզոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Գավառի ներկայացուցչությունները (որոշումներ թիվ 1/1291Ա, 1/1340Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 փակ բաժնետիրական, 4 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 8520000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/1303Ա, 1/1318Ա, 1/1319Ա, 1/1321Ա, 1/1323Ա, 1/1367Ա, 1/1324Ա, 1/1359Ա), 4 արտարժույթի փոխանակման կետերի, 1 փակ բաժնետիրական ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1294Ա, 1/1295Ա, 1/1320Ա, 1/1394Ա, 1/1322Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կարգավորել հետհաշվեկշռային հաշիվներից ակտիվների դուրսգրման կարգը, ինչպես նաև ակտիվների դասակարգման և պահուստավորման հետ կապված որոշ հարաբերություններ,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետը, «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի «ե» կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին» թիվ 63 որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգում» կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո բանկերը և վարկային կազմակերպությունները հետհաշվեկշռից դուրս են գրում այն բոլոր ակտիվները, որոնք բավարարում են սույն որոշման հավելվածի 11-րդ կետով լրացված 6.4-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված դուրսգրման հիմքերին, նույնիսկ եթե այդ հիմքերն առաջացել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N291-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444)[1], 27.12.2012):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 291-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ Արթուր Ջավադյան
8 նոյեմբերի 2012 թ.

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 1072-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար _____ Վաչե Գաբրիելյան
7 դեկտեմբերի 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՈՒ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. Կարգի 2.1-րդ կետում.
   ա. «ֆակտորինգի» բառից առաջ լրացնել «որպես ակտիվ հաշվառվող ռեպո համաձայնագրերի, օվերնայթների,» բառերով,
   բ. «այլ ընթացիկ ակտիվները),» բառերից հետո լրացնել «սույն կետում նշված պահանջների գծով հաշվեգրված և չվճարված տոկոսները, տույժերը, տուգանքները,» բառերով:
2. Կարգի 2.11-րդ կետը «դրամը» բառից հետո լրացնել «(համարժեք արտարժույթը)» բառերով:
3. Կարգի 3.4.1-րդ կետում «բանկերի կողմից տրված վարկերի և դեբիտորական պարտքերի ժամկետանց» բառերը փոխարինել «բանկերի կողմից տրված վարկերի և դեբիտորական պարտքերի ժամկետանց և (կամ) վերանայված» բառերով:
4. Կարգը լրացնել նոր 3.4.2-րդ և 3.4.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.
   «3.4.2. Եթե բանկը տրամադրել է վարկեր մեկից ավելի անձանց, և նրանցից յուրաքանչյուրը համապարտ պատասխանատվություն է կրում մյուս վարկառուների ստանձնած վարկային պարտավորությունների համար, ապա վարկառուներից որևէ մեկի՝ սույն կետում նշված վարկը օբյեկտիվ չափանիշով դասակարգվելու դեպքում առնվազն նույն դասով պետք է դասակարգվեն համապարտ պատասխանատվություն կրող մնացած բոլոր վարկառուներին տրամադրված վարկերը:
   3.4.3. Եթե բանկը տրամադրել է վարկեր մեկից ավելի անձանց և նրանցից յուրաքանչյուրը համապարտ պատասխանատվություն է կրում մյուս վարկառուների ստանձնած վարկային պարտավորությունների համար, և եթե վարկառուներից որևէ մեկը (այսուհետ սույն կետի իմաստով՝ ժամկետանց վարկառու) այլ բանկում կամ նույն բանկում ունի ժամկետանց այլ վարկեր և դեբիտորական պարտքեր, ապա՝ միայն ժամկետանց վարկառուին տրամադրված վարկը պետք է դասակարգվի առաջնորդվելով սույն կարգի 3.4.1-րդ կետով սահմանված ամենախիստ դասով, իսկ մյուս վարկառուներին տրամադրված վարկերի դասը ենթակա չէ փոփոխման վերոնշյալ հիմքով:»:
5. Կարգի 3.13-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
   «Եթե ակտիվի գծով վճարման ենթակա գումարից (հիմնական գումար, տոկոս և (կամ) տույժ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարվել միայն 1000 Հայաստանի Հանրապետությանը դրամը (համարժեք արտարժույթը) չգերազանցող գումար, ապա նշված չափով չվճարումը հիմք չի հանդիսանում ակտիվը չաշխատող համարելու և (կամ) ակտիվի դասը խստացնելու համար:»:
6. Կարգի 4.1-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
   «Հնարավոր կորուստների պահուստների սույն կարգով սահմանված դրույքաչափերը կիրառվում են ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի գծով հաշվեկշռում գրանցված գումարը՝ ներառյալ տվյալ ակտիվի գծով հաշվեգրած տոկոսները, տույժերը և տուգանքները՝ առանց նվազեցնելու տվյալ ակտիվի գծով ձևավորած հնարավոր կորուստների պահուստները: Ընդ որում, արտարժույթով արտահայտված ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դրամով ստացման ենթակա տոկոսների, տույժերի և այլ գումարների) նկատմամբ կիրառվում է արտարժույթով արտահայտված ակտիվի համար սույն կարգով սահմանված միևնույն պահուստավորման դրույքաչափը:»:
7. Կարգի 4.5-րդ կետը առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
   «Հետհաշվեկշռում ակտիվները շարունակվում են արտացոլվել այն արժեքով, որով կարտացոլվեին հաշվեկշռում հաշվառվելու դեպքում՝ առանց թղթակցելու համապարփակ եկամտի հաշիվների հետ:»:

8. Կարգի 6-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հետհաշվեկշռային հաշիվներում հաշվառվող ակտիվների դուրսգրումը»:

9. Կարգի 6.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.1. Հետհաշվեկշռում հաշվառվող ակտիվների դիմաց վճարում (փոխհատուցում) ստանալիս.

1) Ակտիվը կամ դրա մի մասը վերականգնվում է հաշվեկշռում՝ դուրսգրման պահին ակտիվի կամ դրա մի մասի համախառն հաշվեկշռային արժեքի չափով թղթակցելով տվյալ ակտիվի հնարավոր կորուստների հատուկ պահուստի հաշվի հետ, իսկ հետհաշվեկշռում հաշվառվելու ընթացքում ակտիվի գծով ձևավորված գումարների չափով՝ թղթակցելով տոկոսների և (կամ) տույժերի և տուգանքների տեսքով ստացվող եկամուտների համապատասխան հաշիվների հետ: Միևնույն ժամանակ, եթե արտարժութային ակտիվի կամ դրա մի մասի գծով դուրսգրման և վերականգնման պահերին առկա է վերագնահատումից տարբերություն, ապա վերջինս ուղղվում է արտարժույթի վերագնահատումից օգուտների կամ կորուստների հաշիվներին:

2) Վերականգնված ակտիվը կամ դրա մի մասը մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ, իսկ պահուստը ճշգրտվում է՝ թղթակցելով կորուստների վերականգնումից եկամուտների համապատասխան հաշիվների հետ:»:

10. Կարգի 6.3, 6.3.1, 6.3.2 կետերն ուժը կորցրած ճանաչել:

11. Կարգի 6.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.4. Հետհաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում հետհաշվեկշռային հաշիվներից.

1) բանկի կողմից ակտիվը (կամ դրա մի մասը) զիջելու (կամ ներելու) դեպքում,

2) ակտիվի (կամ դրա մի մասի) նկատմամբ պահանջի իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վաղեմության ժամկետը լրանալու դեպքում,

3) փոխառուի (պարտապանի)՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով լուծարվելու դեպքում,

4) ֆիզիկական անձ փոխառուների (պարտապանների) մահանալու դեպքում, եթե ժառանգության կարգով անձի պարտավորությունները չեն փոխանցվում այլ անձանց, կամ

5) ֆիզիկական անձ փոխառուների (պարտապանների) օրենքով սահմանված կարգով սնանկ ճանաչվելու դեպքում այն պարտավորությունների մասով, որոնցով ֆիզիկական անձի սնանկության գործն ավարտվել է պարտավորությունների կատարումից ազատելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:

12. Կարգի 6.4.1, 6.4.2, 6.4.3 կետերն ուժը կորցրած ճանաչել:

13. Կարգի 6.5-րդ կետում «ակտիվները և տոկոսները (կամ դրանց մի մասը)» բառերը փոխարինել «ակտիվները (կամ դրանց մի մասը)» բառերով:

14. Կարգի 6.5.1-րդ կետում «մինչև սույն կարգի 6.4.2-րդ կետում նշված հայցային վաղեմության ժամկետի ավարտը կամ սույն կարգի 6.4.3-րդ կետում նշված փոխառուի (պարտապանի) լուծարվելը» բառերը փոխարինել «մինչև սույն կարգի 6.4-րդ կետի 2-5-րդ ենթակետերով սահմանված հիմքերի ի հայտ գալը» բառերով:

15. Կարգը լրացնել 6.5.3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.5.3. Սույն կարգի 6.5.1-րդ և 6.5.2-րդ կետերի համաձայն՝ շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվի այն գումարի չափով, որով ակտիվը (ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները) դուրս է գրվել հաշվեկշռից:»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 25-ի թիվ 73-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովագրական ընկերությունների չաշխատող ակտիվների գծով եկամուտների հաշվառումը համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին, կարգավորել արտահաշվեկշռային հաշիվներից ակտիվների դուրսգրման կարգը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. մարտի 25-ի ««Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ը հաստատելու մասին» թիվ 73-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ի (Կանոնակարգ 3/09) փոփոխությունները և լրացումները՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական ընկերություններն արտահաշվեկշռից դուրս են գրում այն բոլոր ակտիվները և արժեթղթերը, որոնք համապատասխանաբար բավարարում են սույն որոշմամբ հաստատված Հավելվածի 7-րդ կետով շարադրված 47-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով և Հավելվածի 12-րդ ենթակետով շարադրված 86-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված դուրսգրման հիմքերին, նույնիսկ եթե դուրսգրման հիմքերն առաջացել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N292-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444)[1], 27.12.2012):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 6-ի
թիվ 292-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահ _____ Արթուր Ջավադյան
8 նոյեմբերի 2012 թ.

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի
թիվ 1073-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարար _____ Վաչե Գաբրիելյան
7 դեկտեմբերի 2012 թ.

«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/09-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. Կանոնակարգ 3/09-ը լրացնել 6.3 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.3. Կանոնակարգի իմաստով ակտիվի ***համախառն հաշվեկշռային արժեք*** է համարվում տվյալ ակտիվի գծով հաշվեկշռում գրանցված գումարը՝ ներառյալ նրանց գծով հաշվեգրած տոկոսները, տույժերը և տուգանքները, առանց նվազեցնելու տվյալ ակտիվի գծով ձևավորած հնարավոր կորուստների պահուստները:»:

2. Կանոնակարգ 3/09-ի 24-րդ կետը վերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եթե ակտիվի գծով վճարման ենթակա գումարից (հիմնական գումար, տոկոս և (կամ) տույժ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարվել միայն 1000 Հայաստանի Հանրապետությանը դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող գումար, ապա նշված չափով չվճարումը հիմք չի հանդիսանում ակտիվը չաշխատող համարելու և (կամ) ակտիվի դասը խստացնելու համար:»:

3. Կանոնակարգ 3/09-ի 31-րդ կետը լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հնարավոր կորուստների պահուստների դրույքաչափերը կիրառվում են ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքների նկատմամբ: Ընդ որում, արտարժույթով արտահայտված ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դրամով ստացման ենթակա տոկոսների, տույժերի և այլ գումարների) նկատմամբ կիրառվում է արտարժույթով արտահայտված ակտիվի համար սույն կարգով սահմանված միևնույն պահուստավորման դրույքաչափը:»:

4. Կանոնակարգ 3/09-ի 37-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, արտահաշվեկշռում ակտիվները շարունակում են արտացոլվել այն արժեքով, որով կարտացոլվեին հաշվեկշռում հաշվառվելու դեպքում՝ առանց թղթակցելու համապարփակ եկամտի հաշիվների հետ:»:

5. Կանոնակարգ 3/09-ի 44-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«44. Արտահաշվեկշռային հաշիվներում հաշվառվող ակտիվների դիմաց վճարումը (փոխհատուցում) ստանալիս՝

1) հաշվեկշռում վերականգնվում է դուրս գրված ակտիվը կամ դրա մի մասը ակտիվի կամ դրա մի մասի՝ դուրսգրման պահի համախառն հաշվեկշռային արժեքի չափով թղթակցելով տվյալ ակտիվի հնարավոր կորուստների հատուկ պահուստի հաշվի հետ, իսկ ակտիվի գծով արտահաշվեկշռում արտացոլված գումարի և դուրսգրման պահի համախառն հաշվեկշռային արժեքի տարբերության չափով թղթակցելով տոկոսների և/կամ տույժերի և տուգանքների տեսքով ստացվող եկամուտների արտացոլման համար նախատեսված համապատասխան հաշիվների հետ: Միևնույն ժամանակ, եթե արտարժութային ակտիվի կամ դրա մի մասի գծով դուրսգրման և վերականգնման պահերին առկա է վերագնահատումից տարբերություն, ապա վերջինս ուղղվում է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսերի կամ եկամուտների հաշիվներին,

2) վերականգնված ակտիվը կամ դրա մի մասը մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ, իսկ պահուստը ճշգրտվում է՝ թղթակցելով վերականգնումից եկամուտների համապատասխան հաշիվների հետ:»:

6. Կանոնակարգ 3/09-ի 45-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

7. Կանոնակարգ 3/09-ի 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում արտահաշվեկշռային հաշիվներից.

1) Ընկերության կողմից ակտիվը (կամ դրա մի մասը) զիջելու (կամ ներելու) դեպքում,

2) ակտիվի (կամ դրանց մի մասի) նկատմամբ պահանջի իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վաղեմության ժամկետը լրանալու դեպքում,

3) փոխառուի (պարտապանի)՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լուծարվելու դեպքում,

4) ֆիզիկական անձ փոխառուների (պարտապանների) մահանալու դեպքում, եթե ժառանգության կարգով անձի պարտավորությունները չեն փոխանցվում այլ անձանց,

5) ֆիզիկական անձ փոխառուների (պարտապանների)՝ օրենքով սահմանված կարգով սնանկ ճանաչվելու դեպքում այն պարտավորությունների մասով, որոնցով ֆիզիկական անձի սնանկության գործն ավարտվել է պարտավորությունների կատարումից ազատելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:»:

8. Կանոնակարգ 3/09-ի 48-րդ կետում «և տոկոսների (կամ դրանց մի մասի)» բառերը փոխարինել «(կամ դրա մի մասի)» բառերով:

9. Կանոնակարգ 3/09-ը լրացնել 51.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«51.1. Սույն կարգի 49-րդ և 51-րդ կետերի համաձայն՝ շահութահարկի հաշվարկման նպատակով ապահովագրական ընկերության հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվի այն գումարի չափով, որով ակտիվը (ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները) դուրս է գրվել հաշվեկշռից:»:

10. Կանոնակարգ 3/09-ի 63-րդ կետում «չափերով» բառը փոխարինել «դրույքաչափերը կիրառելով արժեթղթերի համախառն հաշվեկշռային արժեքների նկատմամբ» բառերով:

11. Կանոնակարգ 3/09-ի 78-րդ կետը «չափով» բառից հետո լրացնել «և շարունակում են հաշվառվել արտահաշվեկշռային համապատասխան հաշիվներում: Ընդ որում, արտահաշվեկշռում արժեթղթերը շարունակում են արտացոլվել այն արժեքով, որով կարտացոլվեին հաշվեկշռում հաշվառվելու դեպքում՝ առանց թղթակցելու համապարփակ եկամտի հաշիվների հետ:» բառերով:

12. Կանոնակարգ 3/09-ի 84-րդ կետի 1-ին ենթակետում «թղթակցելով համապատասխան պահուստի հաշվի հետ» բառերը փոխարինել «արժեթղթի կամ դրա մի մասի՝ դուրսգրման պահի համախառն հաշվեկշռային արժեքի չափով թղթակցելով տվյալ արժեթղթի հնարավոր կորուստների պահուստի հաշվի հետ, իսկ արժեթղթի գծով արտահաշվեկշռում արտացոլված գումարի և դուրսգրման պահի համախառն հաշվեկշռային արժեքի տարբերության չափով թղթակցելով տոկոսների և/կամ տույժերի և տուգանքների գծով եկամուտների արտացոլման համար նախատեսված համապատասխան հաշիվների հետ: Միևնույն ժամանակ, եթե արտարժութային արժեթղթի կամ դրա մի մասի գծով դուրսգրման և վերականգնման պահերին առկա է վերագնահատումից տարբերություն, ապա վերջինս ուղղվում է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսերի կամ եկամուտների հաշիվներին» բառերով:

13. Կանոնակարգ 3/09-ի 86-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«86. Արտահաշվեկշռում հաշվառվող արժեթղթերը (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում արտահաշվեկշռային հաշիվներից.

1) Ապահովագրական ընկերության կողմից արժեթուղթը (կամ դրա մի մասը) զիջելու (կամ ներելու) դեպքում,

2) արժեթղթերի (կամ դրանց մի մասի) նկատմամբ պահանջի իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վաղեմության ժամկետը լրանալու դեպքում,

3) փոխառուի (պարտապանի)՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լուծարվելու դեպքում,

4) ֆիզիկական անձ փոխառուների (պարտապանների) մահանալու դեպքում, եթե ժառանգության կարգով անձի պարտավորությունները չեն փոխանցվում այլ անձանց,

5) ֆիզիկական անձ փոխառուների (պարտապանների)՝ օրենքով սահմանված կարգով սնանկ ճանաչվելու դեպքում այն պարտավորությունների մասով, որոնցով ֆիզիկական անձի սնանկության գործն ավարտվել է պարտավորությունների կատարումից ազատելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հաշվի առնելով ապահովագրական և վերապահովագրական ընկերությունների միջև համագործակցության ներկայիս փորձը,

նպատակ ունենալով մեղմացնել ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների համագործակցության հետ կապված դժվարությունները,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ի 27.1-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27.1. Սույն կանոնակարգի Հավելված 2-ի Աղյուսակ 1-ի 31-րդ կետի համաձայն՝ 400% ռիսկի կշռին համապատասխանող վերաապահովագրողի պարտավորությունը Ն3 նորմատիվի հաշվարկից կարող է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը նվազեցվել 100%-ով, 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի հունվարի 1-ը՝ 80%-ով, 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 1-ը՝ 60%-ով, եթե բավարարված է հետևյալ պայմաններից որևէ մեկը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N293-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել կենսաթոշակային ֆոնդերի կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով միայն վստահելի, փորձառու և իրենց ֆիդուցիար պարտականությունները գիտակցող կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների մուտքը ֆինանսական շուկա,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10.01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 7-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»:

2) Կանոնակարգը լրացնել 10.1-րդ, 10.2-րդ և 10.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն կարող է տրամադրվել Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված այն կառավարչին, որն ունի միջազգային ֆինանսական կազմակերպություն կամ կենսաթոշակային ֆոնդերի (այդ թվում՝ նմանատիպ այլ ներդրումային ֆոնդերի) կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն (այսուհետ սույն գլխում՝ օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն) հանդիսացող առնվազն մեկ մասնակից (բաժնետեր): Ընդ որում, Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության (կազմակերպությունների) և/կամ օտարերկրյա հեղինակավոր կազմակերպության (կազմակերպությունների) ձայնի իրավունք տվող մասնակցությունը պետք է կազմի 50 տոկոսից ավելին և այդ կազմակերպությունը (կազմակերպությունները) պետք է ունենա որոշիչ ձայն պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ռազմավարությունը սահմանելիս, ինչպես նաև կառավարչի գործադիր մարմինը և ներքին հսկողության համակարգը ձևավորելիս:

10.2. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչն իր գործունեության ողջ ընթացքում պետք է բավարարի սույն կանոնակարգի 10.1-րդ կետով սահմանված պահանջը:

10.3. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 10.1-րդ կետով նախատեսված՝ ֆոնդերի կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա կազմակերպության հեղինակավոր լինելը գնահատելիս հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

1) միջազգային հեղինակավոր վարկանշող կազմակերպությունների կողմից կազմակերպությանը շնորհված վարկանիշը,
2) ֆինանսական ոլորտում միջազգային համբավ ունեցող վերլուծական և (կամ) խորհրդատվական կազմակերպությունների կողմից հրապարակվող լավագույն կառավարիչների ցանկում ընդգրկվածությունը,
3) կառավարման ներքո գտնվող ակտիվների մեծությունը,
4) կառավարվող ֆոնդերի եկամտաբերությունը,
5) աշխարհի տարբեր երկրներում ներկայացվածության աստիճանը,
6) կազմակերպության բաժնետոմսերը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կամ Եվրոպական Միության անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված լինելը,
7) կազմակերպության կողմից կենսաթոշակային ֆոնդերի կամ նմանատիպ (ըստ ներդրումային քաղաքականության) այլ ֆոնդերի կառավարման բնագավառում փորձը,
8) այլ էական հանգամանքներ:»:

3) Կանոնակարգի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Օտարերկրյա կառավարչի Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղը կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության տարածքում Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն, եթե օտարերկրյա կառավարիչը հանդիսանում է ֆոնդերի կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն: Ընդ որում, Կենտրոնական բանկը օտարերկրյա կառավարչի հեղինակավոր լինելը գնահատելիս հաշվի է առնում սույն կանոնակարգի 10.3-րդ կետով սահմանված հանգամանքները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N294-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից ներկայացվող հաշվետվության լրացման կարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Կանոնակարգ 3-ի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32. Սույն կանոնակարգի 2-րդ կետում ընդգրկված աղյուսակի թիվ 32 հաշվետվությունը ներկայացվում է միայն այն բանկերի կողմից, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձ չեն հանդիսանում՝ բացառությամբ թիվ 32 հաշվետվության 3-րդ աղյուսակի, որը պարտադիր ներկայացվում է բոլոր բանկերի կողմից: Հաշվետու բանկերը սույն կետով նախատեսված հաշվետվությունը չեն ներկայացնում ոչ օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով կնքված գործարքների և մարման գործարքների համար:

1) Սույն կետով նախատեսված հաշվետվությունում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ն արժեթղթերի երկրորդային շուկայում հաշվետու անձի կողմից արժեթղթերով կնքված գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից):

2) Սույն հաշվետվության իմաստով՝ գործարքների պայմաններում փոփոխություններ են համարվում սույն հաշվետվության 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ աղյուսակներում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները: Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության աղյուսակներում լրացվում են ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակների, որտեղ լրացվում են սկզբնական գործարքի համապատասխանաբար «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը»), այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել:

3) Սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով կնքվել են գործարքները, իսկ թվերը ներկայացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:

4) Սույն կետով նախատեսված հաշվետվությունը բաղկացած է 6 աղյուսակից, որոնց սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

ա. ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

բ. ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է արժեթղթի կոդը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրո-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

նական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (հայտնի լինելու դեպքում): Տարբերակիչ ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

գ. ***«Թողարկողի ֆիրմային անվանումը գտնվելու վայրը»*** սյունակը լրացվում է արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (բնակության վայր): Սույն ենթակետով նախատեսված սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

դ. ***«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:

ե. ***«Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է ոչ ծավալային արժեթղթերի դեպքում միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված տարեկան եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (մասնավորապես՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ արժեթղթերի համար և այլն): Ընդ որում, տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կնքման (գործարքի պայմանների փոփոխության) օրվա դրությամբ:

զ. ***«Գործարքի կնքման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:

է. ***«Փոփոխված գործարքի ամսաթիվը»*** սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին ցանկացած ձևով համաձայնություն ձեռքբերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:

ը. ***«Միջնորդը»*** սյունակը լրացման ենթակա է միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:

թ. ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված» կամ «այլ»: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված», արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված»», երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված», իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է «այլ»:

ժ. ***«Գործարքի նույնականացուցիչ համարը»*** սյունակում նշվում է բանկի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար:

ժա. ***«Գործարքի մյուս կողմը»*** սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմ հանդիսացող անձին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, դրա բացակայության դեպքում նշվում է այդ կողմի ռեզիդենտությունը՝ կատարելով «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» նշումը: Ընդ որում, եթե գործարքի մյուս կողմ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարքը կնքել է հաճախորդի հաշվին, ապա գործարքի մյուս կողմ է համարվում ոչ թե տվյալ հաճախորդը, այլ այդ հաճախորդի հաշվին գործարք կնքող ներդրումային ծառայություններ մատուցող անձը:

5) Ի լրումն վերոհիշյալ լրացման կանոնների՝ հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի համար նախատեսվում են լրացման լրացուցիչ կանոններ:

6) Հաշվետվության ***«Հաշվետու անձի կողմից կնքված արժեթղթերի առուվաճառքի գործարքների վերաբերյալ»*** 1-ին աղյուսակում լրացվում են հաշվետու անձանց կողմից արժեթղթերի առքի ու

վաճառքի գործարքների կնքման վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

ա. ***«Գործարքի տեսակը առք (վաճառք)»*** սյունակում լրացվում է «առք» կամ «վաճառք»՝ կախված հաշվետու անձի տեսանկյունից գործարքը առք է, թե՝ վաճառք:

բ. ***«Քանակը»*** սյունակում լրացվում է գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

գ. ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առքի (վաճառքի) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

դ. ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

7) ***«Հաշվետու անձի կողմից կնքված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների, գործարքների վերաբերյալ»*** 2-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու անձի կողմից կնքված և (կամ) փոփոխված ռեպո (հակադարձ ռեպո), ***այդ թվում՝ լոմբարդային ռեպոների,*** գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

ա. ***«Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)»*** սյունակում նշվում է՝ հաշվետու անձի տեսանկյունից գործարքը ռեպո է, թե հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք:

բ. ***«Քանակը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո «հակադարձ ռեպո» գործարքների կնքման դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

գ. ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:

դ. ***«Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

8) ***«Հաշվետու անձի կողմից իրականացված Հայաստանի Հանրապետության միջբանկային վարկային գործարքների վերաբերյալ»*** 3-րդ աղյուսակում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում հաշվետու բանկի կողմից կնքված վարկային պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, ընդ որում, լրացվում են միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կնքված միջբանկային վարկերի վերաբերյալ գործարքների մասին տվյալները: 3-րդ աղյուսակում ներկայացվում է տեղեկատվություն միայն կարգավորվող շուկայից դուրս կնքված գործարքների վերաբերյալ: Կարգավորվող շուկայում կնքվող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը 3-րդ աղյուսակում չի արտացոլվում:

9) Սույն կետում նախատեսված հաշվետվության 3-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

ա. ***«Գործարքի տեսակը (ներգրավման/տրամադրման)»*** սյունակում նշվում է՝ հաշվետու բանկի տեսանկյունից գործարքը միջբանկային վարկի ներգրավման գործարք է, թե տրամադրման:

բ. ***«Գործարքի գումարը»*** սյունակում լրացվում է պայմանագրով նախատեսված վարկի գումարը հազար միավորներով՝ ըստ նախորդ սյունակում նշված արժույթների: Եթե միևնույն վարկային պայմանագրով նախատեսված է վարկի տրամադրում տարբեր արժույթներով կամ տարբեր տոկոսադրույքներով, ապա այդ վարկերը պետք է ցույց տրվեն առանձին տողերով:

գ. ***«Տարեկան տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է տրամադրված/ներգրավված վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը՝ ըստ կնքված վարկային պայմանագրի:

դ. ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է միջբանկային վարկերի վերաբերյալ գործարքի կնքման ժամը: Փոփոխված գործարքների ներկայացման դեպքում սույն սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ժամը: Ընդ որում, գործարքի կնքման ժամը նշվում է հետևյալ կերպ. ժամ:րոպե:վայրկյան, օրինակ՝ 13:50:55:

ե. ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է կնքված միջբանկային վարկի գործարքի կատարման ամսաթիվը՝ հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/08): Եթե գործարքի պայմանագրով նախատեսված է գործարքի կատարում մի քանի փուլով՝ ապա գոր-

ծարքի յուրաքանչյուր փուլ պետք է լրացվի առանձին տողով՝ համաձայն պայմանագրով նախատեսված կատարման ամսաթվի:

զ. ***«Գործարքի մարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է հաշվետու բանկի կողմից տրամադրված/ներգրավված վարկի մարման ամսաթիվը՝ ըստ վարկային պայմանագրի, ընդ որում, ամսաթիվը լրացվում է հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/08):

10) ***«Փոխարժեքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ»*** 4-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու բանկի կողմից կնքված փոխարժեքային սվոպ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

11) ***«Արժութային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ»*** 5-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու բանկի կողմից կնքված արժութային սվոպ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

12) ***«Տոկոսադրույքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ»*** 6-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ընթացքում հաշվետու բանկի կողմից կնքված տոկոսադրույքային սվոպ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

13) Սույն հաշվետվության իմաստով, ֆորվարդի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել հետևյալ սկզբունքով.

ա. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը հայկական դրամ է, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արժույթը, որի դիմաց տրամադրվում է հայկական դրամը,

բ. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը ԱՄՆ դոլար է, իսկ մյուսը՝ հայկական դրամից տարբեր արտարժույթ, ապա ԱՄՆ դոլարն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

գ. եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը եվրո է, իսկ մյուսը՝ հայկական դրամից և ԱՄՆ դոլարից տարբեր արտարժույթ, ապա եվրոն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

դ. եթե ֆորվարդով փոխանակվում են հայկական դրամից, ԱՄՆ դոլարից և եվրոյից տարբեր արժույթներ, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արտարժույթը, որի՝ ֆորվարդ պայմանագրով համաձայնեցված ծավալի հարաբերությունը մյուս արտարժույթի ֆորվարդով համաձայնեցված ծավալին ստացվում է 1-ից մեծ:

14) Սույն հաշվետվության 4-րդ և 5-րդ աղյուսակների սվոպի (սվոպ գործարքի) հիմքում ընկած արժույթը որոշվում է 13-րդ ենթակետում սահմանված սկզբունքով: Սվոպի հիմքում ընկած արժույթը որոշելիս երկու արժույթների ծավալների հարաբերության որոշման համար հիմք են ընդունվում սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալները: 6-րդ աղյուսակի համաձայն՝ սվոպի հիմքում ընկած արժույթը տոկոսային վճարումների հաշվարկման համար հիմք հանդիսացող դրամական միջոցների արժույթն է:

15) Թիվ 32 հաշվետվության 4-րդ, 5-րդ և 6-րդ աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

ա. ***«Վճարվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է բանկի կողմից վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):

բ. ***«Ստացվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»*** սյունակում լրացվում է բանկին վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):

գ. ***«Գործարքի տեսակը (ներգրավման սվոպ/տրամադրման սվոպ)»*** սյունակում սվոպի հիմքում ընկած արժույթի ներգրավման դեպքում լրացվում է «ներգրավման սվոպ», իսկ սվոպի հիմքում ընկած արժույթի տրամադրման դեպքում՝ «տրամադրման սվոպ»:

դ. ***«Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի «Սվոպի հիմքում ընկած արժույթի ծավալը» ենթասյունակում լրացվում է սփոթ գործարքի ընթացքում սվոպի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոպի հիմքում ընկած արժույթով), իսկ «Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը» ենթասյունակում՝ սվոպի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով):

ե. ***«Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի «Սվոպի հիմքում ընկած արժույթի ծավալը» ենթասյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի ընթացքում սվոպի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոպի հիմքում ընկած արժույթով), իսկ «Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը» ենթասյունակում՝ սվոպի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով):

զ. ***«Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է սփոթ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

է. ***«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:»:

2) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 32 հաշվետվությունում՝

ա. առաջին աղյուսակի «Նշումներ» բառը փոխարինել «Միջնորդը» բառով,

բ. երկրորդ աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է),

գ. չորրորդ աղյուսակում «Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին (իր հաշվին և իր անունից) փոխարժեքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ» բառերը փոխարինել «Փոխարժեքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ» բառերով,

դ. հինգերորդ աղյուսակում «Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին (իր հաշվին և իր անունից) արժութային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ» բառերը փոխարինել «Արժութային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ» բառերով,

ե. վեցերորդ աղյուսակում «Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին (իր հաշվին և իր անունից) տոկոսադրույքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ» բառերը փոխարինել «Տոկոսադրույքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ» բառերով,

զ. չորրորդ, հինգերորդ և վեցերորդ աղյուսակները լրացնել «Միջնորդը» սյունակներով,

է. չորրորդ, հինգերորդ և վեցերորդ աղյուսակներից «Ում հաշվին է գործարքը կնքվել» սյունակները հանել,

ը. չորրորդ, հինգերորդ և վեցերորդ աղյուսակներից «Ում անունից է գործարքը կնքվել» սյունակները հանել:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N295-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 295-Ն որոշմամբ

Աղյուսակ 2. Հաշվետու անձի կողմից կնքված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ

Հաշվետու անձի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալը անվանական արժեքով	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը	Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի ծարման ամսաթիվը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Միջնորդը
1																
2																
3																
4																
5																
6																
7																
8																
9																
10																
11																
12																
13																
14																
15																
16																
17																
...																
40																

Հաշվետու անձի գործադիր տնօրեն _____

Կ. Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել վարկային կազմակերպությունների հաշվետվության լրացման կարգը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (այսուհետև՝ Կանոնակարգ 15) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 15-ի 20.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20.2. Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետերում ընդգրկված աղյուսակներում նշված թիվ 32 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակներից, որոնք լրացվում են սույն կետով սահմանված կարգով: Հաշվետու վարկային կազմակերպությունները սույն կետով նախատեսված հաշվետվությունը չեն ներկայացնում ոչ օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով կնքված գործարքների և մարման գործարքների համար:

1) Սույն կետով նախատեսված հաշվետվությունում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ն կնքված գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից):

2) Սույն հաշվետվության իմաստով գործարքների պայմաններում փոփոխություններ են համարվում սույն հաշվետվության 2-րդ աղյուսակում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները: Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում է ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակների, որտեղ լրացվում են առաջնային գործարքի համապատասխանաբար «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը», այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել:

3) Սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով կնքվել են գործարքները, իսկ թվերը ներկայացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:

4) Սույն կետով նախատեսված հաշվետվության աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ ընդհանուր կանոններին համապատասխան.

ա. ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում: Սույն ենթակետով նախատեսված սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

բ. ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում նշվում է ISIN կոդը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (հայտնի լինելու դեպքում): Տարբերակիչ ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

գ. ***«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»*** սյունակը լրացվում է արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (բնակության վայր): Սույն ենթակետով նախատեսված սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

դ. ***«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է միայն արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:

ե. ***«Գործարքի արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:

զ. ***«Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է ոչ ծավալային արժեթղթերի դեպքում միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված տարեկան եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (մասնավորապես՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ արժեթղթերի համար և այլն): Ընդ որում, տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կնքման (գործարքի պայմանների փոփոխության) օրվա դրությամբ:

է. ***«Գործարքի կնքման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:

ը. ***«Գործարքի մյուս կողմը»*** սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմ հանդիսացող սուբյեկտին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, դրա բացակայության դեպքում նշվում է այդ կողմի ռեզիդենտությունը՝ կատարելով «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» նշումը: Ընդ որում, եթե գործարքի մյուս կողմ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարքը կնքել է հաճախորդի հաշվին, ապա գործարքի մյուս կողմ է համարվում ոչ թե տվյալ հաճախորդը, այլ այդ հաճախորդի հաշվին գործարք կնքող ներդրումային ծառայություններ մատուցող անձը:

թ. ***«Միջնորդը»*** սյունակը լրացման ենթակա է միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:

5) Ի լրումն սույն կետով սահմանված լրացման կանոնների՝ սույն կետով նախատեսված հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի համար նախատեսվում են լրացման լրացուցիչ կանոններ:

6*) ***«Հաշվետու անձի կողմից կնքված արժեթղթերի առուվաճառքի գործարքների վերաբերյալ»*** 1-ին աղյուսակում լրացվում են հաշվետու անձանց կողմից արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների կնքման վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն լրացման հետևյալ կանոնների.

ա. ***«Գործարքի տեսակը (առք/վաճառք)»*** սյունակում լրացվում է «առք» կամ «վաճառք»՝ կախված հաշվետու անձի տեսանկյունից գործարքն առք է, թե՝ վաճառք:

բ. ***«Քանակը»*** սյունակում լրացվում է գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

գ. ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առքի (վաճառքի) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

ե. ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

7*) ***«Հաշվետու անձի կողմից կնքված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ»*** 2-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու անձի կողմից կնքված և (կամ) փոփոխված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն լրացման հետևյալ կանոնների.

** Պաշտոնական հրապարակման մեջ տեխնիկական պատճառներով խախտվել է համարակալումը:*

ա. ***«Գործարքի նույնականացուցիչ համարը»*** սյունակում նշվում է հաշվետու անձի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար:

բ. ***«Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)»*** սյունակում նշվում է՝ հաշվետու անձի տեսանկյունից գործարքը ռեպո է, թե՝ հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք:

դ. ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված» կամ «այլ» տարբերակներից մեկը: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված» տարբերակը, արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված» տարբերակը, երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված» տարբերակը, իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է «այլ» տարբերակը:

ե. ***«Քանակը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

զ. ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:

է. ***«Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

ը. ***«Փոփոխված գործարքի ամսաթիվը»*** սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին ցանկացած ձևով համաձայնություն ձեռքբերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:»:

2) Կանոնակարգ 15-ի 31.1-րդ կետի «, կամ իրականացված գործառնությունների ծավալը չի գերազանցել 3 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը» բառերը հանել:

3) Կանոնակարգ 15-ի Չև թիվ 32 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N296-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 296-Ն որոշմամբ

ՀԶ թիվ 32
(օրական)

Հաշվետվություն
արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ

Աղյուսակ 1. Հաշվետու անձի կողմից կնքված արժեթղթերի առուվաճառքի գործարքների վերաբերյալ

Հաշվետու անձի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (առեւտր/հակադարձ ռեպո)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալը անվանական արժեքով	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Տարեկան զեղչ (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը	Ռեպո/ հ.ռեպո գործարքի մարման ամսաթիվը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Միջնորդը
1																
2																
3																
4																
5																
6																
7																
8																
9																
10																
11																
12																
13																
14																
15																
16																
17																
18																
19																
20																
21																
22																
23																
24																
25																
....																
39																
40																

Հաշվետու անձի գործադիր տնօրեն _____

Կ. Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 296-Ն որոշմամբ

Աղյուսակ 2. Հաշվետու անձի կողմից կնքված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ

Հաշվետու անձի անվանումը ______________________

Հաշվետու օր ___________________________

N	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը	Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման ամսաթիվը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Միջնորդը
1																
2																
3																
4																
5																
6																
7																
8																
9																
10																
11																
12																
13																
14																
15																
16																
17																
18																
19																
20																
21																
22																
23																
24																
25																
26																
27																
28																
29																
30																
31																
32																
33																
34																
35																
36																
37																
38																
39																
40																

Հաշվետու անձի գործադիր տնօրեն ______________________

Կ. Տ.

Գլխավոր հաշվապահ ______________________

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել ապահովագրական ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերլուծական և վերահսկողական գործընթացների արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/04) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/04-ը լրացնել 3.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. «Կարգավորող շուկա» և «կարգավորող շուկայի օպերատոր» հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակությունը:»:

2) Կանոնակարգ 3/04-ի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Հաշվետվություններում նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/2012): Ընդ որում, հաշվետվությունները կազմելիս մեկ տարին պետք է հասկանալ 365 կամ 366 օր, այսինքն՝ օրացուցային օրերի քանակը (եթե կոնկրետ հաշվետվության մեկնաբանությունները հստակ չեն սահմանում տվյալ հաշվետվության իմաստով մեկ տարվա օրերի այլ քանակ):»:

3) Կանոնակարգ 3/04-ի 13-րդ կետի «հունվարի 30-ը» բառերը փոխարինել «հունվարի 31-ը» բառերով:

4) Կանոնակարգ 3/04-ի 14-րդ կետը «դրամներով» բառից հետո լրացնել «, բացառությամբ թիվ 20 հաշվետվության» բառերով:

5) Կանոնակարգ 3/04-ի 27-րդ կետից «և էկոնոմիկայի» բառերը հանել:

6) Կանոնակարգ 3/04-ի 60-րդ կետում.

ա.«3.1-3.3 տողերում» բառերը փոխարինել «3.1-3.4 տողերում» բառերով,

բ. «ակտիվների և պարտավորությունների» բառերից հետո լրացնել «, վերաապահովագրության փոխանցած ռիսկերի գծով վերաապահովագրական գումարների» բառերով:

7) Կանոնակարգ 3/04-ի 68-րդ կետը «առավելագույն հարաբերակցությունը» բառերից հետո լրացնել «(ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալ x 10%)» բառերով:

8) Կանոնակարգ 3/04-ի 111-րդ կետի «ստացվելիք գումարները» բառերը փոխարինել «ստացվելիք ապահովագրավճարները» բառերով:

9) Կանոնակարգ 3/04-ի 138-րդ կետի «գլուխ 3-ի համաձայն» բառերը փոխարինել «գլուխ 3-ի» բառերով:

10) Կանոնակարգ 3/04-ի 155-րդ կետում.

ա. «Կոնտրակտ» բառը փոխարինել «Կոնտր» բառով,

բ. «(REINS_CONTRACT_TYPE_STOCK)» բառերը փոխարինել «(REINS_CONTR_TYPE_STOCK)» բառերով:

11) Կանոնակարգ 3/04-ի 157-րդ կետում «Կոնտրակտ» բառը փոխարինել «Կոնտր» բառով:

12) Կանոնակարգ 3/04-ի 172-րդ կետը լրացնել 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀՊՏ N31 (444), 24.12.2012):

«7) NM (էնէմ) - Հաշվետու ժամանակաշրջանում վերաապահովագրված և հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ապահովագրության պայմանագրեր:»:

13) Կանոնակարգ 3/04-ի 191-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«191. Թիվ 14 հաշվետվության մեջ արտարժույթով կատարված գործառնությունները լրացվում են համապատասխան սյունակում՝ դրամական արտահայտությամբ:»:

14) Կանոնակարգ 3/04-ի 193-րդ կետի «պայմանագրերով» բառը փոխարինել «պայմանագրերի գծով» բառերով:

15) Կանոնակարգ 3/04-ի 198-րդ կետի «վերաապահովագրողների գծով» բառերը փոխարինել «վերաապահովագրողներից՝ ըստ ապահովագրության դասերի» բառերով:

16) Կանոնակարգ 3/04-ի 199-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«199. Թիվ 14 հաշվետվության «Վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով հաշվեգրված հատուցումներ ոչ ռեզիդենտներին» սյունակում ցույց են տրվում հաշվետու ժամանակաշրջանում վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով հաշվեգրված հատուցումները ոչ ռեզիդենտներին:»:

17) Կանոնակարգ 3/04-ի 205-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ա. հանել «(ՀՀ դրամ)» բառերը,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

բ. «Միավոր արժեթղթի գինը» սյունակից հետո լրացնել նոր սյունակ «Արժույթի ISO կոդը» վերնագրով:

13) Կանոնակարգ 5/04-ի հավելված 7-ում.

ա. հանել «(ՀՀ դրամ)» բառերը,

բ. «Նվիրատվության արդյունքում փոխանցված արժեթղթերի վերաբերյալ» սյունակում և «Ժառանգության արդյունքում փոխանցված արժեթղթերի վերաբերյալ» սյունակում լրացնել նոր ենթասյունակ՝ «Արժույթի ISO կոդը» վերնագրով:

14) Կանոնակարգ 5/04-ի հավելված 10-ը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N300-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 197-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով վերացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ անհարկի տեղեկատվության ներկայացումը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 1-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հաստատելու մասին թիվ 197-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 2-րդ կետի աղյուսակի 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) Հավելվածի 8-րդ կետից հանել «, բացառությամբ թիվ 11 հաշվետվության, որը Կենտրոնական բանկ է ներկայացվում մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը» բառերը:

3) Հավելվածի Գլուխ 10-ն ուժը կորցրած ճանաչել:

4) Հավելվածի Հավելված 8-ը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N301-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերը, պաշտպանել օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ավանդատուների շահերը և սահմանափակել օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ռիսկայնությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, 5-րդ գլուխը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետը լրացնել նոր 1.7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.7. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ավանդներ ընդունելու համար լրացուցիչ պայմանները»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):»:

2. Որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 11.1-րդ կետը «նվազագույն չափերը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի համար)» բառերով,
2) Կանոնակարգ 2-ի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի համար սահմանվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ավանդներ ընդունելու համար լրացուցիչ պայմանները սահմանվում են՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի:»,

3) Կանոնակարգ 2-ը լրացնել 34.9.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«34.9.1. Մեկ աշխատանքային օրանոց (օվերնայթ) վարկային պայմանագրերով տրամադրված միջոցներ, եթե վարկառուն հանդիսանում է ոչ ռեզիդենտ բանկ, որն ունի Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման ԲԲԲ+(Բաա1) և ԲԲԲ+(Բաա1)-ից բարձր վարկանիշ՝ առաջնորդվելով սույն կանոնակարգի 56.3-րդ կետով սահմանված սկզբունքներով: Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում սույն կետում նշված միջոցները կարող են ընդգրկվել սույն կանոնակարգի 34.1-34.9 կետերում նշված միջոցների՝ բարձր իրացվելի ակտիվներում ընդգրկվող գումարների հանրագումարի առավելագույնը 15%-ի չափով:»,

4) Կանոնակարգ 2-ի 37-րդ, 38-րդ, 42-րդ, 43-րդ կետերում «ռեպո համաձայնագրերի,» բառերը փոխարինել «ռեպո համաձայնագրերի (համաձայն սույն կանոնակարգի 47-րդ կետի), ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի (համաձայն սույն կանոնակարգի 48.2 կետի),» բառերով,

5) Կանոնակարգ 2-ի 37-րդ, 38-րդ, 42-րդ, 43-րդ կետերում «գնման և վաճառքի արժութային սվոպերի գծով առաջացած պահանջների» բառերը փոխարինել «ածանցյալ գործիքների գծով առաջացող պահանջների» բառերով,

6) Կանոնակարգ 2-ի 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Ն3[1], Ն3[2], Ն4[1] և Ն4[2] նորմատիվների հաշվարկում ռեպո համաձայնագրերը համարվում են պահանջ ռեպո համաձայնագրի կողմ հանդիսացող գործընկերոջ նկատմամբ՝ ռեպո համաձայնա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.12.2012 թ. (ՀՀՊՏ N31 (444), 24.12.2012):

գրի հաշվեկշռային արժեքի չափով, իսկ սույն կանոնակարգի հավելված 3-ի 3-րդ գլխով սահմանված կարգով ՎՌՁՄ կիրառելու դեպքում՝ ռեպո համաձայնագրի չապահովված մասի արժեքի չափով:»,

7) Կանոնակարգ 2-ի 48-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«48. Սույն կանոնակարգի 37-րդ, 38-րդ, 42-րդ և 43-րդ կետերում նշված ածանցյալ գործիքների գծով առաջացող պահանջները Ն3^1, Ն3^2, Ն4^1 և Ն4^2 նորմատիվների հաշվարկում ընդգրկվում են միայն ածանցյալ գործիքների գծով հաշվեկշռի ակտիվային մասում արտացոլված գումարների չափով՝ բացառությամբ այն դեպքի, երբ բանկը սվոպ գործարքի արդյունքում ստացել է երկրորդ խմբի արտարժույթ (բացառությամբ՝ ռուսական ռուբլու), որի դեպքում Ն3^1, Ն3^2, Ն4^1 և Ն4^2 նորմատիվների հաշվարկում սվոպն ընդգրկվում է բանկի հետհաշվեկշռում արտացոլված ստացման ենթակա ամբողջ գումարի չափով:»,

8) Կանոնակարգ 2-ը լրացնել 48.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«48.2. Ն3^1,Ն3^2,Ն4^1 և Ն4^2 նորմատիվների հաշվարկում ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը և փոխառությամբ տրամադրված արժեթղթերը համարվում են պահանջ՝

1) տվյալ արժեթղթի թողարկողի նկատմամբ՝ արժեթղթի հաշվեկշռային արժեքի չափով, և

2) ռեպո համաձայնագրի կողմ հանդիսացող գործընկերոջ (փոխառուի) նկատմամբ՝ սույն կանոնակարգի հավելված 3-ի 22.2 կետով սահմանված չապահովված մասի արժեքի չափով: Ընդ որում, եթե բանկը ռեպո համաձայնագրով ձեռք է բերել երկրորդ խմբի արտարժույթ (բացառությամբ՝ ռուսական ռուբլու), ապա վերջինս Ն3^1, Ն3^2, Ն4^1 և Ն4^2 նորմատիվների հաշվարկի առումով չի դիտվում որպես ռեպո համաձայնագրի ապահովվածություն:»,

9) Կանոնակարգ 2-ի 49-րդ կետը վերջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Սույն կետը չի տարածվում ռեպո համաձայնագրերի, ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերի և փոխառությամբ տրամադրված արժեթղթերի վրա:»,

10) Կանոնակարգ 2-ի 53-րդ կետում «վաճառքի արժութային սվոպի,» բառերը հանել,

11) Կանոնակարգ 2-ի 53-րդ կետը վերջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Սույն կետի իմաստով՝ սվոպով ներգրավված միջոցները չեն համարվում ներգրավված միջոց:»,

12) Կանոնակարգ 2-ի 56.2 կետում «(բացառությամբ՝ արժութային սվոպի)» բառերը հանել,

13) Կանոնակարգ 2-ի 56.2 կետի 3-րդ ենթակետում «բանկերի» բառը փոխարինել «ֆինանսական կազմակերպությունների» բառերով,

14) Կանոնակարգ 2-ի 56.2 կետը լրացնել 4-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) Արժութային և փոխարժեքային սվոպերը:

Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկում ածանցյալ գործիքներն ընդգրկվում են միայն հետհաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ՝ ածանցյալ գործիքի գծով հետհաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրված տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան):»,

15) Կանոնակարգ 2-ի 56.4 կետում՝

ա. «(բացառությամբ՝ արժութային սվոպի)» բառերը հանել,

բ. «1-3» թվերը փոխարինել «1-4» թվերով,

16) Կանոնակարգ 2-ը լրացնել 61.1, 61.2 և 61.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«61.1. Սույն կանոնակարգի իմաստով՝ ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային մնացորդ (արժեք) է համարվում նրա գծով հաշվեկշռում հաշվեգրված գումարը՝ ներառյալ տոկոսները, տույժերը և տուգանքները՝ նվազեցրած նրա գծով ձևավորված պահուստը, կուտակված ամորտիզացիան և արժեզրկումը, եթե այդպիսիք կան:

61.2. Սույն կանոնակարգի իմաստով՝ արժութային սվոպը համաձայնություն է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք), ինչպես նաև պայմանագրով նախապես սահմանված տոկոսագումարներ փոխանակելու պայմանով:»:

61.3. Սույն կանոնակարգի իմաստով՝ փոխարժեքային սվոպը արժութային սվոպի պարզ տեսակ է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք) պայմանով:»,

17) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՎՌ = Ա_1*Ռ_1 + Ա_2*Ռ_2 +\ldots+ Ա_n*Ռ_n, \text{ որտեղ՝}$$

$Ա_1$, $Ա_2$, ..., $Ա_n$-ը բանկի ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալից), հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների հանրագումարներն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների: Ակտիվները ներառվում են իրենց հաշվեկշռային արժեքով, իսկ սույն հավելվածով սահմանված կարգով ՎՌՀՄ կիրառելու դեպքում՝ ՎՌՀՄ ճշգրտված արժեքով: Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են սույն հավելվածի 12-րդ կետով սահմանված չափով:

$Ռ_1$, $Ռ_2$, ..., $Ռ_n$-ը համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներն են:»,

18) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6-րդ կետի աղյուսակ 1-ից հանել բոլոր «և դրանց գծով հաշվարկված տոկոսներ» և «, դրանց գծով հաշվարկված տոկոսներ» բառերը,

19) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6-րդ կետի աղյուսակ 1-ի 6.4, 6.10, 6.11.1 և 6.12 կետերից հանել «(ներառյալ՝ ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը)» բառերը,

20) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6-րդ կետի աղյուսակ 1-ի 6.8, 6.9, 6.31.1, 6.31.2 և 6.32 կետերն ուժը կորցրած ճանաչել,

21) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6-րդ կետի աղյուսակ 1-ի 6.19 կետից հանել «վարկանիշ չունեցող 100» և «վարկանիշ չունեցող 150» բառերը,

22) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6-րդ կետում աղյուսակ 1-ի 6.22 կետում «50 տոկոս» բառը փոխարինել «50/75 տոկոս» բառերով,

23) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6-րդ կետի աղյուսակ 1-ը լրացնել 6.32, 6.33, 6.34, 6.35, 6.36, 6.37, 6.38 և 6.39 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

6.32. Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ (999 հարգից ոչ պակաս)	-	50
6.33. Ճանապարհին գտնվող ոսկու ստանդարտացված ձուլակտորներ (999 հարգից ոչ պակաս)	-	75
6.34. 6.1.1 կետում նշված ակտիվներից տարբեր այլ ակտիվներ երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու)	-	150
6.35. Պահանջներ ներդրումային ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի առկայության դեպքում)	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 100 /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /Բ+/Բ1/-ից ցածր 150 /Ֆ1+, Ֆ1/Պ-1/Ա-1+,Ա-1/ 20 /Ֆ2/Պ-2/Ա-2/ 50 /Ֆ3 և ցածր/Պ-3/Ա-3-ից ցածր/ 100	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 100 /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /Բ+/Բ1/-ից ցածր 150 /Ֆ1+, Ֆ1/Պ-1/Ա-1+,Ա-1/ 20 /Ֆ2/Պ-2/Ա-2/ 50 /Ֆ3 և ցածր/Պ-3/Ա-3-ից ցածր/ 100
6.36. Պահանջներ ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	Համաձայն սույն հավելվածի 9.2 կետի	Համաձայն սույն հավելվածի 9.2 կետի
6.37. Պահանջներ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	150	150
6.38. Պահանջներ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	Համաձայն սույն հավելվածի 9.3 կետի	Համաձայն սույն հավելվածի 9.3 կետի
6.39. Բոլոր այն հաշվեկշռային ակտիվները, որոնք ընդգրկված չեն սույն աղյուսակի այլ կետերում	100	150

24) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված պահանջները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռային արժեքով:»,

25) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 8-րդ կետից հանել «(բացառությամբ՝ արժութային սվոպի)» և «ամբողջ» բառերը,

26) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

27) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ը լրացնել 9.1, 9.2 և 9.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի 6.37 կետում նշված բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված ֆոնդերը՝ բացառությամբ ֆոնդերի ֆոնդի, անշարժ գույքի ֆոնդի, ինչպես

նաև ոչ հրապարակային ֆոնդերը: Սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի 6.36 կետում նշված ոչ բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում բարձր ռիսկային ֆոնդեր չհամարվող ֆոնդերը:»:

9.2. Սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի 6.36 կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշելու համար պետք է հաշվարկել տվյալ ֆոնդի ակտիվներին տրված ռիսկի կշիռների միջին կշռված մեծությունը, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի կառավարչի կողմից հաշվարկման պահի դրությամբ բացահայտված (տրամադրված) ֆոնդի ակտիվների ընդհանուր ծավալի (խմբավորված ըստ ռիսկի կշիռների) վերաբերյալ տեղեկատվությունը, եթե տվյալ տեղեկատվությունը բացահայտվել (տրամադրվել) է ոչ շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված տեղեկատվությունը բացահայտվել է (տրամադրվել է) ավելի շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում կամ չի բացահայտվել (տրամադրվել), ապա սույն հավելվածի աղյուսակ 1-ի 6.36 կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռն ընդունվում է 100%:

9.3. Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 6.38 կետում նշված վարկանիշ չունեցող օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշվում է աղյուսակ 1.1-ի համաձայն: Ընդ որում, աղյուսակ 1.1-ի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված ֆոնդերը պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 337-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները» կանոնակարգ 10/10-ի 9-րդ կետով սահմանված պահանջները:

Աղյուսակ 1.1

	Ֆոնդի տեսակը	Ռիսկի կշիռը
	Հրապարակային ստանդարտ ֆոնդեր	
1.	Դրամական շուկայի ֆոնդեր	20%
2.	Ստանդարտ ֆոնդեր (տարատեսականացված)	50%
	Հրապարակային մասնագիտացված ֆոնդեր	
3.	Ֆոնդերի ֆոնդ, որի ակտիվները ներդրվում են միայն հրապարակային ստանդարտ տարատեսականացված ֆոնդերում	50%
4.	Անշարժ գույքի ֆոնդ (տարատեսականացված)	75%
5.	Այլ մասնագիտացված ֆոնդեր	150%
	1-5-րդ կետերում չնշված ֆոնդեր	
6.	1-5-րդ կետերում չնշված ֆոնդեր	150%

28) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 11-րդ կետը լրացնել 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու) ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:

4) Ռեպո համաձայնագրերը, ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը, փոխառությամբ տրամադրված արժեթղթերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են համաձայն սույն հավելվածի 3-րդ գլխի պահանջների:

5) Աղյուսակ 1-ի 6.31 կետում նշված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:»,

29) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 12-րդ կետի 2-րդ պարբերությունը «հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններն ու հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնություններն են» բառերից հետո լրացնել «՝ հետհաշվեկշռում արտացոլված ամբողջ գումարի չափով» բառերով,

30) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 16-րդ կետի «ա» պարբերությունը «Հայաստանի Հանրապետության կառավարության, Կենտրոնական բանկի» բառերից հետո լրացնել «, շուկայի հիմնական մասնակիցների, սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակ 1-ի 6.6 կետում նշված կազմակերպությունների» բառերով,

31) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 16-րդ կետի «դ» պարբերությունը «գրավը փոխառուի կողմից թողարկված արժեթուղթ չէ և այլն),» բառերից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ երաշխավորություն տվողը Կենտրոնական բանկը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունն է, կամ գրավի առարկան հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ կամ Հայաստանի Հանրապետության գանձապետական պարտատոմս,» բառերով,

32) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. ՎՌՁՄ-ները չեն տարածվում ՎՌՁՄ-ին ենթակա այն պահանջների նկատմամբ, որոնք դասակարգվել են որպես ոչ ստանդարտ և կասկածելի վարկեր և դեբիտորական պարտքեր, միջին ռիսկային և ոչ բարձր ռիսկային արժեթղթեր:»,

33) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ը լրացնել 22.1 և 22.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«22.1. Ռեպո համաձայնագրերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

ՌՀԱ = Առավելագույն [ԴՄՀԴՌ; ՊՀ], որտեղ՝

ՌՀԱ – ռեպո համաձայնագրի և դրանց գծով հաշվարկված տոկոսների՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ԴՄ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների արժեքն է,

ԴՌ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների ռիսկի կշիռն է՝ համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի:

ՊՀ – սույն գլխով սահմանված կարգով և դեպքերում ՎՌՁՄ կիրառման արդյունքում հաշվարկված ռեպո համաձայնագրի՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է, իսկ ՎՌՁՄ չկիրառելու դեպքում՝ ռեպո համաձայնագրի հաշվեկշռային արժեքի և ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշռի (համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը) արտադրյալն է:

22.2. Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

ՌՎԱ = Առավելագույն [ՉԱ X ԳՌ; ԱՀ X ԹՌ], որտեղ՝

ՌՎԱ – ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ՉԱ – ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի չապահովված մասն է, որը որոշվում է որպես՝

ա. ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային ճշգրտված արժեքի (կիրառելով սույն գլխով սահմանված արժեքի տատանման գործակիցները), և

բ. ստացված դրամական միջոցների ու դրանց գծով վճարվելիք գումարների հանրագումարի դրական տարբերություն,

ԳՌ – ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը,

ԱՀ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային արժեքը,

ԹՌ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի թողարկողի (գործիքի) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի:

Փոխառությամբ տրամադրված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են սույն կետով սահմանված կարգով:»,

34) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 23.2 կետը լրացնել «գ» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ) Հանդիսանում է սույն հավելվածի աղյուսակ 1-ի 6.6 կետում նշված կազմակերպություն:»,

35) Կանոնակարգ 2-ի հավելված 4-ի 6.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.2. Արտարժութային դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները միայն հետհաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ՝ դրանց գծով հետհաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրված տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան):»,

36) Կանոնակարգ 2-ի հավելված 4-ի 11-րդ կետի «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունները» բառերը փոխարինել «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները, փոխառությամբ տրամադրված արժեթղթերը, փոխառությամբ ստացված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները» բառերով,

37) Կանոնակարգ 2-ի հավելված 4-ի 19-րդ կետում «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունները» բառերը փոխարինել «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված կապիտալի գործիքների վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները, փոխառությամբ տրամադրված կապիտալի գործիքները, փոխառությամբ ստացված կապիտալի գործիքների վաճառքի արդյունքում ձևավորված պարտավորությունները,» բառերով,

38) Կանոնակարգ 2-ի հավելված 5-ի 6-րդ և 11-րդ կետերից հանել «արտասովոր ծախսերը/եկամուտները» բառերը,

39) Կանոնակարգ 2-ի հավելված 5-ի 7.1 կետից հանել «բաժանորդագրական գործունեություն» բառերը,

40) Կանոնակարգ 2-ի հավելված 5-ի 7.1 կետում «արժեթղթերի առաջնային տեղաբաշխում» բառերը փոխարինել «արժեթղթերի երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխում» բառերով,

41) Կանոնակարգ 2-ի հավելված 5-ի 7.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.4. ***Ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ (ՆՈՀԾ)***: Այս խմբում ընդգրկվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների գծով ձևավորված եկամուտները և ծախսերը՝ բացառությամբ արժեթղթերի երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխման և ֆինանսական ու ինվեստիցիոն խորհրդատվության ծառայությունների գծով ձևավորված եկամուտների և ծախսերի:»,

42) Հավելված 5-ի 8-րդ կետի Աղյուսակ 1-ում «Հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, բրոքերային և պահառուական գործունեություն *(ՀԲՊ)*» բառերը փոխարինել ***«Ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ (ՆՈՀԾ)»*** բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվան հաջորդող ամսվա 1-ին՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 32-րդ, 33-րդ, 36-րդ և 37-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման ընդունման օրվան հաջորդող վեցամսյա ժամկետին հաջորդող ամսվա 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 դեկտեմբերի 2012 թ., N325-Ն

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 325-Ն որոշման

Հավելված 8

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի
թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը,
բանկային գործունեության հիմնական տնտեսական
նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն հավելվածի իմաստով օտարերկրյա բանկի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) հետ կապված անձինք են համարվում.

1) Մասնաճյուղի ղեկավարները,
2) Մասնաճյուղի մայր բանկի ղեկավարները և նշանակալից մասնակիցները, դրանց հետ փոխկապակցված անձինք,
3) Մասնաճյուղի մայր բանկի հետ փոխկապակցված անձինք:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Մասնաճյուղերը պետք է բավարարեն հետևյալ պայմանները.

1) Մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի կողմից Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ առևտրային

բանկում՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի 14-րդ կետի «ժա» ենթակետի համաձայն՝ Մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի կողմից որոշակի սահմանափակող պայմաններով ներդրված միջոցների և Մասնաճյուղի չբաշխված շահույթի/վնասի (եկամուտների պահուստներ) հանրագումարի (այսուհետ՝ գործառնական կապիտալ) և ռիսկով կշռված ակտիվների գումարների նվազագույն հարաբերակցությունը (Պ1 պայման) կազմում է առնվազն 12 տոկոս:

2) Մասնաճյուղի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Պ2^1$ պայման) կազմում է.

ա. 15 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, մեկ անձից ներգրավում են ավանդ նվազագույնը 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով,

բ. 60 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք մեկ անձից ներգրավում են նաև 30 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթի մեծությունը չգերազանցող ավանդ:

3) Մասնաճյուղի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Պ2^{11}$ պայման) կազմում է.

ա. 4 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, մեկ անձից ներգրավում են ավանդ նվազագույնը 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով,

բ. 16 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք մեկ անձից ներգրավում են նաև 30 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթի մեծությունը չգերազանցող ավանդ:

4) Այն դեպքում, երբ երկրորդ խմբի որևէ արտարժույթով արտահայտված պարտավորություններն ամսվա միջին օրական հաշվարկով գերազանցում են Մասնաճյուղի ընդհանուր պարտավորությունների 5 տոկոսը, ապա յուրաքանչյուր այդպիսի երկրորդ խմբի արտարժույթի համար տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար հաշվարկվում է $Պ2^{12}$ պայման, որն իրենից ներկայացնում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը: $Պ2^{12}$ պայմանի նվազագույն մեծությունը սահմանվում է.

ա. 4 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, մեկ անձից ներգրավում են ավանդ նվազագույնը 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով,

բ. 16 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք մեկ անձից ներգրավում են նաև 30 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթի մեծությունը չգերազանցող ավանդ:

5) Մասնաճյուղի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Պ2^2$ պայման) կազմում է.

ա. 60 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, մեկ անձից ներգրավում են ավանդ նվազագույնը 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով,

բ. 100 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք մեկ անձից ներգրավում են նաև 30 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթի մեծությունը չգերազանցող ավանդ:

6) Մասնաճյուղի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Պ2^{21}$ պայման) սահմանվում է.

ա. 10 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, մեկ անձից ներգրավում են ավանդ նվազագույնը 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով,

բ. 100 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք մեկ անձից ներգրավում են նաև 30 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթի մեծությունը չգերազանցող ավանդ:

7) Այն դեպքում, երբ երկրորդ խմբի որևէ արտարժույթով արտահայտված պարտավորություններն ամսվա միջին օրական հաշվարկով գերազանցում են Մասնաճյուղի ընդհանուր պարտավորությու-

ների 5 տոկոսը, ապա յուրաքանչյուր այդպիսի երկրորդ խմբի արտարժույթի համար տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար հաշվարկվում է Պ2[22] պայման, որն իրենից ներկայացնում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցություն: Պ2[22] պայմանի նվազագույն մեծությունը սահմանվում է.

ա. 10 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, մեկ անձից ներգրավում են ավանդ նվազագույնը 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով,

բ. 100 տոկոս, այն Մասնաճյուղերի համար, որոնք մեկ անձից ներգրավում են նաև 30 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթի մեծությունը չգերազանցող ավանդ:

8) Մասնաճյուղի՝ մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Պ3[1] պայման) չպետք է գերազանցի Մասնաճյուղի գործառնական կապիտալի 20 տոկոսը:

9) Մասնաճյուղի՝ խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (Պ3[2] պայման) չպետք է գերազանցի Մասնաճյուղի գործառնական կապիտալի 500 տոկոսը:

10) Մասնաճյուղի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (Պ4[1] պայման) չպետք է գերազանցի Մասնաճյուղի գործառնական կապիտալի 5 տոկոսը:

11) Մասնաճյուղի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (Պ4[2] պայման) չպետք է գերազանցի Մասնաճյուղի գործառնական կապիտալի 20 տոկոսը:

12) Արտարժույթի տնօրինման սահմանափակման պայմանը բաղկացած է երկու տարրերից՝ համախառն արտարժութային դիրք և ըստ առանձին արտարժույթների դիրք, ընդ որում.

ա. արտարժութային համախառն դիրքի և Մասնաճյուղի գործառնական կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը կազմում է 10 տոկոս,

բ. ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և Մասնաճյուղի գործառնական կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը կազմում է 7 տոկոս:

13) Մասնաճյուղի պահանջը իր մայր բանկի նկատմամբ չի կարող գերազանցել Մասնաճյուղի ակտիվների և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներից ներգրավված միջոցների տարբերության մեծությունը (Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներից ներգրավված միջոցների արտահոսքի սահմանափակման պայման):

14) Մասնաճյուղը պետք է բավարարի Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափի նորմատիվը՝ համաձայն սույն կանոնակարգի 24-րդ և 24.1-րդ կետերի: Ընդ որում, եթե սույն կետի 1-ին ենթակետով սահմանված՝ Մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի կողմից որոշակի սահմանափակող պայմաններով ներդրված միջոցները ներդրված են Կենտրոնական բանկում, ապա այդ միջոցները ևս գումարվում են Մասնաճյուղի կողմից փաստացի պահուստավորված միջոցների գումարին:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

3. Մասնաճյուղի Պ1, Պ2[1], Պ2[11], Պ2[12], Պ2[2], Պ2[21], Պ2[22], Պ3[1], Պ3[2], Պ4[1], Պ4[2] պայմանները և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներից ներգրավված միջոցների արտահոսքի սահմանափակման պայմանը հաշվարկվում են ամսական, իսկ արտարժույթի տնօրինման սահմանափակման պայմանը՝ օրական կտրվածքով:

4. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներից ներգրավված միջոցների արտահոսքի սահմանափակման պայմանը հաշվարկում է միջին օրական հաշվարկով:

5. Պայմանների և չբաշխված շահույթի հաշվարկում վարկերի և դեբիտորական պարտքերի, ինչպես նաև ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստներն ընդգրկվում են, համապատասխանաբար, Կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» և Կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգին համապատասխան հաշվարկված գումարների չափով:

6. Մասնաճյուղի գործառնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը որոշվում է

$$Պ1 = \frac{Կ_{գործ}}{ՌԿԱ} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$Կ_{գործ}$ – Մասնաճյուղի գործառնական կապիտալն է՝ միջին օրական հաշվարկով,

ՌԿԱ – վարկային ռիսկի, շուկայական ռիսկի և գործառնական ռիսկի հանրագումարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՌԿԱ = ՎՌ + (25/3)*(ՇՌ + ԳՌ),$$

որտեղ.

ՎՌ – Մասնաճյուղի վարկային ռիսկն է՝ հաշվարկված սույն կանոնակարգի հավելված 3-ով սահմանված կարգի համաձայն,

ՇՌ – Մասնաճյուղի շուկայական ռիսկն է՝ հաշվարկված սույն կանոնակարգի հավելված 4-ով սահմանված կարգի համաձայն,

ԳՌ – Մասնաճյուղի գործառնական ռիսկն է՝ հաշվարկված սույն կանոնակարգի հավելված 5-ով սահմանված կարգի համաձայն:

7. Այն օրերին, երբ Մասնաճյուղի հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), միջին օրական տվյալների հաշվարկում ընդգրկվում են նախորդ օրվա տվյալները:

8. Մասնաճյուղի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը հաշվարկվում է՝

$$Պ2^1 = \frac{Աբի}{Ա_{ընդ}} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

Աբի - միջին օրական հաշվարկով բարձր իրացվելի ակտիվներն են ամսվա ընթացքում, որը որոշվում է՝

$$Աբի = \frac{(Աբի_1+Աբի_2+\ldots+Աբի_Ն)}{Ն} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$Աբի_1$, $Աբի_2$, …, $Աբի_Ն$ – Մասնաճյուղի բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է:

$Ա_{ընդ}$ – միջին օրական հաշվարկով ընդհանուր ակտիվներն են ամսվա ընթացքում, որը որոշվում է՝

$$Ա_{ընդ} = \frac{(Ընդ_1+Ընդ_2+\ldots+Ընդ_Ն)}{Ն} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$Ընդ_1$, $Ընդ_2$, …, $Ընդ_Ն$ – Մասնաճյուղի ընդհանուր ակտիվներն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է:

9. $Պ2^{11}$ պայմանը հաշվարկվում է $Պ2^1$ պայմանի համար սահմանված բանաձևով. ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն առաջին խմբի արտարժույթներով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ընդհանուր ակտիվների մեջ՝ «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» «Ակտիվներ» կարգի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բոլոր հաշիվների հանրագումարը՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի 34.10 կետով սահմանված նվազեցումները:

10. $Պ2^{12}$ պայմանը հաշվարկվում է $Պ2^1$ պայմանի համար սահմանված բանաձևով. ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն սույն հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում նշված ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ընդհանուր ակտիվների մեջ՝ «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» «Ակտիվներ» կարգի՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված բոլոր հաշիվների հանրագումարը՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի 34.10 կետով սահմանված նվազեցումները:

11. Մասնաճյուղի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հաշվարկն իրականացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի 34-րդ կետի:

12. Մասնաճյուղի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցությունը հաշվարկվում է՝

$$\text{Պ2}^2 = \frac{\text{Աբի}}{\text{Պցպ}} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$$\text{Աբի} = \frac{(\text{Աբի}_1+\text{Աբի}_2+\ldots+\text{Աբի}_\text{Ն})}{\text{Ն}},$$

որտեղ.

Աբի_1, Աբի_2, …, $\text{Աբի}_\text{Ն}$ – Մասնաճյուղի բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է,

Պցպ – միջին օրական հաշվարկով ցպահանջ պարտավորություններն են ամսվա ընթացքում, որը որոշվում է՝

$$\text{Պցպ} = \frac{(\text{Պցպ}_1+\text{Պցպ}_2+\ldots+\text{Պցպ}_\text{Ն})}{\text{Ն}} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

Պցպ_1, Պցպ_2, …, $\text{Պցպ}_\text{Ն}$ – Մասնաճյուղի ցպահանջ պարտավորություններն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է:

13. Պ2^{21} պայմանը հաշվարկվում է Պ2^2 պայմանի համար սահմանված բանաձևով, ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն առաջին խմբի արտարժույթով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ցպահանջ պարտավորությունների մեջ՝ սույն կանոնակարգի 36-րդ կետով սահմանված՝ առաջին խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունները: Ընդ որում, սույն կետում նշված ցպահանջ պարտավորություններից նվազեցվում են սույն կանոնակարգի 34.8 կետի համաձայն թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները):

14. Պ2^{22} պայմանը հաշվարկվում է Պ2^2 պայմանի համար սահմանված բանաձևով, ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն սույն հավելվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետում նշված ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ցպահանջ պարտավորությունների մեջ՝ սույն կանոնակարգի 36-րդ կետով սահմանված՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունները: Ընդ որում, սույն կետում նշված ցպահանջ պարտավորություններից նվազեցվում են սույն կանոնակարգի 34.8 կետի համաձայն թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները):

15. Մասնաճյուղի ցպահանջ պարտավորությունների հաշվարկն իրականացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի 36-րդ կետի:

16. Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Պ3^1 պայման) սահմանվում է՝

$$\text{Պ3}^1 = \frac{\text{Ռիսկ}}{\text{Կ}_{\text{գործ}}} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$\text{Կ}_{\text{գործ}}$ – Մասնաճյուղի գործառնական կապիտալն է:

17. Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (Պ3^2 պայման) սահմանվում է՝

$$\text{Պ3}^2 = \frac{\text{Ռիսկ}}{\text{Կ}_{\text{գործ}}} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$\text{Կ}_{\text{գործ}}$ – Մասնաճյուղի գործառնական կապիտալն է:

18. Սույն հավելվածի 16-րդ և 17-րդ կետերում սահմանված «Ռիսկի» հաշվարկն իրականացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար 37-րդ և 38-րդ կետերի:

19. Խոշոր փոխառու է այն անձը, որի գծով ռիսկը (համաձայն սույն հավելվածով սահմանված Պ3[1] պայմանի «Ռիսկ» տարրի հաշվարկման մեթոդաբանության) գերազանցում է Մասնաճյուղի գործառնական կապիտալի 5 տոկոսը:

20. Պ3[1] և Պ3[2] պայմանների հաշվարկին չեն մասնակցում այն իրավաբանական անձինք, որոնք փոխառուի հետ փոխկապակցված են միայն այն հիմքով, որ պետությունը տիրապետում է փոխառուի և այդ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի քսան տոկոսից ավելիին կամ իրավունք ունի օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշելու նրանց որոշումները:

21. Պ3[1] և Պ3[2] պայմանները չեն հաշվարկվում Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ:

22. Մասնաճյուղի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (Պ4[1] պայման) սահմանվում է՝

$$Պ4^1 = \frac{Ռիսկ}{Կ_{գործ}} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$Կ_{գործ}$ – Մասնաճյուղի գործառնական կապիտալն է:

23. Մասնաճյուղի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (Պ4[2] պայման) սահմանվում է՝

$$Պ4^2 = \frac{Ռիսկ}{Կ_{գործ}} \text{ բանաձևով,}$$

որտեղ.

$Կ_{գործ}$ – Մասնաճյուղի գործառնական կապիտալն է:

24. Սույն հավելվածի 22-րդ և 23-րդ կետերում սահմանված «Ռիսկի» հաշվարկն իրականացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար 42-րդ և 43-րդ կետերի:

25. Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանները հաշվարկվում են ամսվա վերջին օրվա դրությամբ, ինչպես նաև վերոնշյալ պայմանների ռիսկերի մեջ ընդգրկվող տարրերի ծագման և տարրերի մեծության յուրաքանչյուր փոփոխության դեպքում: Ամսվա վերջին օրվա դրությամբ Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանները հաշվարկելիս համարիչի «Ռիսկ» տարրը հաշվարկվում է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ, իսկ գործառնական կապիտալը՝ ամսվա միջին օրական հաշվարկով: Ամսվա վերջին օրը Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանները հաշվարկելիս «նոստրո» թղթակցային հաշիվները ռիսկի հաշվարկում ընդգրկվում են ամսվա միջին օրական մեծությամբ:

26. Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների ռիսկերի հաշվարկում ընդգրկվող տարրերի ծագման պահին, ինչպես նաև նշված տարրերի մեծության յուրաքանչյուր փոփոխության դեպքում վերոնշյալ պայմանները հաշվարկվում են տվյալ օրվա գործառնական կապիտալի նկատմամբ: Պ3[1], Պ3[2], Պ4[1], Պ4[2] պայմանները «նոստրո» թղթակցային հաշիվների ծագման, ինչպես նաև յուրաքանչյուր փոփոխության դեպքում չեն հաշվարկվում:

27. Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների ռիսկերի հաշվարկում չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերը:

28. Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների ռիսկերի հաշվարկում ռեպո համաձայնագրերը համարվում են պահանջ ռեպո համաձայնագրի կողմ հանդիսացող գործընկերոջ նկատմամբ՝ ռեպո համաձայնագրի հաշվեկշռային արժեքի չափով, իսկ սույն կանոնակարգի հավելված 3-ի 3-րդ կետով սահմանված կարգով ՎՌՁՄ կիրառելու դեպքում, ռեպո համաձայնագրի չապահովված մասի արժեքի չափով:

29. Սույն կանոնակարգի 37-րդ, 38-րդ, 42-րդ և 43-րդ կետերում նշված ածանցյալ գործիքների գծով առաջացող պահանջները Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկում ընդգրկվում են միայն ածանցյալ գործիքների գծով հաշվեկշռի ակտիվային մասում արտացոլված գումարների չափով՝ բացառությամբ այն դեպքի, երբ Մասնաճյուղը սվոպ գործարքի արդյունքում ստացել է երկրորդ խմբի արտարժույթ (բացառությամբ՝ ռուսական ռուբլու), որի դեպքում Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկում սվոպն ընդգրկվում է Մասնաճյուղի հետհաշվեկշռում արտացոլված ստացման ենթակա ամբողջ գումարի չափով:

30. Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների ռիսկերի հաշվարկում ընդգրկվող արտարժույթի առուվաճառքի սփոթ գործարքները, որոնց դեպքում Մասնաճյուղը ստանալու է Հայաստանի Հանրապետության դրամ կամ առաջին խմբի արտարժույթ, հաշվարկի մեջ ընդգրկվում են 0% ռիսկի կշռով, եթե տվյալ գործառնությունների արդյունքում արժույթների տրամադրումն ու ստացումը իրականացվելու է միևնույն բանկային օրվա ընթացքում, որը կարող է և չհամընկնել գործարքի կնքման օրվա հետ:

31. Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկում ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը և փոխառությամբ տրամադրված արժեթղթերը համարվում են պահանջ՝

1) տվյալ արժեթղթի թողարկողի նկատմամբ՝ արժեթղթի հաշվեկշռային արժեքի չափով, և
2) ռեպո համաձայնագրի կողմ հանդիսացող գործընկերոջ (փոխառուի) նկատմամբ՝ սույն կանոնակարգի հավելված 3-ի 22.2 կետով սահմանված չապահովված մասի արժեքի չափով: Ընդ որում, եթե Մասնաճյուղը ռեպո համաձայնագրով ձեռք է բերել երկրորդ խմբի արտարժույթ (բացառությամբ՝ ռուսական ռուբլու), ապա վերջինս Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկի առումով չի դիտվում որպես ռեպո համաձայնագրի ապահովվածություն:

32. Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկում չեն ընդգրկվում այն պահանջները, որոնք ամբողջությամբ ապահովված են.

1) Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերով, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերով,
2) Կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքներով կամ երաշխավորություններով,
3) հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6 կետով սահմանված կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերով,
4) Սույն կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6 կետով սահմանված կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքներով կամ երաշխավորություններով,
5) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների տրամադրած ԱԱ-(Աա3) և ԱԱ-(Աա3)-ից բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի թողարկած արժեթղթերով,
6) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների տրամադրած ԱԱ-(Աա3) և ԱԱ-(Աա3)-ից բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի կողմից տրամադրված երաշխիքներով կամ երաշխավորություններով,
7) տվյալ Մասնաճյուղում ներդրված ավանդներով, տվյալ Մասնաճյուղին տրամադրված վարկերից կամ փոխառություններից բխող պահանջի իրավունքով:

33. Սույն հավելվածի 32-րդ կետով սահմանված պահանջները և դրանց ապահովվածությունները պետք է արտահայտված լինեն միևնույն արժույթով, ինչպես նաև պահանջների՝ մինչև մարումն ընկած ժամկետները չպետք է գերազանցեն ապահովվածություն հանդիսացող արժեթղթերի, տվյալ Մասնաճյուղում ներդրված ավանդների՝ մինչև մարումն ընկած ժամկետները, տվյալ Մասնաճյուղին տրամադրված վարկերից կամ փոխառություններից բխող պահանջի իրավունքի իրականացման ժամկետները, ինչպես նաև երաշխիքների կամ երաշխավորությունների տրամադրման ժամկետները: Բացի այդ, փոխառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի առարկայի փաստացի իրացման հնարավորության կամ Մասնաճյուղին տրամադրված երաշխիքի/երաշխավորության կատարման ժամկետների առումով չպետք է լինեն պայմանագրով և/կամ այլ փոխադարձ համաձայնությամբ նախատեսված սահմանափակումներ:

34. Այն պահանջները, որոնք ամբողջությամբ ապահովված չեն սույն հավելվածի 32-րդ կետում նշված ապահովվածության տեսակներով, չապահովված մասով ընդգրկվում են Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկի մեջ, իսկ ապահովված մասը չի ընդգրկվում Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկի մեջ: Ընդ որում, Պ3[1], Պ3[2], Պ4[1] և Պ4[2] պայմանների հաշվարկում ընդգրկվող պահանջների չապահովված մասերն իրենց համապատասխան պահուստների չափով նվազեցվելուց հետո չեն կշռվում, բացառությամբ՝ «նոստրո» թղթակցային հաշիվների, միջբանկային ավանդների, միջբանկային վարկերի, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջների, որոնք իրենց համապատասխան պահուստի չափով նվազեցվելուց հետո կշռվում են սույն կանոնակարգի հավելված 3-ի 6-րդ կետով սահմանված ակտիվների համապատասխան կշիռներով:

35. Սույն կանոնակարգի 32-34-րդ կետերը չեն տարածվում ռեպո համաձայնագրերի, ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերի ու փոխառությամբ տրամադրված արժեթղթերի վրա:

36. Արտարժույթի տնօրինման սահմանափակման պայմանի հաշվարկման նպատակով արտարժութային դիրքը սույն հավելվածի 38-րդ կետով սահմանված եղանակներով հաշվարկվող՝ Մասնաճյուղի արտարժույթով, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամական ակտիվների և պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Դրամական ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարների մեծությունները հաշվարկվում են արտարժույթի և/կամ արժութային զամբյուղի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի միջոցով և, հետևաբար, կարող են տատանվել վերջինիս փոփոխությամբ պայմանավորված: Արտարժույթի տնօրինման սահմանափակման պայմանի հաշվարկման իմաստով, ար-

տարժութային ակտիվ կամ պարտավորություն են համարվում նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորները, ինչպես նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորներով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները, մետաղական հաշիվները: Ընդ որում, արտարժույթի տնօրինման սահմանափակման պայմանի հաշվարկման իմաստով բանկային ոսկին, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, որոնց հարգը փոքր չէ 999-ից, դրանցով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները և մետաղական հաշիվները դիտվում են որպես արտարժույթի մեկ տեսակ:

37. Եթե ակտիվը կամ պարտավորությունը կցված է որևէ արժութային զամբյուղի (բացառությամբ՝ ՍԴՌ-ի), ապա տվյալ զամբյուղի մեջ մտնող արտարժույթները մասնակցում են համապատասխան արտարժութային դիրքերի հաշվարկին՝ տվյալ զամբյուղի կառուցվածքում իրենց տեսակարար կշռին համապատասխան:

38. Ըստ առանձին արժույթների դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով, ինչպես դրանց գծով ածանցյալ գործիքները (սվոպ, ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն) ներառյալ, այնպես էլ առանց դրանց, և ամփոփվում են ըստ արտարժութային երկու խմբերի, ընդ որում, առանց ածանցյալ գործիքների արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են.

1) Սույն կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6 կետով սահմանված կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքները,
2) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման A+(A1) և A+(A1)-ից բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական (ազգային) բանկերի հետ կնքված ածանցյալ գործիքները,
3) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման A+(A1) և A+(A1)-ից բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքները:
4) Արժութային և փոխարժեքային սվոպերը: Արտարժույթի տնօրինման սահմանափակման պայմանի հաշվարկում ածանցյալ գործիքներն ընդգրկվում են միայն հետհաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ՝ ածանցյալ գործիքի գծով հետհաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրված տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան):

39. Մասնաճյուղերը թարմացնում են վարկանշային գործակալությունների սահմանած վարկանիշերը՝ հիմք ընդունելով սույն հավելվածի 38-րդ կետում նշված վարկանշային գործակալությունների՝ տվյալ օրվան վերաբերող վարկանիշները: Եթե սույն հավելվածի 38-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված կազմակերպությունն ունի երկու և ավելի վարկանշային գործակալության կողմից տրված վարկանիշեր, ապա Մասնաճյուղը հիմք է ընդունում ամենացածր վարկանիշը: Սույն հավելվածի 38-րդ կետում նշված կազմակերպությունների համար վարկանիշերը հիմք են ընդունվում՝ կախված ածանցյալ գործիքի արժույթից:

40. Արտարժույթի տնօրինման սահմանափակման պայմանի արտարժութային դիրքը հաշվարկվում է Մասնաճյուղի համախառն արտարժութային դիրքի նկատմամբ ինչպես ածանցյալ գործիքները ներառյալ, այնպես էլ առանց դրանց, ընդ որում, առանց ածանցյալ գործիքների արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են սույն հավելվածի 38-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված ածանցյալ գործիքները՝ սույն հավելվածի 39-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան: Արտարժութային բաց դիրքը հաշվարկվում է յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում է Հայաստանի Հանրապետության դրամով: Պասիվային սալդոն նշվում է բացասական նշանով՝ ցույց տալով արտարժութային կարճ դիրքը, իսկ ակտիվային սալդոն՝ դրական նշանով՝ ցույց տալով արտարժութային երկար դիրքը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/02) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 3/02-ի 2-րդ կետը՝

ա. լրացնել 5.1 և 5.2 ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1) Արժութային սվոպ համաձայնություն, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/ առք), ինչպես նաև պայմանագրով նախապես սահմանված տոկոսագումարներ փոխանակելու պայմանով: Սվոպի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքը լողացող տոկոսադրույքի հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքները:

5.2) Փոխարժեքային սվոպ՝ արժութային սվոպի պարզ տեսակ, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք) պայմանով:»:

բ. լրացնել 18-րդ և 19-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18) հաշվեկշռային արժեք (մնացորդ)՝ ակտիվի կամ պարտավորության գծով հաշվեկշռում հաշվեգրած գումարը, ներառյալ դրանց գծով հաշվեգրած տոկոսները, տույժերը և տուգանքները, նվազեցրած դրանց գծով ձևավորած հնարավոր կորուստների պահուստը, արժեզրկումը և կուտակված մաշվածությունը, եթե այդպիսիք կան:

19) առաջնային գրավ՝ գրավ, որի դեպքում գրավառու ապահովագրական ընկերությունը գրավ դրված գույքի նկատմամբ ունի այդ գույքի արժեքից լրիվ ծավալով բավարարում ստանալու նախապատվության իրավունք տվյալ գրավի այլ գրավառուների հանդեպ:»:

2) Կանոնակարգ 3/02-ի 6-րդ և 7-րդ կետերից հանել «2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո» բառերը:

3) Կանոնակարգ 3/02-ի 12.1 կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ն6.1 և Ն6.2-ի նորմատիվների հաշվարկում ընդհանուր կապիտալն ընդգրկվում է օրական մեծությամբ:»:

4) Կանոնակարգ 3/02-ի 17-րդ կետում՝

ա. 6-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

5) Կանոնակարգ 3/02-ի 22-րդ կետից հանել «2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ինչպես նաև» բառերը:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 27-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

6) Կանոնակարգ 3/02-ի 25-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերում «պարտատոմսեր» բառից հետո լրացնել «՝ ընթացիկ (շուկայական) արժեքով» բառերը:
7) Կանոնակարգ 3/02-ի 30-րդ կետի աղյուսակի 5-րդ կետը «մասնաճյուղերում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող մասնաճյուղերին տրամադրված ցպահանջ և պայմանագրով նախատեսված ժամկետ չունեցող փոխառություններ, եթե փոխառության պայմանագրով սահմանափակված չէ փոխատուի առաջին իսկ պահանջով փոխառության գումարը ստանալու փոխատուի իրավունքը» բառերով:
8) Կանոնակարգ 3/02-ի 30-րդ կետի աղյուսակը լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

6. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական, ներդրումային ընկերություններին և իրենց կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ ներգրավող վարկային կազմակերպություններին, ինչպես նաև օտարերկրյա ապահովագրական, ներդրումային ընկերությունների և իրենց կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ ներգրավող վարկային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերին տրամադրված ցպահանջ և պայմանագրով նախատեսված ժամկետ չունեցող փոխառություններ, եթե փոխառության պայմանագրով սահմանափակված չէ փոխատուի առաջին իսկ պահանջով փոխառության գումարը ստանալու փոխատուի իրավունքը:	20%	5%

9) Կանոնակարգ 3/02-ը 35-րդ կետը «ռեպո համաձայնագրերի» բառերից հետո լրացնել «(համաձայն սույն կանոնակարգի 38.1-րդ կետի), ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի (համաձայն սույն կանոնակարգի 38.2-րդ կետի), ածանցյալ գործիքների գծով առաջացող պահանջների» բառերով,
10) Կանոնակարգ 3/02-ի 38.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«38.1. Ն5 նորմատիվի Ռ տարրի հաշվարկում ռեպո համաձայնագրերը համարվում են պահանջ ռեպո համաձայնագրի կողմ հանդիսացող գործընկերոջ նկատմամբ՝ ռեպո համաձայնագրի հաշվեկշռային արժեքի չափով, իսկ սույն կանոնակարգի հավելված 2-ի 3-րդ գլխով սահմանված կարգով ՎՌԶՄ կիրառելու դեպքում՝ ռեպո համաձայնագրի չապահովված մասի արժեքի չափով:»:
11) Կանոնակարգ 3/02-ը լրացնել 38.2 և 38.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.
«38.2. Ն5 նորմատիվի Ռ տարրի հաշվարկում ածանցյալ գործիքների գծով առաջացող պահանջները ընդգրկվում են միայն ածանցյալ գործիքների գծով հաշվեկշռի ակտիվային մասում արտացոլված գումարների չափով՝ բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական ընկերությունը սվոպ գործարքի արդյունքում ստացել է երկրորդ խմբի արտարժույթ (բացառությամբ՝ ռուսական ռուբլու), որի դեպքում Ռ տարրի հաշվարկում սվոպն ընդգրկվում է ապահովագրական ընկերության արտահաշվեկշռում արտացոլված ստացման ենթակա ամբողջ գումարի չափով:
38.3. Ն5 նորմատիվի Ռ տարրի հաշվարկում ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը և փոխառությամբ տրամադրված արժեթղթերը համարվում են պահանջ՝
1) տվյալ արժեթղթի թողարկողի նկատմամբ՝ արժեթղթի հաշվեկշռային արժեքի չափով, և
2) ռեպո համաձայնագրի կողմ հանդիսացող գործընկերոջ (փոխառուի) նկատմամբ՝ սույն կանոնակարգի հավելված 2-ի 15.2 կետով սահմանված չապահովված մասի արժեքի չափով: Ընդ որում, եթե ապահովագրական ընկերությունը ռեպո համաձայնագրով ձեռք է բերել երկրորդ խմբի արտարժույթ (բացառությամբ՝ ռուսական ռուբլու), ապա վերջինս Ռ տարրի հաշվարկի առումով չի դիտվում որպես ռեպո համաձայնագրի ապահովվածություն:»:
12) Կանոնակարգ 3/02-ի 39.1 կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
«Սույն կետը չի տարածվում ռեպո համաձայնագրերի, ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի և փոխառությամբ տրամադրված արժեթղթերի վրա:»:
13) Կանոնակարգ 3/02-ի 45.2 կետի «Ն6.1» բառերը փոխարինել «Ն6.2» բառերով:
14) Կանոնակարգ 3/02-ի 45.3 կետը լրացնել 4-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«4) Արժութային և փոխարժեքային սվոպեր»:
15) Կանոնակարգ 3/02-ը լրացնել 45.4 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«45.4. Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկում ածանցյալ գործիքներն ընդգրկվում են միայն արտահաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ՝ ածանցյալ գործիքի գծով արտահաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրած տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան):»:

16) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.ՎՌ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՎՌ = Ա_1*Ռ_1 + Ա_2*Ռ_2 +…+ Ա_n*Ռ_n,$$

որտեղ.

$Ա_1$, $Ա_2$, ..., $Ա_n$-ը ապահովագրական ընկերության ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալից), արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների և արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հանրագումարներն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների: Ա տարրի հաշվարկը արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների և արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների գծով իրականացվում է սույն հավելվածի գլուխ 2-ի համաձայն: Ընդ որում, վարկային ռիսկի հաշվարկում ապահովագրական ընկերությունները կարող են կիրառել սույն հավելվածի գլուխ 3-ով սահմանված վարկային ռիսկի զսպման մեխանիզմները (այսուհետ՝ ՎՌԶՄ),

$Ռ_1$, $Ռ_2$, ..., $Ռ_n$-ը համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներն են:»:

17) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի աղյուսակ 1-ի 3-րդ, 9-րդ, 10.1-րդ և 11-րդ կետերում «(ներառյալ՝ ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը)» բառերը հանել:

18) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի աղյուսակ 1-ի 7-րդ և 8-րդ կետերով ուժը կորցրած ճանաչել:

19) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի աղյուսակ 1-ի 19-րդ կետում «վարկանիշ չունեցող 100» և «վարկանիշ չունեցող» բառերը հանել:

20) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի աղյուսակ 1-ը լրացնել 22.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.».

22.2 22.1-րդ կետում նշված ակտիվներից տարբեր այլ ակտիվներ երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ՝ ռուսական ռուբլու)	-	150

»:

21) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի աղյուսակ 1-ի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

32. Պահանջներ ներդրումային ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի առկայության դեպքում)	Ստանդարտ և Փուրզ «AAA»-ից «AA-» և «A-1+», «A-1» 20 «A+»-ից «A-» և «A-2» 50 «BBB+»-ից «BBB-», «BB+»-ից «BB-» և «A-3»-ից ցածր 100 «B+»-ից ցածր 150 Մուդիզ «Aaa»-ից «Aa3» և «P-1» 20 «A1»-ից «A3» և «P-2» 50 «Baa1»-ից «Baa3», «Ba1»-ից «Ba3» և «P-3»-ից ցածր 100 «B1»-ից ցածր 150 Ֆիտչ «F1+», «F1» 20 «F2» 50 «F3» և ցածր 100	Ստանդարտ և Փուրզ «AAA»-ից «AA-» և «A-1+», «A-1» 20 «A+»-ից «A-» և «A-2» 50 «BBB+»-ից «BBB-» «BB+»-ից «BB-» և «A-3»-ից ցածր 100 «B+»-ից ցածր 150 Մուդիզ «Aaa»-ից «Aa3» և «P-1» 20 «A1»-ից «A3» և «P-2» 50 «Baa1»-ից «Baa3» «Ba1»-ից «Ba3» և «P-3»-ից ցածր 100 «B1»-ից ցածր 150 Ֆիտչ «F1+», «F1» 20 «F2» 50 «F3» և ցածր 100

22) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի աղյուսակ 1-ը լրացնել 33-րդ, 34-րդ, 35-րդ և 36-րդ կետերով.

«

33. Պահանջներ ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	Համաձայն սույն հավելվածի 6.2 կետի	Համաձայն սույն հավելվածի 6.2 կետի
34. Պահանջներ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	150	150
35. Պահանջներ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	Համաձայն սույն հավելվածի 6.3 կետի	Համաձայն սույն հավելվածի 6.3 կետի
36. Բոլոր այն հաշվեկշռային ակտիվները, որոնք ընդգրկված չեն սույն աղյուսակի այլ կետերում	100	150

»:

23) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հավելվածի աղյուսակ 1-ով սահմանված ակտիվները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռային արժեքով:»:

24) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 5-րդ կետից «ամբողջ» բառը հանել:

25) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

26) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ը լրացնել 6.1, 6.2 և 6.3 կետերով հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 34-րդ կետում նշված բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված ֆոնդերը՝ բացառությամբ ֆոնդերի ֆոնդի, անշարժ գույքի ֆոնդի, ինչպես նաև ոչ հրապարակային ֆոնդերը: Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 33-րդ կետում նշված ոչ բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում բարձր ռիսկային ֆոնդեր չհամարվող ֆոնդերը:

6.2. Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 33-րդ կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշելու համար պետք է հաշվարկել տվյալ ֆոնդի ակտիվներին տրված ռիսկի կշիռների միջին կշռված մեծությունը, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի կառավարչի կողմից հաշվարկման պահի դրությամբ բացահայտված (տրամադրված) ֆոնդի ակտիվների ընդհանուր ծավալի (խմբավորված ըստ ռիսկի կշիռների) վերաբերյալ տեղեկատվությունը, եթե տվյալ տեղեկատվությունը բացահայտվել (տրամադրվել) է ոչ շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված տեղեկատվությունը բացահայտվել (տրամադրվել) է ավելի շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում կամ չի բացահայտվել (տրամադրվել), ապա սույն հավելվածի աղյուսակ 1-ի 33-րդ կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռն ընդունվում է 100%:

6.3. Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 35-րդ կետում նշված վարկանիշ չունեցող օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշվում է աղյուսակ 1.1-ի համաձայն: Ընդ որում, աղյուսակ 1.1-ի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված ֆոնդերը պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 337-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները» կանոնակարգ 10/10-ի 9-րդ կետով սահմանված պահանջները:

Աղյուսակ 1.1

	Ֆոնդի տեսակը	Ռիսկի կշիռը
	Հրապարակային ստանդարտ ֆոնդեր	
1.	Դրամական շուկայի ֆոնդեր	20%
2.	Ստանդարտ ֆոնդեր (տարատեսականացված)	50%
	Հրապարակային մասնագիտացված ֆոնդեր	
3.	Ֆոնդերի ֆոնդ, որի ակտիվները ներդրվում են միայն հրապարակային ստանդարտ տարատեսականացված ֆոնդերում	50%
4.	Անշարժ գույքի ֆոնդ (տարատեսականացված)	75%
5.	Այլ մասնագիտացված ֆոնդեր	150%
	1-5-րդ կետերում չնշված ֆոնդեր	
6.	1-5-րդ կետերում չնշված ֆոնդեր	150%

»:

27) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 8-րդ կետը լրացնել 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) այն դեպքում, երբ սույն հավելվածի աղյուսակ 1-ի 30-րդ կետին բավարարող ներդրումները միաժամանակ բավարարում են նույն աղյուսակի այլ կետերին, ապա տվյալ ներդրումը ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում պետք է ընդգրկել այդ ներդրումի համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:

6) Ռեպո համաձայնագրերը, ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը, փոխառությամբ տրամադրված արժեթղթերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են համաձայն սույն հավելվածի 3-րդ գլխի պահանջների:

7) երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու) ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:»:

28) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 9-րդ կետից և 11-րդ կետի աղյուսակ 2-ից հանել «(բացառությամբ՝ արժութային սվոպի)» բառերը:

29) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 9-րդ կետում «ՀՀ - արտահաշվեկշռային պայմանական պարտավորություններն ու արտահաշվեկշռային ածանցյալ գործիքներն են» բառերից հետո լրացնել «՝ արտահաշվեկշռում արտացոլված ամբողջ գումարի չափով,» բառերով:

30) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 13-րդ կետի 1-ին ենթակետում «գրավ» բառը փոխարինել «առաջնային գրավ» բառերով:

31) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 13-րդ կետի 4-րդ ենթակետը «գրավը փոխառուի կողմից թողարկված արժեթուղթ չէ և այլն),» բառերից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ

երաշխավորություն տվողը Կենտրոնական բանկը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունն է կամ գրավի առարկան հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ կամ Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմս,» բառերով:

32) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. ՎՌՁՄ-ները չեն տարածվում ՎՌՁՄ-ին ենթակա այն պահանջների նկատմամբ, որոնք դասակարգվել են որպես ոչ ստանդարտ և կասկածելի ակտիվներ, միջին ռիսկային և ոչ բարձր ռիսկային արժեթղթեր:»:

33) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 15-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել «գ» պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«գ) հանդիսանում է սույն հավելվածի աղյուսակ 1-ի 5-րդ կետում նշված կազմակերպություն:»:

34) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ը լրացնել 15.1 և 15.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«15.1. Ռեպո համաձայնագրերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

ՌՀԱ = Առավելագույն [ԴՄՀԴՌ; ՊՀ], որտեղ՝

ՌՀԱ - ռեպո համաձայնագրի և դրանց գծով հաշվարկված տոկոսների՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ԴՄ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների արժեքն է,

ԴՌ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների ռիսկի կշիռն է՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի:

ՊՀ - սույն գլխով սահմանված կարգով և դեպքերում ՎՌՁՄ կիրառման արդյունքում հաշվարկված ռեպո համաձայնագրի՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է, իսկ ՎՌՁՄ չկիրառելու դեպքում՝ ռեպո համաձայնագրի հաշվեկշռային արժեքի և ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշռի (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը) արտադրյալն է:

15.2. Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

ՌՎԱ = Առավելագույն [ՉԱ X ԳՌ; ԱՀ X ԹՌ],

որտեղ.

ՌՎԱ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ՉԱ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի չապահովված մասն է, որը որոշվում է որպես՝

ա. ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային արժեքի և

բ. ստացված դրամական միջոցների ու դրանց գծով վճարվելիք գումարների հանրագումարի դրական տարբերություն:

ԳՌ - ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը,

ԱՀ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային արժեքը,

ԹՌ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի թողարկողի (գործիքի) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի:

Փոխառությամբ տրամադրված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են սույն կետով սահմանված կարգով:»:

35) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 4-ի 8-րդ կետում «արտահաշվեկշռում արտացոլված արժեքի չափով» բառերը փոխարինել «արտահաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ՝ դրանց գծով արտահաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրած տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան):» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվան հաջորդող ամսվա 1-ին, բացառությամբ 1-ին կետի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 30-րդ, 32-րդ և 34-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման ընդունման օրվան հաջորդող վեցամսյա ժամկետին հաջորդող ամսվա 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

3 դեկտեմբերի 2012 թ., N326-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Հաշվի առնելով, որ տարբեր տեսակի ներդրումային ֆոնդերում ներդրումները ներդրումային ընկերության համար կարող են ենթադրել ռիսկայնության տարբեր աստիճան, ինչպես նաև այն, որ ներկայումս բոլոր տեսակի ներդրումային ֆոնդերում ներդրումները ներդրումային ընկերության վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են միևնույն ռիսկի կշռով,

ներդրումային ընկերությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող որոշ տարրերի հետ կապված անհստակությունները,

Նպատակ ունենալով ներդրումային ընկերության վարկային ռիսկի հաշվարկման համար ներդրումային ֆոնդերում ներդրումները կշռել իրենց ռիսկայնությանը համահունչ ռիսկի կշռով,

հստակեցնել ներդրումային ընկերությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասը, 72-րդ և 73-րդ հոդվածները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/02) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 4/02-ի 2-րդ կետը լրացնել 9-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) հաշվեկշռային մնացորդ (արժեք)՝ ակտիվի կամ պարտավորության գծով հաշվեկշռում հաշվեգրված գումարը՝ ներառյալ տոկոսները, տույժերը և տուգանքները՝ նվազեցրած դրա գծով ձևավորված հնարավոր պահուստը, կուտակված ամորտիզացիան և արժեզրկումը, եթե այդպիսիք կան:»:

2) Կանոնակարգ 4/02-ի 15-րդ կետ-ի 6-րդ ենթակետում «զուտ հաշվեկշռային արժեքը (ֆինանսական ակտիվների արժեք հանած կորուստների ծածկման պահուստները, եթե այդպիսիք կան),» բառերը փոխարինել «հաշվեկշռային արժեքը» բառով:

3) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՎՌ = Ա_1*Ռ_1 + Ա_2*Ռ_2 +\ldots+ Ա_n*Ռ_n,$$ որտեղ՝

$Ա_1$, $Ա_2$, ..., $Ա_n$-ը ներդրումային ընկերությունների ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալից), հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների: Ակտիվները ներառվում են իրենց հաշվեկշռային արժեքով, իսկ սույն հավելվածով սահմանված կարգով ՎՌՁՄ կիրառելու դեպքում՝ ՎՌՁՄ ճշգրտված արժեքով: Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են սույն հավելվածի 14-րդ կետով սահմանված չափով:

$Ռ_1$, $Ռ_2$, ..., $Ռ_n$-ը համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներն են:»:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 27-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.12.2012 թ. (ՀՀՊՏ N31 (444), 24.12.2012):

4) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի գլուխ 2-ի աղյուսակ 1-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 2. Վարկային ռիսկի հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռներ

Աղյուսակ 1

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՌԻՍԿԻ ԿՇԻՌՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ		
Ակտիվների տեսակները	**Ռիսկի կշիռներ** *(տոկոս)*	
	դրամային ակտիվների համար	արտարժութային ակտիվների համար
1. Կանխիկ դրամական միջոցներ (ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով, ռուսական ռուբլով), ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով, ռուսական ռուբլով)	0	0
2. Տվյալ ներդրումային ընկերությունում պահվող (ներառյալ՝ տվյալ ներդրումային ընկերության դեպոզիտային հաշիվներում հաշվառվող) բանկային ոսկի	0	-
3. Կենտրոնական բանկում բացված կանոնադրական կապիտալի համալրման կուտակային հաշվի մնացորդներ, այլ պահանջներ Կենտրոնական բանկի նկատմամբ	0	0
4. Հայաստանի Հանրապետության դրամով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր	0	-
5. Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ պահանջներ՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունների կանխավճարների գծով	0	-
6. Տվյալ ներդրումային ընկերությունում պահվող (ներառյալ՝ տվյալ ներդրումային ընկերության դեպոզիտային հաշիվներում հաշվառվող)՝ բանկային ոսկով, ՀՀ դրամով, առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով, ինչպես նաև այլ արտարժութային միջոցներով (եթե վերջիններս հանդիսանում են միևնույն արտարժույթով արտահայտված ակտիվների ապահովում) ապահովված պահանջներ	0	0
7. Պահանջներ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Ասիական զարգացման բանկի, Աֆրիկյան զարգացման բանկի, Միջամերիկյան զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական ներդրումային հիմնադրամի, Սկանդինավյան ներդրումային բանկի, Կարիբյան զարգացման բանկի, Իսլամական զարգացման բանկի և Եվրոպական զարգացման բանկի խորհրդի նկատմամբ	0	0
8. Արտարժույթով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր	-	10
9. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակներ, որոնց մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է, և որոնք ենթակա են պարտադիր վճարման Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից	10	10
10. Վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր	10	-
11. Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի Հայաստանի Հանրապետության պետական մուրհակներ	20	20

12. Ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցներ (ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով), բանկային ոսկի, ինչպես նաև ճանապարհին գտնվող՝ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով)	20	20
Բանկային հաշիվներ (այդ թվում՝ անկանխիկ ոսկով) ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերում	20	30
13. Պահանջներ օտարերկրյա կառավարությունների և դրանց կենտրոնական բանկերի նկատմամբ	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 0 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ 20 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 0 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ 20 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100
14. Պահանջներ օտարերկրյա տեղական կառավարման մարմինների նկատմամբ	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100
15. Կարճաժամկետ պահանջներ օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100	/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100
16. Երկարաժամկետ պահանջներ օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100
17. Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	«Ա+»-ից «Բ-» 20 «Գ+»-ից «Գ-» 50 «Դ+»-ից «Դ-» 100 «Ե+»-ից «Զ» 150	«Ա+»-ից «Բ-» 30 «Գ+»-ից «Գ-» 75 «Դ+»-ից «Դ-» 150 «Ե+»-ից «Զ» 225
18. Կարճաժամկետ պահանջներ օտարերկրյա ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100	/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100
19. Երկարաժամկետ պահանջներ օտարերկրյա ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /(ԲԲ-)-ից ցածր/(Բա3)-ից ցածր/150 վարկանիշ չունեցող 100	/ԱԱԱ/Ասա/-ից /ԱԱ-/Ա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /(ԲԲ-)-ից ցածր/(Բա3)-ից ցածր/150 վարկանիշ չունեցող 100
20. Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ (999 հարգից ոչ պակաս)	-	50
21. Ճանապարհին գտնվող ոսկու ստանդարտացված ձուլակտորներ (999 հարգից ոչ պակաս)	-	75
22. Այլ պահանջներ ՀՀ տարածքում գործող բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի և օտարերկրյա այլ ֆինանսական կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի նկատմամբ	50	75
23. Կանխիկ դրամական միջոցներ (երկրորդ խմբի մեջ մտնող արտարժույթներով, բացառությամբ ռուսական ռուբլու), Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (երկրորդ խմբի մեջ մտնող արտարժույթներով, բացառությամբ ռուսական ռուբլու)	-	100
24. Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պահանջներ, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, որոնց գծով բավարարված են սույն կետով նախատեսված պայմանները միաժամանակ. 1) փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պահանջների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների հանրագումարը չի գերազանցում 5 մլն ՀՀ դրամը,	75	110

2) փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ սույն կետի 1-ին ենթակետին բավարարող պահանջների, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների հանրագումարը չի գերազանցում 1-ին ենթակետով սահմանված մեծությունների հանրագումարի 0.2%-ը:		
25. Պահանջներ ՀՀ համայնքների նկատմամբ	100	150
26. Դատարանի վճռով սառեցված կամ արգելադրված միջոցներ,	100	150
27. ՀՀ կառավարության նկատմամբ պահանջներ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների (գերավճարների) գծով	100	-
28. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ հաշվեկշռային արժեքով	100	-
29. Պահանջներ ներդրումային ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի առկայության դեպքում)	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 100 /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /Բ+/Բ1/-ից ցածր 150 /Ֆ1+, Ֆ1/Պ-1/Ա-1+,Ա-1/ 20 /Ֆ2/Պ-2/Ա-2/ 50 /Ֆ3և ցածր/Պ-3/Ա-3-ից ցածր / 100	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/100 /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /Բ+/Բ1/-ից ցածր 150 /Ֆ1+, Ֆ1/Պ-1/Ա-1+,Ա-1/ 20 /Ֆ2/Պ-2/Ա-2/ 50 /Ֆ3և ցածր/Պ-3/Ա-3-ից ցածր / 100
30. Պահանջներ ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	Համաձայն սույն հավելվածի 9.2-րդ կետի	Համաձայն սույն հավելվածի 9.2-րդ կետի
31. Պահանջներ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	150	150
32. Պահանջներ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում)	Համաձայն սույն հավելվածի 9.3-րդ կետի	Համաձայն սույն հավելվածի 9.3-րդ կետի
33. 23-րդ կետում նշված ակտիվներից տարբեր այլ ակտիվներ երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու)	-	150
34. Բոլոր այն հաշվեկշռային ակտիվները, որոնք ընդգրկված չեն սույն աղյուսակի այլ կետերում	100	150

5) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 6-րդ կետում «մեծությամբ» բառը փոխարինել «արժեքով» բառով և հանել «ամբողջ» բառը:

6) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

7) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 9-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետում «23-րդ կետին» բառերը փոխարինել «26-րդ կետին» բառերով,

բ. 2-րդ ենթակետում «17-21-րդ կետերի» բառերը փոխարինել «15-19-րդ կետերի» բառերով,

գ. լրացնել 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու) արտահայտված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:

4) Ռեպո համաձայնագրերը, ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը, փոխառությամբ տրամադրված արժեթղթերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են համաձայն սույն հավելվածի 3-րդ գլխի պահանջների:

5) Աղյուսակ 1-ի 33-րդ կետում նշված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:»:

8) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ը լրացնել 9.1, 9.2 և 9.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 31-րդ կետում նշված բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում «Ներդրումային ֆոնդերի մասին. Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված ֆոնդերը՝ բացառությամբ ֆոնդերի ֆոնդի, անշարժ գույքի ֆոնդի, ինչպես նաև ոչ հրապարակային ֆոնդերը: Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 30-րդ կետում նշված ոչ բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում բարձր ռիսկային ֆոնդեր չհամարվող ֆոնդերը:

9.2. Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 30-րդ կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշելու համար պետք է հաշվարկել տվյալ ֆոնդի ակտիվներին տրված ռիսկի կշիռների միջին կշռված մեծությունը, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի կառավարչի կողմից հաշվարկման պահի դրությամբ բացահայտված (տրամադրված) ֆոնդի ակտիվների ընդհանուր ծավալի (խմբավորված ըստ ռիսկի կշիռների) վերաբերյալ տեղեկատվությունը, եթե տվյալ տեղեկատվությունը բացահայտվել (տրա-

մադրվել) է ոչ շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված տեղեկատվությունը բացահայտվել (տրամադրվել) է ավելի շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում կամ չի բացահայտվել (տրամադրվել), ապա սույն հավելվածի աղյուսակ 1-ի 30-րդ կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը ընդունվում է 100%:

9.3. Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 32-րդ կետում նշված վարկանիշ չունեցող օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշվում է աղյուսակ 1.1-ի համաձայն: Ընդ որում՝ սույն կետի աղյուսակ 1.1-ի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված ֆոնդերը պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 337-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները» կանոնակարգ 10/10-ի 9-րդ կետով սահմանված պահանջները:»:

Աղյուսակ 1.1

	Ֆոնդի տեսակը	Ռիսկի կշիռը
	Հրապարակային ստանդարտ ֆոնդեր	
1.	Դրամական շուկայի ֆոնդեր	20%
2.	Ստանդարտ ֆոնդեր (տարատեսականացված)	50%
	Հրապարակային մասնագիտացված ֆոնդեր	
3.	Ֆոնդերի ֆոնդ, որի ակտիվները ներդրվում են միայն հրապարակային ստանդարտ տարատեսականացված ֆոնդերում	50%
4.	Անշարժ գույքի ֆոնդ (տարատեսականացված)	75%
5.	Այլ մասնագիտացված ֆոնդեր	150%
	1-5-րդ կետերում չնշված ֆոնդեր	
6.	1-5-րդ կետերում չնշված ֆոնդեր	150%

9) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 10-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Արտարժույթի երկրորդ խմբի մեջ մտնում են արտարժույթի առաջին խմբի մեջ չմտնող այլ արտարժույթները:»:

10) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 14-րդ կետից հանել «(բացառությամբ արժութային սվոպի)» բառերը:

11) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Հետհաշվեկշռային հոդվածները դրանց պահուստի գումարի չափով նվազեցնելուց հետո ՎՌՓԳ-ների միջոցով վերածվում են հաշվեկշռային վարկային ռիսկի, որից հետո կշռվում են սույն հավելվածի աղյուսակ 1-ով սահմանված ռիսկի համապատասխան կշիռներով: Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները ՎՌՓԳ-ների միջոցով վերածվում են հաշվեկշռային վարկային ռիսկի հետևյալ բանաձևի համաձայն.

ՀՎՌ=(ՀՀ-Պ)*ՎՌՓԳ,

որտեղ.

ՀՎՌ - ՎՌՓԳ-ների միջոցով հաշվեկշռային վարկային ռիսկի վերածված հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններն ու հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներն են, որոնք վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկելու նպատակով կշռվում են սույն հավելվածի աղյուսակ 1-ով սահմանված համապատասխան ռիսկի կշիռներով,

ՀՀ - հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններն ու հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներն են՝ հետհաշվեկշռում արտացոլված ամբողջ գումարի չափով,

Պ - հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով ձևավորված պահուստի մեծությունն է,

ՎՌՓԳ - սույն հավելվածի աղյուսակ 2-ով սահմանված վարկային ռիսկի փոխարկման գործոններն են:

Աղյուսակ 2

Հետհաշվեկշռային հոդվածներ	ՎՌՓԳ (%)	
	Դրամային հոդվածներ	Արտարժութային հոդվածներ
1. Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ	1	1.5
2. Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	100	100

»:

12) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 17-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «Հայաստանի Հանրապետության կառավարության, Կենտրոնական բանկի» բառերից հետո լրացնել «, շուկայի հիմնական մասնակիցների, սույն հավելվածի աղյուսակ 1-ի 7-րդ կետում նշված կազմակերպությունների» բառերով:

բ. 4-րդ ենթակետը «արժեթուղթ չէ և այլն),» բառերից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ երաշխավորություն տրամադրողը Կենտրոնական բանկը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունն է, կամ գրավի առարկան հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ կամ Հայաստանի Հանրապետության գանձապետական պարտատոմս,» բառերով:

13) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 18-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

14) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ը լրացնել 23.1 և 23.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«23.1. Ռեպո համաձայնագրերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

ՌՀ= Առավելագույն [ԴՄXԴՌ; ՊՀ],

որտեղ.

ՌՀ - ռեպո համաձայնագրի և դրանց գծով հաշվարկված տոկոսների՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ԴՄ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների արժեքն է,

ԴՌ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների ռիսկի կշիռն է՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի:

ՊՀ - սույն գլխով սահմանված կարգով և դեպքերում ՎՌԶՄ կիրառման արդյունքում հաշվարկված ռեպո համաձայնագրի գծով պահանջի ճշգրտված մեծությունն է, իսկ ՎՌԶՄ չկիրառելու դեպքում՝ ռեպո համաձայնագրի հաշվեկշռային արժեքի և ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշռի (համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը) արտադրյալն է:

23.2. Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

ՌՎԱ= Առավելագույն [ՉԱ X ԳՌ; ԱՀ X ԹՌ],

որտեղ.

ՌՎԱ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ՉԱ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի չապահովված մասն է, որը որոշվում է որպես՝

ա. ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային ճշգրտված արժեքի (կիրառելով սույն գլխով սահմանված արժեքի տատանման գործակիցները), և

բ. ստացված դրամական միջոցների ու դրանց գծով վճարվելիք գումարների հանրագումարի դրական տարբերություն,

ԳՌ - ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը,

ԱՀ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային արժեքը,

ԹՌ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի թողարկողի (գործիքի) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի:

Փոխառությամբ տրամադրված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են սույն կետով սահմանված կարգով:»:

15) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի 24-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել «գ» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ) հանդիսանում է սույն հավելվածի աղյուսակ 1-ի 7-րդ կետում նշված կազմակերպություն:»:

16) Կանոնակարգ 4/02-ի հավելված 2-ի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Արտարժութային դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները միայն հետհաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ՝ դրանց գծով հետհաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրված տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան):»:

17) Կանոնակարգ 4/02-ի հավելված 2-ի 18-րդ կետի «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունները» բառերը փոխարինել «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները, փոխառությամբ տրամադրված արժեթղթերը, փոխառությամբ ստացված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները» բառերով:

18) Կանոնակարգ 4/02-ի հավելված 2-ի 47-րդ կետում «ռեպո համաձայնագրերով ձեռքբերված բաժնային արժեթղթերի գծով պարտավորությունները» բառերը փոխարինել «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված բաժնային արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները, փոխառությամբ տրամադրված բաժնային արժեթղթերը, փոխառությամբ

ստացված բաժնային արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված պարտավորությունները,» բառերով:

19) Կանոնակարգ 4/02-ում բոլոր «արտահաշվեկշռային» բառերը փոխարինել «հետհաշվեկշռային» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվան հաջորդող ամսվա 1-ին՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ և 18-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման ընդունման օրվան հաջորդող վեցամսյա ժամկետին հաջորդող ամսվա 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 դեկտեմբերի 2012 թ., N327-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը, սահմանել հաշվետվություն ըստ արժույթների իրացվելիության նորմատիվների, ինչպես նաև տեղի ունեցած կամ սպասվող բացասական զարգացումների վերաբերյալ,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 2-րդ կետի աղյուսակը վերջից լրացնել նոր տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

31	Հաշվետվություն էական փոփոխությունների և բացասական զարգացումների վերաբերյալ	35	յուրաքանչյուր փոփոխության դեպքում, եռամսյակային

2) Կանոնակարգ 3-ի 3-րդ կետի առաջին նախադասությունը «ֆայլերով» բառից հետո լրացնել «և թիվ 35 հաշվետվության, որը ներկայացվում է «դոք» կամ «դոքիքս» ֆորմատի ֆայլերով» բառերով:

3) Կանոնակարգ 3-ի 5-րդ կետի վերջին պարբերության «, ինչպես նաև տվյալ հոդվածի գծով հաշվարկված տույժերը և տուգանքները» բառերը հանել:

4) Կանոնակարգ 3-ի 6-րդ կետի՝

ա. առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Թիվ 3 հաշվետվությունը բաղկացած է 20 էջից:»,

բ. երրորդ պարբերությունը լրացնել հետևյալ նախադասությամբ.

««Արժույթը» սյունակում լրացվում են երկրորդ խմբի այն արտարժույթները, որոնք ներկայացված են սույն հաշվետվության 18-րդ էջի երրորդ աղյուսակում:»,

գ. տասներորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«***7.1-րդ էջում*** վարկային ռիսկի հաշվարկման նպատակով ներկայացվում է ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները (այդ թվում՝ այլ անձանց նկատմամբ պահանջների այն մասը, որոնք ՎՌՁՄ կիրառման արդյունքում պետք է ստանան ներդրումային ֆոնդերի համար նախատեսված ռիսկի կշիռները): ***7.1-րդ էջի 1-ին*** սյունակը լրացվում է ըստ հաշվետու ամսվա օրերի հաջորդականության (1, 2, 3, ...31, որտեղ «1»-ը համընկնում է ամսվա առաջին օրվան, «2»-ը՝ երկրորդ օրվան և այլն): Ընդ որում, եթե միևնույն օրվա հաշվարկում առկա են տարբեր ռիսկի կշիռ ունեցող ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջներ, ապա այդ պահանջների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են առանձին տողերով: ***7.1-րդ էջի 2-րդ*** սյունակում լրացվում է Կանոնակարգ 2-ի համաձայն հաշվարկված ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջների ռիսկի կշիռները՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ: ***7.1-րդ էջի*** 3-րդ սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդերի նկատմամբ այն պահանջների մեծությունը՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց հետո, որոնց վրա չեն տարածվում ՎՌՁՄ-ն: ***7.1-րդ էջի*** 4-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌՁՄ-ին ենթակա այն պահանջների մեծությունները՝ հնա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

ռավոր կորուստների պահուստները նվազեցնելուց հետո, որոնք չեն ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով: Ընդ որում, տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 4-րդ էջի 1-ից 4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 4-րդ էջի 15-րդ սյունակում: *7.1-րդ էջի* 5-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌՁՄ-ի ենթակա այն պահանջների մեծությունները, որոնք ճշգրտվում են արժեքի տատանման գործակիցներով: Ընդ որում, տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 5-րդ էջի 1-ից 4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 5-րդ էջի 15-րդ սյունակում: *7.1-րդ էջի* 6-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների գումարները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա չի տարածվում ՎՌՁՄ-ն: Ընդ որում, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 6-րդ էջի 1-ից 24-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 6-րդ էջի 35-րդ սյունակում: *7.1-րդ էջի* 7-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա տարածվում է ՎՌՁՄ-ն: Ընդ որում, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 7-րդ էջի 1-ից 26-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 7-րդ էջի 37-րդ սյունակում: Եթե 1-ին սյունակում լրացվող հաշվետու ամսվա օրերը և 2-րդ սյունակում լրացվող ռիսկի կշիռները համընկնում են, ապա *7.1-րդ էջի 3-ից 7-րդ* սյունակներում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջների մեծությունների հանրագումարները: Այն դեպքում, երբ ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները կամ դրանց մի մասը ՎՌՁՄ կիրառման արդյունքում պետք է ստանան այլ անձանց համար նախատեսված ռիսկի կշիռները, ապա այդ պահանջները չեն լրացվում 7.1-րդ էջում և լրացվում են 4-րդ, 5-րդ կամ 7-րդ էջերում:»:

դ. տասնութերորդ պարբերությունից հետո լրացնել 2 պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«17-րդ էջում լրացվում են բանկի իրացվելիության Ն2[11] և Ն2[21] տնտեսական նորմատիվների հաշվարկում մասնակցող տարրերը, մասնավորապես՝ Ն2[11] նորմատիվի հաշվարկի համար առաջին խմբի արտարժույթով ակտիվները, այդ ակտիվներից պակասեցվող գումարները, առաջին խմբի արտարժույթով բարձր իրացվելի ակտիվները, Ն2[11] և Ն2[21] նորմատիվի հաշվարկի համար առաջին խմբի արտարժույթով բարձր իրացվելի ակտիվներից կատարվող նվազեցումները, առաջին խմբի արտարժույթով ցպահանջ պարտավորությունները և Ն2[21] նորմատիվի հաշվարկի համար առաջին խմբի արտարժույթով ցպահանջ պարտավորություններից կատարվող նվազեցումները:

18-րդ էջում լրացվում են բանկի իրացվելիության Ն2[12] և Ն2[22] տնտեսական նորմատիվների հաշվարկում մասնակցող տարրերը: 18-րդ էջի 2-րդ և 3-րդ աղյուսակները լրացվում են երկրորդ խմբի միայն այն արտարժույթների համար, որոնց գծով, ըստ Կանոնակարգ 2-ի պահանջների, հաշվետու ժամանակաշրջանի համար պետք է հաշվարկվեն Ն2[12] և Ն2[22] տնտեսական նորմատիվները: 2-րդ աղյուսակում լրացվում են միայն արտարժույթների ISO կոդերը, որոնք ներկայացված են 18-րդ էջի 3-րդ աղյուսակում:»,

ե. 19-րդ պարբերությունում «17» թիվը փոխարինել «20» թվով:

5) Կանոնակարգ 3-ի 9-րդ կետի՝

ա. չորրորդ պարբերության առաջին նախադասության «ընդհանուր ժամկետային» բառերը փոխարինել «ընդհանուր» բառով,

բ. չորրորդ պարբերության առաջին նախադասությունը «ռեպո համաձայնագրերի» բառերից հետո լրացնել «պայմանագրային ժամկետում գտնվող» բառերով,

գ. վեցերորդ պարբերության առաջին նախադասությունում «բանկի ժամկետանց» բառերը փոխարինել «բանկի չաշխատող» բառերով,

դ. վեցերորդ պարբերության առաջին նախադասությունը «ռեպո համաձայնագրերի» բառերից հետո լրացնել «ժամկետանց» բառով,

ե. վեցերորդ պարբերության հինգերորդ նախադասությունը հանել,

զ. վեցերորդ պարբերության «, «Ընդամենը (քանակ)»» բառերը հանել,

է. տասներորդ պարբերությունը «Սպառողական» բառից հետո լրացնել «և այլ» բառերով,

ը. երեսունչորսերորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Չաշխատող (ժամկետանց) ակտիվի քանակը լրացվում է և «Ժամկետանց ակտիվներ», և «Ժամկետային ակտիվներ» տողերում, եթե ակտիվի գծով տվյալ տողերում առկա են լրացվող գումարներ: Ընդ որում, «1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» տողում լրացվող ընդհանուր ակտիվների քանակում չաշխատող ակտիվի քանակը ներառվում է մեկ անգամ:»,

6) Կանոնակարգ 3-ի 11-րդ կետի՝

ա. երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հաշվետվությունում հոդվածները ընդգրկվում են հետևյալ կանոններին համապատասխան.

ա. ցպահանջ միջոցները, վարկային գծերի և օվերդրաֆտների օգտագործված մասերը, ինչպես նաև կանխատեսելի դրամական հոսքեր չունեցող հոդվածները հաշվետվությունում լրացվում են մայր գումարների մնացորդներով,

բ. ամորտիզացված արժեքով, ինչպես նաև իրական և սկզբնական արժեքով հաշվառվող հոդվածները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով՝ նվազեցրած տույժերը և տուգանքները:»,

բ. տասնիններորդ և քսաներորդ պարբերությունները «հաշվեկշռային արժեքով» բառերից հետո լրացնել «՝ նվազեցրած տույժերը և տուգանքները,» բառերով:

7) Կանոնակարգ 3-ի 12-րդ կետի երկրորդ պարբերությունը «համախառն հաշվեկշռային մնացորդով» բառերից հետո լրացնել «՝ նվազեցրած տույժերը և տուգանքները» բառերով:

8) Կանոնակարգ 3-ի 18-րդ կետի՝

ա. առաջին պարբերությունը երկրորդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հաշվետվությունում Կենտրոնական բանկի հետ և կարգավորվող շուկաներում (օրինակ՝ բորսաներում) կնքված գործարքները, ածանցյալ գործիքների հաշվեկշռային մնացորդները (բացառությամբ՝ տոկոսադրույքի սվոպի և օպցիոնի հաշվեկշռային մնացորդների, որոնք ներկայացվում են որպես այլ պահանջ/պարտավորություն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն անհուսալի դասակարգված ակտիվները չեն ներկայացվում:» բառերով,

բ. 8-րդ ենթակետը ««ակրեդիտիվ»» բառերից հետո լրացնել ««ֆյուչերս», «ֆորվարդ», «օպցիոն»» բառերով,

գ. 10-րդ ենթակետում «Արժութային» բառը փոխարինել «Արժույթի» բառով:

դ. լրացնել 10.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «10.1) «Տոկոսագումար» սյունակը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

ա. սյունակում լրացվում են հաշվեկշռային պահանջի/պարտավորության գծով անվանական տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները (առկայության դեպքում)՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ հազար դրամներով:

բ. սյունակում լրացվում են հետհաշվեկշռային պահանջի/պարտավորության գծով հաշվարկված տոկոսները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ հազար դրամներով, ընդ որում՝ «Պահանջի/պարտավորության բնույթ» սյունակում լրացվում է «Պայմանական ակտիվ» կամ «Պայմանական պարտավորություն» տարբերակը, իսկ «Մնացորդը» սյունակում լրացվում է հետհաշվեկշռային պահանջի/պարտավորության մնացորդը:

Այն դեպքում, երբ պահանջի/պարտավորության մայր գումարը և դրա գծով հաշվարկված տոկոսագումարները տարբեր արժույթներով են, ապա «Արժույթի կոդ» սյունակում լրացվում է պահանջը/պարտավորության մայր գումարի արժույթի կոդը:»:

ե. երկրորդ պարբերության «և այս սյունակներում ներկայացվում են» բառերը փոխարինել ««և «Տոկոսագումար» ու «Մնացորդը» սյունակներում ներկայացվում են պահանջ/պարտավորության համապատասխանաբար տոկոսագումարները և մայր գումարները՝» բառերով,

զ. երրորդ պարբերությունը «մնացորդային գումարները» բառերից հետո լրացնել «(մայր գումարները և տոկոսագումարները)» բառերով:

9) Կանոնակարգ 3-ը լրացնել նոր 33.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«33.1. Թիվ 35 հաշվետվությունը բաղկացած է 2 հավելվածներից: Հավելված 1-ը ներկայացվում է այն դեպքում, երբ տեղի են ունեցել էական (նշանակալից) փոփոխություններ բանկի գործունեության (գործառնությունների), կառուցվածքի և ընդհանուր իրավիճակի հետ կապված, ինչպես նաև այն դեպքում, երբ բանկը տեղեկացել է ակնկալվող կամ տեղի ունեցած էական (նշանակալից) բացասական զարգացումների, բանկի կողմից օրենսդրության պահանջների էական խախտումների վերաբերյալ: Հավելված 2-ը ներկայացվում է եռամսյակային կտրվածքով:

1) Սույն հաշվետվությամբ չեն ներկայացվում բոլոր այն փոփոխությունները, որոնք Կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 1-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 1) համաձայն ներկայացվում են Կենտրոնական բանկ նախնական համաձայնության ստացման և (կամ) գրանցման համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի թիվ 28 հաշվետվության:
2) Սույն հաշվետվությունը լրացնելիս բանկը ելնում է Կենտրոնական բանկի հետ համագործակցելու և թափանցիկ լինելու սկզբունքից և Կենտրոնական բանկին տրամադրում տեղեկատվություն այն փոփոխությունների/զարգացումների վերաբերյալ, որի մասին Կենտրոնական բանկը, որպես վերահսկող մարմին, ողջամտորեն կակնկալեր տեղեկացված լինել: Այս իմաստով բանկն ինքնուրույն է որոշում, թե տեղի ունեցած փոփոխությունները և (կամ) ակնկալվող/տեղի ունեցած բացասական զարգացումներն արդյոք էական (նշանակալից) են Կենտրոնական բանկ ներկայացնելու նպատակով:
3) Վերոնշյալ սկզբունքի ներքո՝ բանկի կողմից Կենտրոնական բանկին սույն կետով սահմանված հաշվետվությունը տրամադրելու դեպքերը ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.
   ա. բանկի կազմակերպական կառուցվածքում տեղի են ունեցել էական փոփոխություններ,
   բ. բանկը սկսել է մատուցել նոր ծառայություններ, որոնք իրենց բնույթով կամ պայմաններով էականորեն տարբերվում են տվյալ բանկի կողմից մատուցվող ծառայություններից, եթե մինչև այդ ծառայության մատուցումը բանկը նախապես գրավոր չի տեղեկացրել այդ մասին Կենտրոնական բանկին,
   գ. բանկը դադարեցրել/կասեցրել է իր կողմից մատուցվող որևէ ծառայության/գործառնության իրականացումը, եթե այդ ծառայությունը/գործառնությունը էական է տվյալ բանկի համար: Սույն ենթակետում նշված ծառայությունները/գործառնությունները ներառում են նաև նրանք, որոնք բանկն իրականացնում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 34-րդ կետի 2-րդ հոդվածի համաձայն,
   դ. բանկը չի կատարել կամ ժամանակին չի կատարել կամ ակնկալում է, որ չի կատարի իր պայմանագրային պարտավորությունները,
